

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

020400-«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՄԱՍ I. Ա. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց 4	
Բ. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը.....	17
Գ. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը	34
Դ. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները	34

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրքի նպատակը	35
2. 020400 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ մասնագիտության տեղեկագիրք	35
I. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ	36
II Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ ..	53
III Ընդհանուր մասնագիտական դասընթացներ.....	59
IV Հատուկ մասնագիտական դասընթացներ	91
V. Այլ բաղադրիչներ	95

ՆԱԽԱԲԱՆ

2014 թվականը մեր բուհի պատմության մեջ եղավ իրադարձային. ՀՀ Կառավարության ապրիլի 30-ի թիվ 485-Ն որոշմամբ «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը վերանվանվեց «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ: Անշուշտ, կատարվածը սոսկ անվանափոխություն չէ, քանի որ իրականում դրանից հետևում են բազմաշերտ բովանդակային փոփոխություններ և դրանցից բխող մարտահրավերներ, որոնց այսօր փորձում է դիմակայել մեր համալսարանը:

Համալսարանի վերափոխվելով՝ բուհում առաջին հերթին փոփոխվում են նաև այն ուղղությունները, որոնք նախկինում գերակայում էին մեր բուհի պատմության ողջ ընթացքում: Ասվածից դժվար չէ ենթադրել, որ ներկայումս վերանայման խնդիր ունեն համալսարանի տեսլականն ու առաքելությունները և դրանցով պայմանավորված հետագա գործունեությունը:

Կատարվածը սոսկ անվանափոխություն չէ նաև այն առումով, որ նրանով համալսարանին առաջին անգամ հնարավորություն է ընձեռվել կրթություն իրականացնելու համալսարաններին հատուկ ավանդական մասնագիտություններով, ինչը հնարավորություն է ընձեռում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բավարարելու մեր տարածաշրջանի երիտասարդության կրթական կարիքները:

Այն ժամանակաշրջանը, որում Վանաձորի պետական համալսարանը ծավալում է իր գործունեությունը, ընդհանուր առմամբ բնութագրվում է անցումային շրջանին հատուկ գծերով: Այդ է պատճառը, որ ամեն մի քայլ, որը կատարվում է համալսարանում, պետք է ավելի քան հիմնավորված և համակարգված բնույթ կրի: Խոսքը վերաբերում է համալսարանում տեղի ունեցող բոլոր գործընթացներին, մասնավորապես՝ բուհի ինքնավարությանը, որը ենթադրում է անկաշկանդ վերաբերմունք կազմակերպչաիրավական, ֆինանսատնտեսական, հաստիքային և ակադեմիական ոլորտներին, կառավարմանը, ուսանողակենտրոն կրթության կազմակերպմանը, որակի ապահովմանը, գիտական գործունեությանը և այլ ուղղություններին միտված գործողություններին, որոնք այսօր կատարվում են համալսարանում, և որոնք բոլորը միասին ձևավորում են տեսլականից դեպի իրականը տանող ճանապարհը:

Համոզված եմ, որ Վանաձորի պետական համալսարանն ունի մտավոր և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներ, որոնց ճիշտ ներդրմամբ կարելի է հասնել հաջողության: Համոզված եմ, որ համախոհությամբ, փոխադարձ հանդուրժողականությամբ, ինչպես նաև պետության ու հասարակության առջև հաշվետվողականությամբ ու պատասխանատվությամբ առաջնորդվելու դեպքում միասին կհաղթահարենք արդի ժամանակաշրջանին բնորոշ դժվարությունները հանուն մեր երկրի, հանուն մեր այսօրվա և վաղվա սերունդների:

ՌԵԿՏՈՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՍ 1. Ա. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Ընդհանուր դրույթներ

Բոլոնիայի գործընթացին ինտեգրումը ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատություններին նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես, ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:

Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որը ենթադրում է մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

1. Սույն կանոնակարգը հիմնվում է, Կրթության մասին և ,Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգի, «Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»-ի և ՀՀ ԿԳՆ հրահանգչական նամակների վրա:

2. Կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում գիտխորհրդում հաստատման օրից և նույն ժամանակից ուժը կորցրած են ճանաչվում «ՎՊՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների կազմակերպման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»-ը՝ ընդունված ՎՊՀ գիտխորհրդում 29.10.2007թ և «ՎՊՀ-ում ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց»-ը՝ ընդունված ՎՊՀ գիտխորհրդում 07.03.2008թ.:

3. Սույն կանոնակարգում ներկայացված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, համակարգի բնութագրիչներ:

2. Կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները

4. Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ՎՊՀ-ի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում.

- Բակալավրիատը բարձրագույն կրթության առաջին աստիճանն է, որը ներառում է 3-4 լրիվ ուսումնական տարիների ավարտումն դասընթացներ: ՎՊՀ-ում բակալավրիատի տևողությունը 4 ուսումնական տարի է:

- Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է, որի տևողությունը 1-2 տարի է (ՎՊՀ-ում՝ 2 տարի), հեռակա ուսուցման համակարգում՝ 2,5 տարի:

- Ասպիրանտուրան հետբուհական կրթության աստիճան է: Ասպիրանտուրայի տևողությունն առկա ուսուցման համակարգում 3 տարի է, հեռակա ուսուցման համակարգում՝ 4 տարի:

- Ուսումնական տարին ուսանողի 40 շաբաթյա բոլոր տեսակի ուսումնական արդյունավետ աշխատանքների ժամանակն է, որից առնվազն 32 շաբաթը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին և իրականացվում է երկու կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:

- Կարողությունը (կոմպետենցիան) գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դիմամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական ուսման տվյալ բնագավառի համար (առանձնահատուկ) և ընդհանուր (անկախ բնագավառից):

- Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման համակարգով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին:

- Կրթական (ուսումնական) մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանափակված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ:

- ECTS Կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

3. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշները

5. ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

6. կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),

7. կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,

8. ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

9. կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),

10. կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

4. Կրեդիտային համակարգի կարևոր հատկանիշները

11. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ ուսանողին համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:

12. Կրեդիտների կուտակման և փոխանցման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որում ուսանողի մեկ ուսումնական տարվա լրիվ ուսումնական աշխատածավալը չափվում է 60 ECTS կրեդիտով:

Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

13. ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,

- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,

- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

5. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում.

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) կրեդիտների կուտակում.

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ,

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

14. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,

- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող բուհի ծրագրերին համապատասխան:

15. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,

- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,

- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,

- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսին նախապատվություն տալուց,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

6. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

16. ՎՊՅ-ում բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններում ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային միավոր (10% թույլատրելի շեղումով), ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):

17. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 կրեդիտային միավորին:

18. ՎՊՅ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է աշնանային և գարնանային կիսամյակներով: Ուսումնական կիսամյակների տևողությունը կազմում է 20 շաբաթ, որի ընթացքում իրականացվում են տեսական ուսուցումը, ընթացիկ ստուգումները, ստուգարքներն ու քննությունները, ուսումնական, արտադրական և հետազոտական (մագիստրատու-րայում) պրակտիկաները, բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի շարադրման ու պաշտպանության աշխատանքները, ինչպես նաև պետական որակավորման քննությունները:

19. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 240 կրեդիտային միավոր:

20. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 120 կրեդիտային միավոր:

21. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

7. Դասընթացները և կրթական մոդուլները

22. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

23. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

24. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ամրագրված է մագիստրոսական ծրագրում, և ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

8. Կրեդիտների հատկացումը

25. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին առաջադիմության ուսանողից պահանջվող անհրաժեշտ աշխատաժամանակի իրատեսական կանխատեսումից:

26. Կրթական արդյունքի դրական գնահատման դեպքում մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ:

27. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտների համար նախընտրելի է սահմանել ամբողջական թվերով արժեքներ:

28. Դասընթացին (կրթական մոդուլին) հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Լսարանային ժամերի թիվը կախված է պարապմունք-ների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:

29. ՎՊՅ-ում ընդունվում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտային միավորների լսարանային և արտալսարանային աշխատաժամալների հետևյալ մոտավոր հարաբերակցությունը.

Բակալավրիատում`

- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 2 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 1.5 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 1 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 3 ժամ լաբորատոր աշխատանք և 1 ժամ ինքնուրույն աշխատանք,

Մագիստրատուրայում`

- 3 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ դասախոսություն և 4 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ գործնական (սեմինար) և 2 ժամ ինքնուրույն աշխատանք,
- 2 կրեդիտային միավորին համապատասխանում է շաբաթական 2 ժամ լաբորատոր աշխատանք և 2 ժամ ինքնուրույն աշխատանք:

Ընթացիկ և հանրագումարային ստուգումների համար.

- Քննությանը պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,5 կրեդիտային միավոր:
- Այն մասնագիտական առարկաներին, որոնց դասավանդումը հիմնականում իրականացվում է գործնական կամ լաբորատոր պարապմունքների ձևով և նախատեսվում է քննություն, քննությանը պատրաստվելու համար շաբաթական յուրաքանչյուր ժամի դիմաց հատկացվում է 0,125 կրեդիտային միավոր:
- Տեսական մասից ստուգարքով ավարտվող առարկայի ստուգարքին պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,25 կրեդիտային միավոր :

30. Պրակտիկաների յուրաքանչյուր շաբաթվան և պաշտպանությանը տրվում է 1,5 կրեդիտային միավոր:

31. Կուրսային աշխատանքի (մագիստրատուրայում նաև ռեֆերատի ու զեկուցման) կատարումը և պաշտպանութունը գնահատվում է 3 կրեդիտային միավորով:

32. Բակալավրիատի 4-րդ տարվա յուրաքանչյուր կիսամյակում բակալավրի ավարտական թեզի աշխատանքների կատարման համար տրվում է 2 կրեդիտային միավոր, շարադրմանը և պաշտպանությանը՝ 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):

33. Մագիստրոսական ատենախոսության թեմայով հետազոտական աշխատանք կատարելու համար նախատեսվում է 15 կրեդիտային միավոր (ըստ կիսամյակների՝ 0,3,6,6), իսկ թեզի շարադրման և պաշտպանության համար՝ 12 կրեդիտային միավոր:

34. Մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտական սեմինարի համար հատկացվում է 12 կրեդիտային միավոր (3-ական միավոր յուրաքանչյուր կիսամյակի համար):

35. Պետական ավարտական յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար տրվում է 3 կրեդիտային միավոր (2 շաբաթ):

36. Մարմնակրթության համար կրեդիտային միավորներ չեն նախատեսվում:

9. Ուսումնական ծրագրերը, դասընթացները (կրթական մոդուլները) և ավարտական պահանջները

37. Բակալավրի կրթական ծրագիրը ներառում է մինչև վեց հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՅՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ), ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) և հատուկ մասնագիտացման դասընթացներ (ՅՄԴ), ինչպես նաև կրթական այլ բաղադրիչներ (ԱԲ):

38. Մագիստրատուրայի ուսումնական ծրագիրը ներառում է երեք կրթամաս՝ ընդհանուր մասնագիտական առարկաներ(ԸՄԱ), մասնագիտական պարտադիր դասընթացներ (ՄԴ), կրթական այլ բաղադրիչներ (ԱԲ) և գիտահետազոտական աշխատանք (ԳԱ) :

39. Կրթական ծրագրում ներառված կրթական մոդուլները ունեն իրենց դասիչները և ներկայացվում են հատկացված կրեդիտներով ու լսարանային ծանրաբեռնվածությունով: Նշվում են նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

40. Մեծածավալ դասընթացները բաժանվում են մեկ կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների: Դասընթացների մոդուլացումը կատարվում է՝ ելնելով նվազագույնը կիսամյակների ընթացքում դասընթացն ավարտելու սկզբունքից:

41. Դասընթացներն իրենց բնույթով բաժանվում են երեք հիմնական խմբերի՝

ա) պարտադիր դասընթացներ - բարձրագույն կրթության կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրի հիմնական դասընթացներ, որոնք դասավանդվում են պարտադիր և խիստ որոշակի հերթականությամբ՝ համաձայն տվյալ ուղղության մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջներին:

բ) կամընտրական դասընթացներ - պետական չափորոշիչներից բխող և ֆակուլտետների կողմից առաջարկվող դասընթացներ, որոնք ընտրում է ուսանողը առաջարկվող ցանկից, իսկ դրանց անցկացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

գ) Բուհական բաղադրիչ - պետական չափորոշիչներից բխող և բուհի գիտխորհրդի կողմի առաջարկվող դասընթացներ, որը կարող է փոփոխվել:

Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր կրթամասին հատկացված կրեդիտային միավորների գումարը:

42. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՅ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքները և պրակտիկաները), որոնց համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58` ներառյալ 3 կրեդիտ արժեքով մասնագիտական ամփոփիչ քննությունը:

43. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՅ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58` ներառյալ մագիստրոսական ատենախոսության թեմայով գիտահետազոտական աշխատանքը (կուրսային, ռեֆերատ, էսսե, հոդված) և մագիստրոսական թեզի գնահատումը և պաշտպանությունը:

10. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

10.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է 5 հիմնական կրթամաս` ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՅՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ), ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) և հատուկ մասնագիտական դասընթացներ (ՅՄԴ), ինչպես նաև այլ բաղադրիչներ (ԱԲ): Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դասընթաց ունի իր դասիչը: Ծրագրում նշվում է դասընթացների յուրաքանչյուր խմբին հատկացված կրեդիտային միավորների գումարը, ինչպես նաև դասընթացի յուրաքանչյուր մոդուլին հատկացված կրեդիտային միավորը: Նշվում է նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

Ուսումնական ծրագրի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	41	15
պարտադիր	20	8
բուհական բաղադրիչ	3	1
կամընտրական	18	6
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	21	7
պարտադիր	19	6
կամընտրական	2	1

Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	141	32
պարտադիր	117	25
կամընտրական	24	7
Հատուկ մասնագիտական դասընթացներ	16	4
պարտադիր	16	4
Այլ բաղադրիչներ	21	4
ԸՆԴԱՄԵՆԸ	240	62

10.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) կրթամասը կազմված է կրթական մոդուլների երկու փաթեթից՝ պարտադիր և կամընտրական, որոնք նպատակաուղղված են բարձրագույն կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍՏ պարտադիր դասընթացներ

ՀՍՏ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ժամ (դ/ս/գ/լ/ի) ¹	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	60(18/14/0/0/28)	1	ստուձարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	60(18/14/0/0/28)	2	ստուձարք
Ռուսաց լեզու - 1	4	120(0/0/64/0/56)	1	ստուձարք
Ռուսաց լեզու - 2	4	120(0/0/64/0/56)	2	ստուձարք
Հայոց լեզու և քրականություն-1	2	60(8/0/24/0/28)	1	ստուձարք
Հայոց լեզու և քրականություն-2	2	60(8/0/24/0/28)	2	ստուձարք
Փրիստիայության հիմնահարցեր	4	120(28/20/0/0/72)	4	քննություն
Մարմնակրթություն ²				

ՀՍՏ կամընտրական դասընթացներ

ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը կազմված է բուհական բաղադրիչից և կամընտրական առարկաներից: Բուհական բաղադրիչը (որը կարող է փոփոխվել) առաջարկվում է բուհի գիտխորհրդի կողմից, իսկ կամընտրական առարկաները՝ ֆակուլտետի խորհրդի կողմից, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը: ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Գնահատման ձևը
-----------------	--------	-----------------	----------	---------------

¹ դ-դասախոսություն, ս-սեմինար, գ-գործնական պարապմունք, Լ-լաբորատոր աշխատանք, ի-ինքնուրույն

² 1 - IV կիսամյակներում դասավանդվում է 2 ժամով: Կրեդիտային միավոր չի հատկացվում:

Բուհական բաղադրիչ				
Տնտեսագիտություն	3	90(20/16/0/0/54)	6	ստուգարք
Կամրնտրական դասընթացներ				
Օտար լեզու-1 (Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	4	120(0/0/64/0/56)	1	ստուգարք
Օտար լեզու-2 (Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	4	120(0/0/64/0/56)	2	ստուգարք
Օտար լեզու-3 (Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	4	120(0/0/64/0/56)	3	ստուգարք
Իրավագիտություն կամ Տնտեսագիտություն կամ Քաղաքագիտություն	2	60(18/14/0/0/28)	4	ստուգարք
Մշակութաբանություն կամ Հայ. պատմական և ճարտարապետ. հուշարձաններ կամ Հայ առաքելական եկեղեցու պատմություն	2	60(18/14/0/0/28)	5	ստուգարք
Սոցիոլոգիա կամ Զբոսաշրջության սոցիոլոգիա	2	60(18/14/0/0/28)	6	ստուգարք

10.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը կազմված է կրթական մոդուլների մեկ փաթեթից:

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Համակարգիչից օտվելու հնտություններ	2	60(8/0/24/0/28)	1	ստուգարք
Մաթեմատիկա	6	180(42/0/32/0/106)	1	քննություն
Ֆիզիկա	4	120(32/0/0/24/64)	3	ստուգարք
Քիմիա	3	90(24/0/0/24/42)	2	ստուգարք
Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ:	2	60(18/14/0/0/28)	3	ստուգարք
Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	2	60(18/0/14/0/28)	8	ստուգարք

ԸՄԲ կամրնտրական դասընթաց

ԸՄԲ կրթամասի կամրնտրական դասընթացի ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում	2	60(18/0/14/0/28)	6	ստուգարք

կամ Արտակար իրավիճակներում բնակչության առաջին բուժօժնություն				
---	--	--	--	--

4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

«Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրի ուսումնառության կրթական ծրագրի ԸՄԴ կրթամասը բաղկացած է կրթական մոդուլների մեկ փաթեթից՝ ֆիզիկական և տնտեսական աշխարհագրության առարկաներից:

ԸՄԴ պարտադիր դասընթացներ

ԸՄԴ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Երկրաբանություն	4	120(32/0/0/24/90)	2	քննություն
Երկրագիտություն	4	120(32/0/24/0/90)	1	քննություն
Ջրաբանություն	4	120(32/0/0/24/90)	3	քննություն
Տնտեսական և սոցիալական աշխարհագրություն	5	150(32/0/32/0/90)	2	քննություն
Գեոմորֆոլոգիա	4	120(32/0/24/0/90)	3	քննություն
Օդերևութաբանություն և կլիմայագիտություն	5	150(32/0/0/32/72)	3	քննություն
Տեղագրություն	4	120(32/0/0/24/70)	1	քննություն
Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով	5	150(32/0/0/32/100)	2	քննություն
Կենսաաշխարհագրություն	4	120(32/0/24/0/54)	4	քննություն
Լանդշաֆտագիտություն	5	150(32/0/32/0/86)	4	քննություն
Քարտեզագրություն	5	150(32/0/0/32/86)	4	քննություն
Բնակչության աշխարհագրություն ժողովրդագրության հիմունքներով	5	150(32/0/32/0/86)	3	քննություն
Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն	5	150(32/0/32/0/116)	4	քննություն
Հայաստանի տնտեսական և սոցիալական աշխարհագրություն	4	120(32/0/28/0/90)	6	քննություն
Մայցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն	5	150(32/0/32/0/96)	5	քննություն
Մայցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն	6	180(42/0/38/0/100)	6	քննություն
Գեոինֆորմատիկա և աերոտիեզերական հետազոտման մեթոդներ	4	120(32/0/0/24/56)	4	քննություն
Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն	6	180(42/0/38/0/78)	6	քննություն
Համաշխարհային տնտեսություն	6	180(42/0/38/0/156)	5	քննություն
Հայաստանի պատմական աշխարհագրություն	5	150(32/0/38/0/92)	7	քննություն
Աշխարհագրական մտքի զարգացման պատմություն	6	180(42/0/38/0/100)	7	քննություն
Աշխարհագրական կանխատեսման հիմունքներ	6	180(42/0/38/0/100)	7	քննություն

Քաղաքական աշխարհագրություն	6	180(42/0/38/0/100)	5	քննություն
Հոգեբանություն	2	60(24/8/0/0/28)	3	ստուգարք
Մանկավարժություն	2	60(24/8/0/0/28)	4	ստուգարք

ԸՄԱ կամընտրական դասընթացներ

ԸՄԱ կամընտրական դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ժամ (դ/ս/գ/լ/հ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Տարածաշրջանների տնտեսական ներուժի գնահատման մեթոդները	4	120(32/0/24/0/64)	7	քննություն
ՀՀ Լանդշաֆտները				
Լանդշաֆտային պլանավորում				
Բնօգտագործման տնտեսագիտություն Աշխարհագր. տեղեկատվ. համակարգեր	4	120(32/0/24/0/64)	8	քննություն
Ազատ տնտեսական գոտիների ձևավորման և զարգացման նախադրյալները	3	90(24/0/24/0/42)	8	ստուգարք
Հայաստանի կլիման և ջրաբանություն				
Ջրային ռեսուրսների համալիր օգտագործում և պահպանում				
Տարածաշրջանների և պետությունների աշխարհագրություն	3	90(24/0/24/0/42)	8	ստուգարք
Կիրառական ֆիզիկական աշխարհագրություն				
Էթնաաշխարհագրություն և կրոնների աշխարհագրություն	3	90(24/0/24/0/42)	7	ստուգարք
Բնական աղետներ և պաշտպանության միջոցներ				
ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման միտումները հարևան երկրների հետ	3	90(24/0/24/0/42)	5	ստուգարք
Հնէաաշխարհագրություն				
ՀՀ ռեկրեացիոն աշխարհագրություն	4	90(24/0/24/0/42)	8	քննություն
Լանդշաֆտային էկոլոգիա				

10.1.4. Հատուկ մասնագիտական կրթամաս

«Աշխարհագրություն» » մասնագիտության բակալավրի ուսումնառության կրթական ծրագրի ՀՄԿ դասընթացների ցանկը ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Ժամ (դ/ս/գ/լ/ի)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Գեոէկոլոգիա	4	120(32/0/24/0/64)	5	քննություն
Ֆիզիկական աշխարհագրության հետազոտության մեթոդներ	4	120(32/0/24/0/64)	8	քննություն
Սոցիալ-տնտեսաաշխարհագրական հետազոտության մեթոդներ	4	120(32/0/24/0/64)	8	քննություն
Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա	4	120(32/0/24/0/64)	6	քննություն

10.1.5. Կրթական այլ բաղադրիչներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքներով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ուսումնական պրակտիկա 1	6	2	ստուգարք
Ուսումնական պրակտիկա 2	6	6	քննություն
Արտադրական պրակտիկա	6	7	քննություն
Կուրսային աշխատանք1	6	6	քննություն
Կուրսային աշխատանք2	6	7	քննություն
Ավարտական որակավորման քննություն	3	8	քննություն

Բ. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

I. Ընդհանուր դրույթներ

1. Բոլոնիայի գործընթացին ինտեգրումը ենթադրում է տարբերակված աստիճաններով (բակալավրիատ, մագիստրատուրա, հետբուհական գիտակրթական) բարձրագույն կրթական համակարգ՝ նրա յուրաքանչյուր փուլում ավելի ճկուն, դասախոսի և ուսանողի ակադեմիական ազատությունների նպաստող ուսումնական գործընթացների կիրառմամբ: Մասնավորապես, ուսանողը հնարավորություն է ստանում ակտիվորեն մասնակցելու իր անհատական ուսումնական պլանի կազմմանը, հետևաբար և իր՝ որպես մասնագետի կայացմանը, իսկ դասախոսը՝ ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ:

Ուսումնական գործընթացում բարեփոխումների իրականացման համար կարևորվում է ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի ներդրումը, որոնք ենթադրում են մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման գործում՝ էապես նպաստելով ուսանողների ակադեմիական ազատությանը:

2. Սույն կանոնակարգը հիմնվում է ,Կրթության մասին և ,Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ԶԶ օրենքների, ԶԶ կառավարության 27 դեկտեմբերի 2005թ. թիվ 2307-Ն ,ԶԶ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին որոշման, ԶԶ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված ,Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգե-ի, ,Ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույցե-ի և ԶԶ ԿԳՆ հրահանգչական նամակների վրա:

3. Կանոնակարգի դրույթները գործողության մեջ են դրվում գիտխորհրդում հաստատման օրից և նույն ժամանակից ուժը կորցրած է ճանաչվում ,Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգեր (ընդունված գիտխորհրդում 29.10.2007թ.):

II. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

4. Համակարգի հիմնադրույթները.

ՎԴՀ–ում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,

բ) անհատական առաջադրանքների, ընթացիկ և հանրագումարային ստուգումների (ստուգարքների և քննությունների), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառման օգնությամբ ապահովել ուսանողի գիտելիքների և կարողությունների արդյունարար գնահատման արժանահավաստությունն ու օբյեկտիվությունը:

5. Ստուգարքներին և քննություններին ուսանողի պատրաստվածության մակարդակին ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական հմտությունների և կարողությունների գնահատումը՝ համաձայն մասնագիտական համապատասխան կրթական չափորոշիչի:

6. Հանրագումարային ստուգումները (քննությունները և ստուգարքները) նպատակ ունեն գնահատելու տվյալ կիսամյակում ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները, դրանց կայունությունը, ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձեռքբերումը, ստացած գիտելիքների համադրումը և դրանց կիրառումը գործնական խնդիրների լուծման ժամանակ:

7. Ընթացիկ ստուգումը կիսամյակի ընթացքում դասընթացի ուսումնասիրված բաժինների յուրացման մակարդակի ստուգման և գնահատման ձև է, որի կիրառումը՝

ա) նպաստում է առարկայից առավել կայուն գիտելիքների տիրապետմանը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի անընդհատ և համաչափ աշխատանքի միջոցով,

բ) դյուրացնում է հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը հանձնելու մաս առ մաս,

գ) բարձրացնում է ուսանողի ուսումնական կարգապահությունը:

8. Յուրաքանչյուր կիսամյակում ընթացիկ ստուգումների, ստուգարքների և քննությունների անցկացման ժամկետները որոշվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

9. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների կազմակերպման, անցկացման և ամփոփման, ինչպես նաև ուսանողների վարկանիշների հաշվառման աշխատանքները կատարվում են համապատասխան դեկանատների կողմից և ամփոփվում ուսումնական վարչությունում:

10. Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով՝

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում,

գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,

դ) կրթական մոդուլի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ և հանրագումարային քննություններ կամ ստուգարքներ),

ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

III. Գնահատման մեթոդաբանությունը

11. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բնույթից, աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման գործում՝ դասընթացներն ըստ անփոփոխ ստուգման կազմակերպման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) քննությանը ավարտվող դասընթացներ,

բ) ստուգարքով ավարտվող դասընթացներ:

Տվյալ մասնագիտության դասընթացներից ուսանողների գիտելիքների, մասնագիտական կարողությունների և հմտությունների ստուգման ձևերը ամրագրվում են մասնագիտության ուսումնամեթոդական փաթեթում:

12. Քննություններով ավարտվող առարկաների ցանկը որոշում է տվյալ ֆակուլտետի գիտամանկավարժական խորհուրդը:

13. Քննությանը ավարտվող դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող հանրագու-մա-րային քննության (այսուհետ՝ Հանրագումարային քննություն) հետ մեկտեղ նախատեսվում է 2 ընթացիկ քննություն(ըստ աշխատանքային պլանի): Ընթացիկ քննությունը կամ նրա մի մասը, որպես կանոն, անցկացվում է գրավոր (ուսանողների կամ տվյալ առարկայի դասախոսի հիմնավորված առաջարկությամբ և ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև գրավոր-բանավոր ձևով):

- Սահմանվում են ընթացիկ քննության առաջադրանքի հետևյալ ձևերը՝ հարցաշար, թեսթ, ստուգողական աշխատանք, վերջիններիս զուգակցում կամ ստեղծագործական աշխատանք:

- Ընթացիկ գրավոր քննության առաջադրանքի առնվազն 8 միավորով գնահատվող հատվածը, որպես կանոն, կազմվում է թեսթային առաջադրանքի տեսքով:

- Հանրագումարային քննության ձևը (գրավոր, բանավոր կամ գրավոր - բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին հաջորդ ուսումնական տարվա համար:

14. Ստուգարքով եզրափակվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2-4 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունք-ներով ամփոփվող ստուգարքով:

15. Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն (գրավոր, բանավոր կամ գրավոր - բանավոր) դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին հաջորդ ուսումնական տարվա համար:

16. Ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների արդյունքների ամփոփման ու ներկայացման ձևը հաստատվում է համապատասխան ամբիոնում: Ուսանողները լաբորատոր աշխատանքները կատարում են տվյալ դասընթացը վարող դասախոսի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ:

17. Քննությամբ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գքնն.) ձևավորվում է ըստ հետևյալ բաղադրամասերի՝

17.1. Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ1 :

17.1.1. Լսարանային պարապմունքներին լիարժեք մասնակցության դեպքում ուսանողը վաստակում է՝ 5 միավոր - դասախոսություններին հաճախելու համար, իսկ 15 միավոր - գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքներին հաճախելու համար(հավելված 1):

17.1.2. Լսարանային պարապմունքներին հաճախումները որոշվում են համաձայն հետևյալ հաշվարկի.

$$ՀՄ=Դ+Գ,$$

որտեղ՝

ՀՄ-հաճախումներին հատկացվող միավորը

Դ-դասախոսությունների մասնակցությանը միավորը

Գ-գործնական (սեմինար, լաբորատոր) պարապմունքների մասնակցությանը միավորը

17.1.3. Լսարանային պարապմունքներին 50% և ցածր հաճախումների դեպքում մասնակցության համար միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է գրո):

17.1.4. Դասընթացի լսարանային պարապմունքների հաճախումների համար հատկացվող միավորը որոշվում է ըստ հաճախումների քանակի և համարժեք տոկոսի (հավելված 1):

17.1.5. Լսարանային պարապմունքներին և պրակտիկաներին ուսանողների հաճախումները դասամատյանում գրանցում է դասախոսը կամ խմբի (կուրսի) ավագը այդ աշխատանքները վարող դասախոսի (պրակտիկայի ղեկավարի) հսկողությամբ: Յուրաքանչյուր շաբաթվա վերջում խմբի խորհրդատուն ամփոփում է հաճախումների արդյունքները դասամատյանում:

17.1.6. Տվյալ առարկայի դասընթացից անհարգելի բացակայությունների և (կամ) ցածր առաջադիմության դեպքում ուսանողը յուրաքանչյուր ամսվա վերջում

ակադեմիական խորհրդատուի կամ դեկանի կողմից ստանում է նախազգուշացում, ինչն ուսանողի ստորագրությամբ գրանցվում է հաշվառման մատյանում:

17.1.7. Տվյալ ամսվա ընթացքում համապատասխան փաստաթղթով վավերացված հարգելի բացակայություններ ունեցող ուսանողների համար դեկանատի գրավոր թույլտվությամբ ամբիոնը կազմակերպում է չկատարած լաբորատոր աշխատանքների անցկացում և գործնական (սեմինար) աշխատանքների խորհրդատվություն: Այդ դասաժամերին ուսանողների մասնակցության դրական արդյունքների դեպքում բացթողումները համարվում են լրացված:

17.1.8. Կիսամյակում դասընթացի լսարանային պարապմունքների մասնակցությանը համապատասխան միավորը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

17.2. Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ2, որին հատկացվում է 10 միավոր:

17.2.1. Ինքնուրույն աշխատանքի ձևերից են՝ ռեֆերատը, անհատական տնային առաջադրանքները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը, թեմատիկ զեկուցումների նախապատրաստումը և այլն:

17.2.2. Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից կարող են հանձնարարվել առնվազն 2 անհատական առաջադրանքներ:

17.2.3. Եթե ինքնուրույն աշխատանքը (անհատական առաջադրանքը) նշանակված ժամա-նա-կա-հատվածում կատարված է առնվազն կիսով չափ և ուսանողը կարողանում է այն ներկայացնել, ապա աշխատանքը գնահատվում է դրական (8-20 միավոր):

17.2.4. Բոլոր առաջադրանքների դրական գնահատականների միջինի դեպքում (8-20 միավոր) ուսանողը ստանում է ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված 10 միավորը: Հակառակ դեպքում ուսանողն ինքնուրույն աշխատանքի համար միավոր չի վաստակում (տեղեկագրում գրվում է զրո):

17.2.5. Ինքնուրույն աշխատանքի (անհատական առաջադրանքների) գնահատականները նշանակվում են մատյանում և տեղեկագրում:

17.3. Գործնական և/կամ սեմինար ու լաբորատոր աշխատանքների անցկացմանն ուսանողի մասնակցությունից և պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունից (Գ3), որը գնահատվում է 20 միավորով:

17.3.1. Նշված պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են, որոնց անցկացմանը ուսանողի մասնակցությունը և ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է դասամատյանում:

17.3.2. Կիսամյակում դասընթացի գործնական (սեմինար) ու լաբորատոր աշխատանքների ուսանողների մասնակցության և ակտիվության գնահատման արդյունքների միջինը գրանցվում է ամփոփիչ գնահատման տեղեկագրում:

17.3.3. Դրական (8 և ավելի) գնահատականների միջինի դեպքում ամփոփիչ գնահատման տեղեկագրում ուսանողին տրվում է 20 միավոր, իսկ 8-ից ցածր արդյունքի դեպքում միավոր չի հատկացվում (տեղեկագրում գրվում է զրո):

17.4. Ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից տեսության յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ դրական (8 և բարձր) գնահատված քննությունների միջին գնահատականի կամ քննության ընթացքում այդ միջինի բարձրացված արդյունքից (Գ4):

17.4.1. ընթացիկ քննությունների դրական գնահատականների միջինը հաշվի է առնվում, եթե ուսանողի գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները գնահատված են դրական:

17.4.2. Տվյալ դասընթացի ընթացիկ քննություն(ներ)ից 8-ից ցածր միավոր ստացած կամ ընթացիկ քննությանը չներկայացած ուսանողը հնարավորություն է ստանում այն (վերա)հանձնելու հանրագումարային քննության օրվան նախորդող աշխատանքային օրվա ընթացքում:

17.4.3. Բանավոր քննության թույլատրվում են այն ուսանողները, որոնք գրաֆիկով նշանակված ժամկետներում դրական գնահատականներով հանձնել են տվյալ դասընթացի ընթացիկ քննությունները և ակնկալում են դրական գնահատված մասերի համապատասխան գնահատականի բարձրացում (հանրագումարային քննության նախորդ օրը ընթացիկ քննություն(ներ)ը հանձնած ուսանողը հանրագումարային քննության չի թույլատրվում):

17.4.4. Քննությունները գնահատվում են առավելագույնը 20 միավորով: Վերջնական գնահատման ժամանակ քննությունների գնահատականը կլորացվում է:

17.4.5. Ընթացիկ և հանրագումարային քննությունների արդյունքները գրանցվում են քննությունների տեղեկագրում:

17.5 Ուսանողի՝ գիտելիքների կիրառության գործնական հմտություններից (Գ5), որը գնահատվում է 1-10 միավորներով, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանքները

գնահատվել են 11-20 միավորներով, դրական և ինքնուրույն կատարվող աշխատանքները (անհատական առաջադրանքները) գնահատվել են դրական (կախված դասընթացի բնույթից՝ ամբիոնի որոշմամբ, առաջնայինը կարող է լինել ինքնուրույն կատարվող աշխատանքների 11-20 միավորը):

17.5.1. 10-ից բարձր գնահատականի դեպքում գործնական կարողությունների համար տրվում է 10-ը գերազանցող միավորներին հավասար միավոր:

17.6. Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման արդյունքում ուսանողի ձեռք բերած կարողությունների գնահատումից (Գ6), որին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:

17.6.1. Ուսանողի ձեռք բերած կարողությունները գնահատվում են 8-20 միավորներով/քննության միավորին համարժեք/, եթե ուսանողը հանձնել է քննությունն ու գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք-ները գնահատվել են դրական և ինքնուրույն կատարվող աշխատանք-ները (անհատական առաջադրանք-ները) գնահատվել են դրական:

18. Դասընթացի (կրթական մոդուլի) հանրագումարային միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$\text{Գքնն} = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

19. Ստուգաբլոկ ավարտվող դասընթացից (կրթական մոդուլից) ուսանողի ստացած հանրագումարային/կիսամյակային միավորը (գնահատականը) (Գստ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

19.1. դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ1, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20 միավոր (տես 14.ա կետը):

19.2. ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ2, որին հատկացվում է 10 միավոր (տես 14.բ կետը):

19.3. գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունից և ակտիվությունից (Գ3), որին տրվում է 20 միավոր (տես 14.գ կետը):

19.4. ուսանողի կողմից ուսուցանվող նյութի յուրացման աստիճանի ստուգման, ձեռքբերված գործնական հմտությունների ու կարողությունների

գնահատման նպատակով անցկացվող 2-4 ընթացիկ ստուգումների դրական գնահատականների (8 և բարձր) արդյունքների միջին գնահատականից (Գ4):

19.4.1. Ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է 20 բալանոց համակարգով: Ստուգման արդյունքները գրանցվում են ստուգարքների տեղեկագրում:

19.5. Տվյալ դասընթացի (կրթական մոդուլի) ուսուցման ընթացքում ուսանողի ձեռքբերած հմտությունների (Գ5) և կարողությունների (Գ6) գնահատումից: Այս դեպքում նորից հմտություններն ու կարողությունները արժևորվում են տեսական և գործնական գիտելիքների դրական գնահատման դեպքում (տես 14. ե և գ կետերը):

20. Դասընթացի (կրթական մոդուլի) ընդհանուր միավորը (գնահատականը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար`

$$Գ_{ստ.} = Գ1 + Գ2 + Գ3 + Գ4 + Գ5 + Գ6$$

21. Ընթացիկ քննություններից կամ ստուգումներից չառաջադիմող ուսանողների հետ ամբիոնները պարտավոր են անցկացնել լրացուցիչ և(կամ) անհատական պարապմունքներ` ըստ ժամանակացույցի:

22. Կուրսային աշխատանքի կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է ,ՎՊՅ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգերով:

23. Պրակտիկան գնահատվում է քննության ձևով` 100 միավորանոց սանդղակով` ըստ մասնագիտական կրթական ծրագրի կողմից սահմանված չափանիշների: Ուսումնական կամ արտադրական պրակտիկաների կազմակերպումը, գնահատումը կարգավորվում է ,Պրակտիկայի կազմակերպման կանոնակարգե -ով:

24. Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման մասին կարգի (հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանով):

IV. Կիրարկման ընթացակարգը

24. Ընթացիկ և հանրագումարային ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, ստուգումների ձևերը, հարցաշարերը, թեսթային կամ այլ առաջադրանքները և ստուգումների անցկացման ժամանակացույցը, ինչպես

նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում): Գրավոր ստուգման տարբերակում յուրաքանչյուր հարցի համար պետք է նշվի գնահատման առավելագույն միավորը, իսկ առաջադրանքի ծավալը համապատասխանի հատկացվող ժամանակահատվածին (ընթացիկ քննության համար՝ առնվազն 120 րոպե): Ընթացիկ քննության հարցատոմսը պետք է պարունակի առնվազն 8-միավորանոց թեստային առաջադրանք:

25. Ընթացիկ քննությունների ու ստուգումների, ստուգարքների ու քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

26. Արգելվում է առանց ռեկտորատի թույլտվության և ուսանողների համաձայնության քննության վաղաժամկետ ընդունումը կամ հետաձգումը:

27. Ընթացիկ քննություններն անցկացվում են ըստ հաստատված ժամանակացույցի:

28. Ընթացիկ քննության օրերին ուսանողներն ազատվում են այդ օրվա դասերից:

29. Ստուգարքով ավարտվող առարկայի ընթացիկ ստուգումներն անցկացվում են ստուգումների թվով համամասնորեն բաժանված ժամանակահատվածներում: Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից՝ դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):

30. Ընթացիկ քննության կամ ստուգման քննարկումն անցկացվում է դասերից հետո՝ անհատական աշխատանքների համար նախատեսված ժամերի շրջանակում՝ առարկան դասավանդող դասախոսի կամ ամբիոնի որոշմամբ՝ նույն առարկան դասավանդող այլ դասախոսի կողմից՝ ստուգմանը հաջորդող աշխատանքային երկու օրվա ընթացքում:

31. Գրավոր ստուգման արդյունքները վերջնական ամփոփումից հետո գրանցվում են համապատասխան տեղեկագրում (արդյունքները փակցվում են ի տես բոլորի):

32. Հետագա մեկ օրվա ընթացքում ուսանողն իրավունք ունի որոշակի հարց(եր)ի գնահատումը բողոքարկելու նպատակով գրավոր դիմելու դեկանին, որը համապատասխան ամբիոնի վարիչի հետ կազմակերպում է բողոքի քննարկումը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

33. Քննարկման արդյունքի մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է տեղեկագրին:

34. Ընթացիկ կամ հանրագումարային ստուգմանը (ստուգարքին, քննությանը) դասախոսի բացակայության դեպքում ստուգումն իրականացվում է դեկանի գրավոր կարգադրությամբ՝ ըստ ամբիոնի վարիչի առաջարկի (այլ դասախոսի կամ հանձնաժողով):

35. Ընթացիկ ստուգումից բացակայության դեպքում լրացուցիչ ստուգում չի կազմակերպվում և տեղեկագրում գրանցվում է ,չներկայացած: Ուսանողը այն վերահանձնում է ստուգարքների համար նախատեսված շաբաթվա ընթացքում:

V. Ստուգարքների ամփոփումը

36. Ստուգարքներն ամփոփվում են յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում:

37. Ուսումնական պարապմունքների նախավերջին շաբաթվա ընթացքում իրականացվում է բաց թողնված դասերի լրացում: Նախավերջին շաբաթում, ըստ հաստատված ժամանակացույցի, լրացվում են բաց թողած լաբորատոր, գործնական սեմինար պարապմունքները:

38. Եթե ուսանողը հանձնել է բոլոր ընթացիկ ստուգումները և ունի 58 կամ ավելի միավոր, ապա տվյալ առարկայի ստուգարքը համարվում է հանձնված:

39. 0-57 միավորների դեպքում ուսանողը գնահատվում է «Չստուգված»:

VI. Քննությունների անցկացումը

40. Քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջան-ներում՝ 19-20-րդ շաբաթներում՝ ըստ հաստատված ժամանակացույցի:

41. Քննությունների անցկացման ժամանակացույցը՝ ուսանողական խմբերի առաջադրմամբ, կազմվում է դեկանատներում, ներկայացվում ուսումնական վարչություն և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից քննաշրջանը սկսվելուց մեկ ամիս առաջ:

42. Քննություններն անցկացվում են հարցատոմսերով, թեստերով, որոնք հաստատվում են ամբիոնի նիստում քննաշրջանից մեկ ամիս առաջ:

43. Քննությունները կարող են կազմակերպվել համակարգչային տեխնիկայի միջոցով:

44. Քննության ընթացքում տվյալ դասընթացից խնդիրներ կամ այլ գործնական առաջադրանքներ տալու դեպքում դասախոսը պարտավոր է

ուսանողներին ապահովել խնդրագրքերով, առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատու ձեռնարկներով:

45. Կրթական յուրաքանչյուր մոդուլ գնահատվում է առանձին, և հարցատոմսերն ընդգրկում են միայն տվյալ կիսամյակում դասավանդված թեմաները:

46. Բանավոր քննության ընթացքում ստացած գնահատականին ուսանողի անհամաձայնության դեպքում ուսանողը քննասենյակում հայտարարում է, որ համաձայն չէ իր գնահատականին և անմիջապես այդ մասին գրավոր դիմում է դեկանին, որն էլ համապատասխան ամբիոնի վարիչի (անհրաժեշտության դեպքում նաև քննությունները վերահսկող հանձնաժողովի ներկայացուցչի) հետ կազմակերպում է քննության քննարկումը, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն՝ գնահատականը փոփոխելու կամ նույնը թողնելու վերաբերյալ:

47. Տվյալ առարկայից դրական գնահատական (58 և ավելի միավորներ) ունեցող ուսանողը կարող է չմասնակցել այդ առարկայի քննությանը՝ պահպանելով իր գնահատականը կամ մասնակցելով քննությանը՝ բարձրացնել դրական գնահատականը, որը ենթակա չէ իջեցման:

48. Քննության (ստուգարքի) վերջում քննվող երեք ուսանողները քննասենյակից դուրս են գալիս վերջին ուսանողի պատասխանից հետո:

49. Ուսումնական վարչության և դեկանի կողմից հաստատված տեղեկագիրը դեկանը տրամադրում է դասախոսին ստուգման օրը: Տեղեկագրի մեջ դեկանի կողմից կարող են կատարվել հետևյալ գրառումները.

50. «Քննության չի թույլատրված» (թանաքով), այն ուսանողների անվան դիմաց, որոնք քննաշրջանին կամ տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) մասնակցելու թույլտվություն չունեն,

51. բազմագործոնային համակարգով դրական գնահատված քննության (կամ ստուգարքի) գնահատականի նիշը և «Փոխանցվում է» գրառումը (թանաքով), եթե ուսանողը տվյալ կրթական մոդուլից ունի դրական գնահատական (այլ բուհից տեղափոխություն, ուսանողական իրավունքի վերականգնում և այլն) և չի ցանկանում մասնակցել այդ քննությանը (ստուգարքին), ինչի մասին նա նախօրոք գրավոր տեղեկացնում է դեկանին:

52. Քննության ներկայանալիս ուսանողը պարտավոր է դասախոսին ներկայացնել ստուգման գրքույկը: Դասախոսը քննական տեղեկագրում գրանցում է ուսանողի ստուգման գրքույկի համարը, հարցատոմսի համարը, ուսանողի պատասխանից հետո՝ բարձրաձայն հայտնում գնահատականը, որից հետո

գրանցում է տեղեկագրում, դրական գնահատականը նաև ստուգման գրքույկում:
Կարգի խախտման դեպքում դասախոսը ենթակա է նկատողության:

53. Ամփոփված քննական տեղեկագիրը դեկանատ է ներկայացվում քննության ավարտից անմիջապես հետո:

54. Բանավոր քննությունը կազմակերպվում է մեկ օրվա ընթացքում մեկ ենթախմբի համար:

VII. Գնահատման սանդղակը և նշագրումը

55. ՎՊՅ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է հավելված 2-ում:

56. Այն դասընթացներին, որոնցից ուսանողը վաստակել է 58-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է ,չստուգվածե, կրեդիտներ չեն հատկացվում և ստուգարքային գրքույկում նշում չի կատարվում:

57. Գնահատումը կատարվում է ըստ տվյալ դասընթացի գնահատման սահմանված չափանիշների.

18-20 միավորները համարվում են դրական գնահատական,

7 միավորները համարվում են բացասական (չի նշվում ուսանողի ստուգման գրքույկում):

58. Քննության ժամանակ կամ գրավոր աշխատանքի կատարման ընթացքում ուսանողի անազնվությունը հայտնաբերելիս (ծածկաթերթիկից կամ այլ արգելված աղբյուրից օգտվելու դեպքում) (տե՛ս Ակադեմիական ազնվության կարգեր) այդ ուսանողի քննությունը (գրավոր աշխատանքը) դադարեցվում է և տեղեկագրում գրանցվում է 0 (զրո):

VIII. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

59. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար դեկանատը յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած հանրագումարային գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած

ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը (հավելված 3):

60. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

61. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

ծրագրային (գումարային) կրեդիտների (ԾԿ) քանակը

գնահատված կրեդիտների (ԳԿ) քանակը

վարկանիշային միավորները (ՎՄ)

միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

62. Ծրագրային (գումարային) կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած բոլոր կրեդիտների գումարն է:

63. Գնահատված կրեդիտը (ԳԿ) այն դասընթացների կրեդիտների գումարն է, որոնք գնահատված են.

$$ԳԿ = \sum (\text{Կրեդիտ})$$

64. Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող ECTS գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum (\text{Կրեդիտ} \times \text{ԹԳ}),$$

որտեղ ԹԳ-ն տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար ECTS թվային գնահատականն է: Օրինակ, եթե 5 կրեդիտով դասընթացը գնահատվել է 72 միավոր, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է 5 կրեդիտ \times 72 = 360` 500 հնարավորից:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով չափված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / (\sum \text{ԳԿ})$$

65. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված տվյալ կիսամյակի համար) և արդյունարար

(հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

66. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

67. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր դասընթացների անհրաժեշտ կրեդիտները (30 կրեդիտ՝ մեկ կիսամյակի համար):

68. 30 կրեդիտ չհավաքած ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և ձեռք բերելու սահմանված կրեդիտները գործող կարգի համաձայն:

X. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

69. Դրական գնահատված դասընթացի քննության(ստուգման) կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

70. Ստուգմանը, ստուգարքին կամ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի՝ քննության օրը և դրան հաջորդող երկու աշխատանքային օրերի ընթացքում Համալսարանի ընդհանուր բաժնում գրանցված բժշկական տեղեկանքի կամ բացակայությունը հիմնավորող այլ փաստաթղթի առկայության դեպքում:

71. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն ու քննությունն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունաբար նվազագույն 58 միավորը չհավաքած (գտնվում է 0-57 միջակայքում) ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու համաձայն գործող կարգի, ընդ որում՝ այս շրջանում ստացած դրական գնահատականներով ուսանողը չի կարող մասնակցել նպաստների և ուսանողական կրթաթոշակի հատկացման համար անցկացվող մրցույթին:

72. Յուրաքանչյուր առարկայի քննության կամ ստուգարքի ակադեմիական պարտքը թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Պարտքերի մարման համար սահմանվում է երկու շրջան՝ ըստ ժամանակացույցի:

73. Պրակտիկային մասնակցած, բայց չորակավորված ուսանողների համար դեկանը պրակտիկայի պարտքերի մարման համար հաստատում է ժամանակացույց:

74. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ կամ այլ պատճառներով պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

XI. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը

75. Քննաշրջանի արդյունքների ամփոփումը կատարվում է դեկանատներում և ուսումնական վարչությունում:

76. Այն ուսանողները, որոնք հաջողությամբ կատարել են ուսումնական տարվա պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները, դեկանի ներկայացմամբ և ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս:

77. Կիսամյակում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, որը տվյալ կիսամյակում ստուգարքային և քննական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից), պրակտիկաներից հավաքել է 86-100 միավորներ (գերազանցե գնահատականներ):

78. Քննաշրջանի արդյունքները ուսումնասիրվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի, ռեկտորատի և Համալսարանի գիտխորհրդի նիստերում:

XIII. Կրեդիտների փոխանցումը

79. Ակադեմիական կրեդիտների կուտակումը և փոխանցումը կատարվում է համաձայն «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգի»:

XIV. Քննությունների և ստուգարքների անցկացման հսկողությունը

80. Քննությունների և ստուգարքների անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնի վարիչի, դեկանատի, ուսումնական վարչության և քննությունները վերահսկող հանձնաժողովի կողմից:

81. Քննությունները վերահսկող հանձնաժողովը ստեղծվում է ռեկտորի հրամանով և հաշվետու է ռեկտորին ու ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

82. Քննությունները վերահսկող հանձնաժողովը իրավասու է դեկանի գիտությամբ ստուգելու ֆակուլտետում անցկացվող բոլոր տեսակի

քննություններն ու ստուգարքները, նրանց համապատասխանությունը սույն կանոնակարգին և լսելու ուսանող(ներ)ի պատասխան(ներ)ը:

83. Քննու թյան կամ ստուգարքի ընթացքի, դասախոսի կամ ուսանողի պարտականությունների կամ իրավունքների որևէ խախտում նկատելու դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են միջամտելու և (դեկանի օգնությամբ) կանխելու նկատված խախտումը:

84. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներն իրավասու են, անմիջապես գրավոր տեղյակ պահելով բուհի ռեկտորին կամ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, դեկանից պահանջելու քննության կամ ստուգարքի դադարեցում: Քննության (ստուգարքի) շարունակման կամ դադարեցման և նոր քննության (ստուգարքի) անցկացման մասին որոշումը կայացվում է Համալսարանի ղեկավարության և դեկանի կողմից:

Հավելված 1

Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության համար հատկացվող միավորները և համարժեք տոկոսները

Մասնակցության աստիճանը մասնակցության աստիճանը %	Հատկացվող միավորը	
	Դասախոսություն	Գործնական (սեմինար, լաբորատոր) աշխատանք
96-100	5	15
91-95	5	15
86-90	4	14
81-85	4	14
76-80	3	13
71-75	3	13
66-70	2	12
61-65	2	12
56-60	1	11
51-55	1	11
0-50	0	0

Հավելված 2

Ուսումնառության արդյունքների գզնահատման 100 -միավորանոց սանդղակ

Գնահատականը ըստ 5-բալանոց համակարգի «գերազանց» (5)	Գնահատականը ըստ 100-բալանոց համակարգի 96-100	Գնահատականը ըստ ECTS համակարգի A ⁺
---	---	--

«գերազանց» (5)	91-95	A
«գերազանց» (5)	86-90	A ⁻
«լավ» (4)	81-85	B ⁺
««լավ» (4)	76-80	B
«լավ» (4)	71-75	B ⁻
«բավարար» (3)	67-70	C ⁺
«բավարար» (3)	62-66	C
«բավարար» (3)	58-61	C ⁻
«անբավարար»	0-57	D
«անբավարար»	58-100	S
«անբավարար»	0-57	U

Գ. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ ընթացքում:

3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

Դ. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

2. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎՊՄԻ կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է Պատմաաշխարհագրական ֆակուլտետում իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ:

Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

2 020400 «Աշխարհագրություն» մասնագիտության տեղեկագիրք

I. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ

Պարտադիր դասընթացներ

Պ/բ-0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 1 (2կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա V-XIX դարերի հայ ազատագրական պայքարի պատմությունը,
2. կկարողանա ներկայացնել Հայաստանի ազատագրության ծրագրերը
3. կկարողանա ներկայացնել հայ ազատագրական շարժման նախադրյալները, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության սկզբնավորումը
4. կտիրապետի հայ ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների
5. կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. V դ. ազատագրական պայքարը Թեմա 2. VI-VII դդ. ազատագրական պայքարը: Թեմա 3. VIII-IX դդ. ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ Թեմա 4.: Հայաստանի ազատագրական ծրագրերը Թեմա 5. Հայ ժողովրդի ազատագրական որոնումները XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի առաջին քառորդին Թեմա 6. Հովսեփ Էմինը և Հայաստանի ազատագրության նրա ծրագիրը Թեմա 7. Հայաստանի ազատագրության ծրագրերը XVIII դարի II կեսին Թեմա 8. Ազատագրական պայքարը Սյունիքում և Արցախում Թեմա 9. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին Թեմա 10. Հայ հասարակական քաղաքական հոսանքները Թեմա 11. Արևմտահայ ազգային ազատագրական շարժումների վերելքը XIX դ. 90-ական թթ: Թեմա 12. Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացումը: Թեմա 13. Ֆիդայական շարժումը: Թեմա 14. Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները:

Պ/բ-0453 Հայոց պատմության հիմնահարցեր - 2 (2կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության նոր շրջանի ազատագրական պայքարի

պատմության, Հայոց Մեծ եղեռնի, հայոց պետականության պատմության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. իմանա Հայոց Մեծ եղեռնի պատմությունը, կկարողանա ներկայացնել 1915թ. ինքնապաշտպանական մարտերը
2. կկարողանա ներկայացնել մայիսյան հերոսամարտերը և հայոց պետականության վերականգնման նախադրյալները
3. կտիրապետի արցախյան շարժման և անկախ պետականության վերականգնման պատմությանը

Բովանդակությունը.

Թեմա 1. Ազգային կուսակցությունների առաջացումը: Թեմա 2. Հայկական հարցը 1912-1914թթ.: Թեմա 3 Հայոց Մեծ եղեռնը: Թեմա 4. 1915թ. ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 5 1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը: Թեմա 6. Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ. Թեմա 7. Արցախյան շարժման նոր փուլը: Թեմա 8. Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը: Թեմա 9. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները:

ՌL0081 Ռուսաց լեզու - 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ձևավորել ռուսերենի իմացության այնպիսի մակարդակ, որը կապահովի ուսանողների ռուսերենով հաղորդակցվելու, երկխոսություն ծավալելու ունակությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. ռուսերենով ճիշտ կառուցել իր բանավոր խոսքը.
2. ծավալել երկխոսություն ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ այլ ոլորտներում.
3. կիրառել ռուսաց լեզվի քերականական կառուցվածքը.
4. վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական և այլ բնույթի (գեղարվեստական և ճանաչողական) տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Խաղաղության մշակույթ: ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունը: Տեսական նյութ. Հնչյունաբանություն: Ռուսաց լեզվի հնչյունական համակարգը: ռուսերենի շեշտ: բանավոր և գրավոր խոսքի հնչերանգը:

Թեմա 2. Ռուսաց լեզուն որպես ՄԱԿ-ի աշխատանքային լեզուներից մեկը: Քերականական նյութ. Գոյականի քերականական սեռը: Ընդհանուր քերականական սեռի բառեր: Որոշի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Մարդ: Դիմանկար: Բնավորություն: Ընտանիք: Քերականական նյութ. Որոշի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում: Գոյականների հոլովները:

Թեմա 4. Տուն, բնակարան, քաղաք, որում ես ապրում եմ: Քերականական նյութ. Գոյականի թիվը: Եզակի թիվ, հոգնակի թիվ: Անեզական և անհոգնական գոյականներ:

Թեմա 5. Կրթություն: Կրթության համակարգը Հայաստանում: Քերականական նյութ. Ածական անուն: Որակական, հարաբերական և ստացական ածականներ: Ածականի համեմատական աստիճանները: Ամբողջական և կրճատ ձևերը: Նրանց կիրառությունը կապակցություններում և նախադասություններում: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 6. Երիտասարդությունը 21 դարում: Քերականական նյութ. Թվական անուն: Թվականի տեսակները, ուղղագրությունը, կապակցությունները և շարահյուսական դերը: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 7. Աշխատանքի նշանակությունը մարդու կյանքում: Քերականական նյութ. Դերանուն: Դերանունների տեսակները: Քերականական կառույցների կազմում:

ՈԼ0081 Ռուսաց լեզու - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողի մոտ ձևավորելու ռուսերեն լեզվի այնպիսի մակարդակ, որը կապահովի տվյալ լեզվով հաղորդակցումը, սեփական տեսակետը արտահայտելու և երկխոսություն ծավալելու նրա ունակությունը մասնագիտական և այլ ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները.

2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին.

3. կտիրապետի մասնագիտական տեքստի քերականական առանձնահատկություններին, կարգերին և շարահյուսական կառուցածքներին.

4. կկարողանա սեղմ ձևով ներկայացնել այս կամ այն մասնագիտական տեքստը, առանձնացնել նրանում պարունակվող հիմնական միտքը, նշել առանցքային բառերը (եզրույթները), ընդգծել տվյալ հոդվածում պարունակվող գիտական նորույթը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտություն և տեխնիկա: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 2. Մշակույթ և արվեստ: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Առողջություն: Հանգիստ: Սպորտ: Ժամանց: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 4. Բնություն: Բնապահպանություն: Էկոլոգիա: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Ժամանակի պարագա և տեղի պարագա: Կառավարման սկզբունքով կառուցված պարագայական կապակցություններ: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 5. ՁԼՄ-ներ և դրանց դերը ռուսաց լեզվի ուսուցման գործում: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Քերականական կառույցների կազմում: Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ:

Թեմա 6. Հայրենիք: Մեր հանրապետությունը: Կենսաձևը Հայաստանում: Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ: Կետադրություն:

Յ/բ-1007 Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հայեցի դաստիարակության խնդիրների լուծումը, ինչպես նաև ապագա մասնագետի գրավոր և բանավոր կիրք խոսք մշակելու, ապագա ուսուցչի, գիտնական-հետազոտողի մոտ գործնական, գիտական ոճերին ծանոթացմամբ և կիրառական հմտությունների ձեռք բերման անհրաժեշտությամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները, համակարգերի և ենթահամակարգերի հարաբերակցությունը,
2. կկարողանա գործնականում կիրառել ժամանակակից հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, քերականական կանոնները,
3. կտիրապետի ՀՀ պետական լեզվի գործառույթների, կիրառական առանձնահատկությունների նորմերին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայերենը որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզու: Թեմա 2. Արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառներ. ընդհանուր գաղափար: Թեմա 3. Հայերենագիտություն և հայագիտություն: Հայագիտական կենտրոններ: Թեմա 4. Հայերենի հնչյունական համակարգը. ձայնավորներ և երկհնչյուններ, դրանց ուղղագրությունը և ուղղախոսությունը: Թեմա 5. Հայերենի հնչյունական համակարգը. բաղաձայններ, դրանց ուղղագրությունը և ուղղախոսությունը: Թեմա 6. Բառագիտություն. բառապաշար և բառակազմություն: Բասռապաշարի հարստացում. ստուգաբանական և բառակազմական վերլուծությունն իբրև բառապաշարի հարստացման միջոց: Թեմա 7. Գործնական գրություններ: Թեմա 8. Մասնագիտական տերմինաբանություն: Թեմա 9. Խոսքի մասեր: Հայերենի ձևաբանական նորմայի առանձնահատկությունները: Բառապաշարի հարստացումը ձևաբանությունն ուսումնասիրելիս: Թեմա 10. Շարահյուսական

կապակցման եղանակներ և միջոցներ: Բառակապակցություն և նախադասություն: Կիրառական հմտություններ: Կապակցված խոսքի մշակումը և կատարելագործումը նախադասության ուսուցանման միջոցով: Թեմա 11. Կետադրություն: Կիրառական հմտություններ: Թեմա 12. Ամփոփում: Հայերեն բանավոր և գրավոր խոսքի առանձնահատկությունները, տարածված սխալների բնույթը, դրանց վերացմանն ուղղված գործնական աշխատանք գրավոր տեքստի և նրա բանավոր վերարտադրման հմտությունների ամրապնդման նպատակով:

Յ/բ-0301 Հայոց լեզու և գրականություն-2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 դասախոսություն, 24 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Ուսանողներին զինել հայ գրականության պատմությանը վերաբերող գիտելիքներով՝ շեշտը դնելով գրապատմական շրջափուլերի առանցքային հեղինակների և գործերի վրա: Սովորեցնել բնագրի վերլուծություն կատարել, մասնակցել քննարկում-բանավեճերի, անգիր հատվածներ հանձնարարել չափածո գրական գործերից: Գրականության զարգացման պատմության մասին ընդհանուր պատկերացում ձևավորել՝ առնչակից տեսական հարցերի պարզաբանումներն ամուր հիմքերի վրա դնելով, ինչպես որոշ գրական ուղղություններ և մեթոդներ, գրական ժանրեր, պատկերավորման միջոցներ, կրկնության շարահյուսական ֆիգուրներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա գրական վերլուծության ենթարկել անհրաժեշտ գեղարվեստական երկերը,
2. զանազանել գրական մեթոդների և ուղղությունների տարբերակիչ սկզբունքները, ժանրային կառուցվածքները,
3. գրական գործընթացի վերաբերյալ ընդհանուր կարծիք հայտնել
4. կտիրապետի գրական-գեղարվեստական գործերի վերլուծության սկզբունքներին ու մեթոդներին, քննարման մասնակցելու կանոններին:

Բովանդակությունը

Թեմա 1. Բանահյուսության գեղարվեստա-ճանաչողական գործառույթը: Գրերի գյուտի պատմամշակութային արժեքը, 5-րդ դարի հայ գրականության ընդհանուր նկարագիր:

Թեմա 2. «Սասնա ծռեր» էպոսը: Թեմա 3. Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», Ֆրիկ, քնարերգությունը: Թեմա 4. Միջնադարյան տաղերգություն, հայրեններ: Թեմա 5. Աբովյանը և լուսավորական շարժումը: Թեմա 6. Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Երգիծանքը: Թեմա 7. Ռոմանտիզմը որպես գրական մեթոդ: Րաֆֆու «Սամվել» վեպը: Թեմա 8. Գր. Չոփրապը և հայ նորավիպագրությունը: Թեմա 9. Շիրվանզադեն և հայ դասական ռեալիզմը: Թեմա 10. Հ. Թումանյան: Թեմա 11. Ավ . Իսահակյան: Թեմա 12. Վ. Տերյանի քնարերգությունը: Թեմա 13. Ե. Չարենցի պոեզիան: Թեմա 14. Ուրվագիծ արևմտահայ պոեզիայի /Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Թեքեյան/: Թեմա 15. Սփյուռք - «Կարոտի» և «Նահանջի» գրականության ուրվագիծ / Համաստեղ, Մնձուրի, Շ. Շահնուր/: Թեմա 16. Ավանդույթ և նորարարություն, համառոտ ակնարկ / Հ. Սահյան, Պ. Սևակ, Հր. Մաթևոսյան /:

Փ/բ-0478 Փիլիսոփայության հիմնահարցեր (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (28 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին գիտելիքներ տալ աշխարհայացքի, նրա տարատեսակների և ձևերի մասին, բացահայտել իրականության սկզբնապատճառը, զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, մեկնաբանել շարժման մեխանիզմը, ձևերը և դրանց դերը զարգացման գործընթացում: Ուսանողները գիտելիքներ են ստանում նաև հասարակության, նրա առանձնահատկությունների և գործառույթների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի փիլիսոփայության հետազոտության մեթոդներին,
2. կկարողանա ըմբռնել բնության և հասարակական օրենքների բնույթը,
3. կկարողանա տարբերակել փիլիսոփայական տարբեր ուղղությունների առանձնահատկությունները,
4. որպես մեթոդաբանություն փիլիսոփայությունը կկիրառի այլ գիտությունների ուսումնառության ընթացքում:

Բովանդակությունը.

Թեմա-1 Փիլիսոփայությունը որպես գիտություն: Թեմա-2 Փիլիսոփայության զարգացման պատմական փուլերը: Թեմա-3 Մատերիա և կեցություն: Թեմա-4 Յոգադեհի պրոբլեմը փիլիսոփայության մեջ: Թեմա-5 Չարգացման հիմնախնդիրը: Թեմա-6 Իմացության տեսություն: Թեմա-7 Գիտական իմացության յուրահատկությունը: Թեմա-8 Սոցիալական փիլիսոփայություն: Թեմա-9 Հասարակության սոցիալ-տնտեսական համակարգը: Թեմա-10 Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա-11 Մարդու հիմնախնդիր-ը փիլիսոփայության մեջ: Թեմա-12 Հասարակական գիտակցություն: Թեմա-13 Արժեքաբանության փիլիսոփայություն:

ԸՖԴ/բ0876 Մարմնակրթություն (1-4-րդ կիսամյակներ)³ (32-ական ժամ)

Բուհական բաղադրիչ

S/բ-1255 Տնտեսագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2.5 ժամ (20 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

Կրթական արդյունքները.

³ Առարկայի համար կրեդիտներ չեն սահմանվում:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին.

2. կիմանա տնտեսագիտական գիտելիքների դերն ու գործառույթները տնտեսության տարբեր ոլորտներում.

3. կկարողանա ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-տնտեսական քաղաքականություն փոխհարաբերությունները.

4. կիմանա առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսագիտության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: Թեմա 2. Ապրանքային արտադրություն: Ապրանք և փող: Թեմա 3. Շուկայական տնտեսության ընդհանուր բնութագիրը: Թեմա 4. Տնտեսական համակարգեր: Տիպերը և մոդելները: Թեմա 5. Ֆիրման շուկայական հարաբերությունների համակարգում: Թեմա 6. Ձեռնարկատիրական կապիտալի ձևավորումը: Թեմա 7. Ծախքերի տեսությունը: Արտադրություն և ծախքեր: Թեմա 8. Շահույթ և շահութաբերություն: Ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ: Թեմա 9. Ազրո-արդյունաբերական համալիր: Ռենտայի տեսություն: Թեմա 10. Կուտակում, սպառում և խնայողություն: Թեմա 11. Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: Թեմա 12. Ինֆլյացիա և գործազրկություն: Թեմա 13. Դրամավարկային համակարգի էությունը: Բանկեր: Թեմա 14. Ֆինանսական համակարգ և ֆինանսական քաղաքականություն: Թեմա 15. Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Թեմա 16. Համաշխարհային տնտեսությունը և զարգացման օրինաչափությունները: Միջազգային արժույթային և ֆինանսական համակարգեր:

Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթաց (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

OL0671 Օտար լեզու (Անգլերեն) -1

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհարստացնի ակտիվ և ներգոր բառապաշարը.

2. կսովորի անգլերեն լեզվի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները.

3. ձեռք կբերի անգլերեն լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն. անգլերեն լեզվի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Թեմա 3. Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): Թեմա 4. Առաջարկվող թեմաներ. ընտանիք, ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ, իմ հետաքրքրությունները, ճանապարհորդություն, երազանքներ, իմ ապագա մասնագիտությունը, շրջակա միջավայր և նրա պահպանումը և այլն:

OL0671 Օտար լեզու (Ֆրանսերեն) - 1

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և հաղորդակցվելու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտաբերել ֆրանսերենի հնչյունները, ընդհանուր պատկերացում կունենա ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին,
2. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները. դադար, շեշտ, հիմնական հնչերանգ, մեղեդային եզրափակում, տեմպ,
3. կկարողանա ընթերցել ադապտացված տեքստեր, հաղորդակցվել ֆրանսերենով:

Բովանդակությունը

Թեմա 1. Ֆրանսերենի հնչյունական համակարգը: Ուղղախոսական-ուղղագրական առանձնահատկությունները: Թեմա 2. Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: Թեմա 3. Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: Թեմա 4. Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Իգական սեռի և հոգնակի թվի կազմությունը: Թեմա 5 Թվական անուն : Թեմա 6. Հարցական ու ժխտական նախադասությունների կազմությունը: Թեմա 7 Ֆրանսերենի առավել գործածական նախդիրներն ու շաղկապները:

OL0671 Օտար լեզու (Գերմաներեն) – 1

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել դպրոցում ձեռք բերած գիտելիքները գերմաներեն ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ

բառապաշարը համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրության նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջորդ ավարտին ուսանողը.

1. գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում
2. կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին

Բովանդակությունը.

Թեմա 1. Եղանակավորող բայեր, սուբյեկտային և օբյեկտային բայեր: Թեմա 2. Ածական անուն. Թեմա 3. Հոմանիշ և հականիշ բայեր: Ամենատարածված ասացվածքները գերմաներեն և հայերեն լեզուներով: Բառի բազմիմաստությունը. Թեմա 4. Ազատ թեմաների ինքնուրույն կազմում “Այսօր իմ ծննդյան օրն է”, “Իմ մասնագիտությունը”, “Գերմանիայի քաղաքները”, մի շարք բանաստեղծություններ 3. Հայների, Վ. Գյոթերի ստեղծագործություններից:

**Կամընտրական դասընթաց 2 (4 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)
2-րդ կիսամյակ, ստուգարք
OL0672 Օտար լեզու (Անգլերեն) - 2**

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.
2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.
3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Թեմա 3. Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանողական և բայական կարգերի)

համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Թեմա 4. Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին:

OL0672 Օտար լեզու (Ֆրանսերեն) 2

Նպատակը.

Խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերեն լեզվի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային պարզ հմտություններ, գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

* կկարողանա ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,

* կկարողանա լսելով հասկանալ և վերաշարադրել տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը,

* կկարողանա գրույց վարել անցած թեմաներով:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սահմանական եղանակի պարզ ժամանակաձևերը: Թեմա 2. 3-րդ խմբի հիմնական անկանոն բայերը: Թեմա 3. Հրամայական եղանակի կազմությունը: Թեմա 4. Դերանվանական բայեր: Թեմա 5. Ածական անուն, համեմատության աստիճանների կազմությունը: Թեմա 6. Դերանվանական ածականներ /ստացական, ցուցական,, անորոշ Թեմա 7. Ֆրանսերենի բառակազմական միջոցները: Գործածական նախածանցներն ու վերջածանցները:

OL0672 Օտար լեզու (Գերմաներեն) – 2

Նպատակը.

Հարստացնել ուսանողների գիտելիքները բակալավրիատի ընդհանուր կրթական մակարդակով և ուսանողների բառապաշարային և քերականական գիտելիքները հասցնել այնպիսի մակարդակի, որ կարողանան արտահայտել իրենց մտքերը, առօրյա խոսակցական թեմաներով, ինչպես նաև կատարեն ազատ թարգմանություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա ունկնդրելով ճիշտ հասկանալ բանավոր խոսքը

2. կկարողանա գրել փոխադրություն

3. կկատարի համապատասխան թարգմանություն գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Նկատի է առնվում նաև ուսանողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Բովանդակություն.

Թեմա 1. Գոյականների հոլովման համակարգը և հոլովների կիրառական նշանակությունը: Թեմա 2. Բայերի ձևաբանական և իմաստաքերականական դասակարգումը: Թեմա 3. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է “Ես ուսանող եմ”, “Սուրճի սեղանի շուրջը” (վարվելաձևը սեղանի շուրջը), “Գրադարանում”, “Տարվա եղանակները”, “Իմ սիրելի գրողը”, “Հայաստանի պատմությունից”, “Գնումներ խանութում”, “Ընկերական շրջապատում” և այլն:

Կամընտրական դասընթաց 3 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (64 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

OL0672 Օտար լեզու (Անգլերեն) - 3

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել հիմնարար գիտելիքներով անգլերեն լեզվի քերականության ձևաբանության և շարահյուսության բաժինների և բանավոր խոսքի հիմունքների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.
2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.
3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը

Թեմա 1 – Մակբայների համեմատության աստիճանը, Ածականների համեմատության աստիճանը: Թեմա 2 - Անգլերեն լեզվի ժամանակաձևերի ուսումնասիրություն, Ներկա և անցյալ վաղակատար ժամանակաձևեր: Թեմա 3 - Միացյալ թագավորություն, աշխարհագրական բառապաշար, լրացուցիչ տեղեկություններ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության մասին: Թեմա 4 - Հողերի կիրառությունը հատուկ անունների հետ, գոյականական ածանցներ:

OL0673 Օտար լեզու (Ֆրանսերեն) 3

Նպատակը.

Ամրապնդել և զարգացնել ուսանողների՝ ֆրանսերենի բառապաշարի և քերականության վերաբերյալ ունեցած գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել գրագետ գրավոր և բանավոր խոսք կազմելու հմտություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կարդալ, ընկալել, վերարտադրել և թարգմանել ընդհանուր հաղորդակցական նշանակության տեքստեր.
2. կկարողանա ֆրանսերեն լեզվով հաղորդակցվել առօրյա թեմաների շուրջ:

Բովանդակությունը

Թեմա 1. Սահմանական եղանակի հիմնական բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունն ու գործածությունը: Թեմա 2. Ժամանակների համաձայնեցումը: Թեմա 3. Անդեմ բայեր ու արտահայտություններ : Թեմա 4. Դերանունների հիմնական տեսակները (ստացական, ցուցական, անորոշ, հարաբերական), դրանց քերականական կարգերի բնութագիրը: Թեմա 5. Մակբայների տեսակներն ու քերականական կարգերը:

OL0672 Օտար լեզու (Գերմաներեն) – 3

Նպատակը.

Զարգացնել ուսանողների գիտելիքները լեզվի կառուցվածքի, առանձնահատկությունների, խոսքամասային ձևերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա կառուցել հստակ ու սահուն խոսք՝ ճիշտ կիրառելով գերմաներեն լեզվի ժամանակաձևերը
2. կկարողանա գրել շարադրություն
3. կկատարի համեմատաբար բարդ թարգմանություններ գերմաներեն լեզվից մայրենի և հակառակը:

Բովանդակություն

Թեմա 1- Շեշտադրություն, ուղղագրություն, բառեր և քերականություն

Թեմա 2- Հոդը, գործածությունը, բայ, հրամայական եղանակ, բառեր, շարադասություն:

Թեմա 3- Ֆոնետիկական վարժություններ, օժանդակ բայերի գործածությունը որպես ինքնուրույն բայեր, հարցական նախադաս. շարադասությունը, վարժություններ և տեքստ:

Թեմա 4 - Ընթերցանության օրենքները, գոյական հոլովումը, դերանուն, բառակազմություն, արտասանություն, բառապաշարի ուսուցում: Գրավոր և բանավոր վարժություններ:

Կամընտրական դասընթաց 4

Փ/բ-0479 Իրավագիտություն - 2 կրեդիտ

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով իրավունքի, հատկապես մարդու իրավունքների, դրանց ներպետական և միջազգային պաշտպանության վերաբերյալ: Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական, իրավագիտական գիտելիքները: Ուսանողներին ծանոթացնել ՀՀ օրենսդրության հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. պետք է տիրապետի դասընթացի թեմաներին
2. կարողանան ճիշտ գնահատել մարդու՝ որպես ժամանակակից իրավական պետություններում հռչակված բարձրագույն արժեքի դերն ու տեղը

պետական կառույցների համակարգում, ճիշտ պատկերացում կազմեն քաղաքական իշխանության վերաբերյալ, ժանոթանան իրավունքի համակարգում ընդգրկված ճյուղերի հետ,

3. կարողանան որոշ տեսական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Քովանդակությունը.

Թեմա 1. Պետության և իրավունքի առաջացումը: Թեմա 2. Պետության էությունը, գործառույթները և ձևերը: Թեմա 3. Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: Թեմա 4. Սոցիալական նորմերի հասկացությունը և տեսակները: Թեմա 5. Իրավունքը և իրավագիտակցությունը: Թեմա 6. Օրինականությունը և իրավակարգը: Թեմա 7. Իրավունքի համակարգը: Թեմա 8. Իրավական պետություն: Թեմա 9. Սահմանադրական իրավունք: Թեմա 10. Սահմանադրական կարգ հասկացությունը:

S/բ1255 Տնտեսագիտություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության, սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին.
2. կիմանա տնտեսագիտական գիտելիքների դերն ու գործառույթները տնտեսության տարբեր ոլորտներում.
3. կկարողանա ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-տնտեսական քաղաքականություն փոխհարաբերությունները.
4. կիմանա առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում:

Քովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսագիտության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: Թեմա 2. Ապրանքային արտադրություն: Ապրանք և փող: Թեմա 3. Շուկայական տնտեսության ընդհանուր բնութագիրը: Թեմա 4. Տնտեսական համակարգեր: Տիպերը և մոդելները: Թեմա 5. Ֆիրման շուկայական հարաբերությունների համակարգում: Թեմա 6. Ձեռնարկատիրական կապիտալի ձևավորումը: Թեմա 7. Ծախքերի տեսությունը: Արտադրություն և ծախքեր: Թեմա 8. Շահույթ և շահութաբերություն: Ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ: Թեմա 9. Ազրո-արդյունաբերական համալիր: Ռենտայի տեսություն: Թեմա 10. Կուտակում, սպառում և խնայողություն: Թեմա 11. Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: Թեմա 12. Ինֆլյացիա և գործազրկություն: Թեմա 13. Դրամավարկային համակարգի էությունը: Բանկեր: Թեմա 14. Ֆինանսական համակարգ և ֆինանսական քաղաքականություն: Թեմա 15. Պետության սոցիալ-տնտեսական

քաղաքականությունը: Թեմա 16. Համաշխարհային տնտեսությունը և զարգացման օրինաչափությունները: Միջազգային արժույթային և ֆինանսական համակարգեր:

Փ/բ-0476 Քաղաքագիտություն

Ուսանողներին զինել գիտելիքներով քաղաքականության և նրա խնդիրների մասին: Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքների պաշարը: Գաղափար տալ հասարակության քաղաքական գործունեության, օրենքների և օրինաչափությունների մասին: Օգնել ուսանողներին՝ տեսական գիտելիքները օգտագործել գործնականում: Հիմք ստեղծել հասարակական մյուս գիտությունների հետագա ուսումնասիրության համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
2. տիրապետեն քաղաքագիտության հետազոտության մեթոդներին,
3. կարողանան ըմբռնել հասարակական քաղաքական համակարգի բնույթը,
4. կարողանան տարբերակել քաղաքագիտական տարբեր ուսմունքների առանձնահատկությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան, խնդիրները: Թեմա 2. Քաղաքականության սուբյեկտի էությունը և ձևերը: Թեմա 3. Հասարակության իրավաքաղաքական համակարգը, նրա տիպերը: Թեմա 4. Պետություն, նրա տիպերը և ձևերը: Թեմա 5. Քաղաքական իշխանություն: Թեմա 6. Հասարակական - քաղաքական կազմակերպություններ: Թեմա 7. Անցումային հասարակության քաղաքական համակարգ: Թեմա 8. Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ: Թեմա 9. Քաղաքական մշակույթ, ձևերը և ֆունկցիաները: Թեմա 10. Մարդու դերը քաղաքականության մեջ:

Կամընտրական դասընթաց-5

Փ-բ-1481 Մշակութաբանություն - 2 կրեդիտ

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդակից դարձնել համաշխարհային մշակույթի զարգացման ընթացքին և առանձին իրողություններին, ներկայացնել համաշխարհային մշակույթի պատմությունը և վերջինիս համատեքստում հայ ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները, ուսանողին զինել համապատասխան մեթոդիկայով՝ ճանաչելու, վերլուծելու և գնահատելու մշակութային առանձին երևույթներ, օգնել մշակելու գնահատման ազգային, անհատական և համամարդկային չափանիշներ, ինչպես նաև դրսևորել ինքնուրույն մոտեցումներ մշակույթի և նրա առանձին դրսևորումների նկատմամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մշակույթի բնորոշումը, ծագումը, զարգացման օրինաչափությունները, նյութական և հոգևոր մշակույթների առանձնահատկությունները, մշակույթի նեղ և լայն առումները
2. կկարողանա ինքնուրույն տարբերակել հոգևոր և նյութական մշակույթները, նկատել նրանց փոխադարձ անցումները և տարրերի փոխներթափանցումները
3. կկարողանա ընտրել մշակութային իրողությունների գնահատման չափանիշները
4. կկարողանա ճանաչել մշակույթի զարգացման օրինաչափությունները
5. կկարողանա մշակույթի առանձին դրսևորումները պատկերացնել համաշխարհային մշակույթի զարգացման համատեքստում
6. կկարողանա ճանաչել և առանձնացնել լոկալ մշակույթների տիպերը (ըստ տարածքի, ժամանակաշրջանի, ազգայինի և մշակույթի տվյալ
7. կտիրապետի մշակութաբանության հետազոտական-վերլուծական հինգ մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մշակութաբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության շրջանակները: Թեմա 2. Մշակույթի բնորոշումը: Թեմա 3. Մշակույթի գործառույթները: Թեմա 4. Մշակույթի լեզուն և կառուցվածքը: Ազգային և համամարդկային մշակույթ: Թեմա 5. Ջանգվածային և էլիտար մշակույթ: Թեմա 6. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Թեմա 7. Բնություն և մշակույթ: Թեմա 8. Հասարակություն և մշակույթ: Թեմա 9. Քաղաքակրթություն և մշակույթ: Արդի տեսությունները:

Պ/բ-0435 Հայ. պատմական և ճարտարապետական հուշարձաններ

Նպատակը.

Դասընթացի դասավանդման նպատակն է համակարգված ձևով ուսանողներին ներկայացնել հայ ժողովրդի հանճարով ստեղծված պատմա-մշակութային կոթողները, լուսաբանել նյութական մշակույթի այդ բնագավառի կազմավորումն ու զարգացումը, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև բնապատմական ու պատմա-մշակութային այն պայմանները, որոնք նպաստել կամ խոչընդոտել են այս ոլորտի զարգացմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Հայաստանի պատմական հուշարձանների պատմությունը, դրանց ուսումնասիրման խնդիրները, նպատակները, տեսակները, պատկերացում ունենա դրանցից յուրաքանչյուրի մասին:
2. կկարողանա գնահատել Հայաստանի պատմական հուշարձանների դերակատարումը համաշխարհային պատմական գործընթացում, բացահայտել Հայաստանի պատմական հուշարձանների հիմնական սկզբունքներն ու բովանդակությունը, վերլուծել Հայաստանի պատմական հուշարձանները դասընթացի ուսումնասիրման ընթացքում ձեռք բերած հաջողությունները և թերությունները, կատարել հետևություններ
3. կտիրապետի Հայաստանի պատմական հուշարձանների հիմնական խնդիրների, հասկացությունները, բնույթը, առարկան, ուսումնասիրման

մեթոդներն ու հնարները, ուսումնասիրման առանձնահատկությունների վերաբերյալ համակողմանի գիտելիքների:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայաստանի պատմա-մշակութային հուշարձանները վաղ միջնադարում (IV-VIIIդդ.): Թեմա 2. Հայաստանի պատմա-մշակութային հուշարձանները զարգացած միջնադարում: Թեմա 3. Հայաստանի պատմա-մշակութային հուշարձանները ուշ միջնադարում (XV-XVIIIդդ.): Թեմա 4. Հայաստանի պատմա-մշակութային հուշարձանները XIXդ. և XXդ. սկզբին: Թեմա 5. Պատմա-մշակութային հուշարձանները խորհրդային Հայաստանում:

Պ/բ-0435 Հայ առաքելական եկեղեցու պատմություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Հայաստանում Քրիստոնեության ընդունման և տարածման պատմությանը, ներկայացնել Հայ Առաքելական եկեղեցու գործունեություն հիմնադրաման օրվանից մինչև մեր օրերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
2. կտիրապետի հայ եկեղեցու դավանաբանական հարցերին և քույր եկեղեցիների հետ նրա առնչություններին
3. կարողանա կատարել հայ եկեղեցու պատմության վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն Վաղ քրիստոնեությունը: Թեմա 2. Նախաքրիստոնեական կրոններ: Թեմա -3. Քրիստոնեության ընդունման նախադրյալները Հայաստանում: Թեմա 4. Քրիստոնեության ընդունումը Հայաստանում որպես միակ և պետական կրոն: Թեմա 5. Եկեղեցական ժողովներ: /354թ. Աշտիշատի ժողովը/: Թեմա-6. Հայոց եկեղեցին 5-րդ դարում որպես Վարդանանց և Վահանանց պատերազմների ոգեշնչող: Թեմա-7. Հայոց եկեղեցին դավանաբանական դիրքորոշման շրջանում. /325թ. Նիկեայի, 381թ. Կոստանդնուպոլսի, 431թ. Եփեսոսի և 451թ. Քաղկեդոնի տիեզերական ժողովները: Թեմա -8. Հայոց եկեղեցին որպես հայ դպրության, պատմագրության և իմաստասիրության ձևավորողն ու զարգացնողը 5-14-րդ դդ: Թեմա -9. Հայոց եկեղեցին 6-15-րդ դդ.: Թեմա-10. Հայ Առաքելական եկեղեցին XIX- XX դարերում: Թեմա-11. Հայոց եկեղեցին Կիլիկյան Հայաստանի պայմաններում: Ունիթորներ և հակաունիթորներ: 1307թ. Սսի և 1309թ. Ադանայի ժողովները: Թեմա-12. Հայոց կաթողիկոսության վերահաստատումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում /1441թ./ Թեմա-13. Հայոց եկեղեցին թուրք-պարսկական տիրապետության շրջանում: Պոլսի պատրիարքարանը: Թեմա-14. Հայոց եկեղեցին ռուսական տիրապետության պայմաններում: 1836թ. մարտի 11-ի ցարական կառավարության որոշումը /Պոլոժենիե/ և 1903թ. հունիսի 12-ի որոշումը հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին: Խրիմյան Հայրիկ: Թեմա-15. Սիմեոն Երևանցու /1763-1780/ և Ներսես Աշտարակեցու /1843-1857/ գործունեությունը: Թեմա-16. Հայոց եկեղեցին առաջին աշխարհամարտի նախօրյակին: Կաթողիկոս Գևորգ 5-րդ Սուրենյանց: Թեմա-17. Հայոց եկեղեցին խորհրդային իշխանության հաստատումից հետո` 1920-1930-ական թթ.: Խորեն Ա Մուրադբեկյան Թեմա-18. Հայոց եկեղեցին Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Գևորգ 6-րդ Չորեքչյան /1938—1954/ Թեմա-19. Հայոց եկեղեցին ետպատերազմյան տարիներին /1945-1980-ական թթ./: Ամենայն Հայոց

Կաթողիկոս Վազգեն Ա Պալճյան /1955-1994թթ./ Թեմա-20. Հայոց եկեղեցին արդի փուլում:

Կանընտրական դասընթաց 6

Յ/ք-0304 Սոցիոլոգիա - 2 կրեդիտ

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության ուսումնասիրության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հասարակությունն իբրև համակարգ, դրա հիմնական տարրերը, դրանց միջև փոխկախվածության գործընթացները և վերահսկողության մեխանիզմները,
2. կկարողանա նախագծել սոցիալական որևէ երևույթի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության ծրագիր,
3. կտիրապետի սոցիոլոգիական հետազոտության մշակման հիմնական ձևերին, մեթոդներին, գործիքներին, վերլուծության եղանակներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Սոցիոլոգիան իբրև գիտություն: Թեմա 2. Սոցիոլոգիական հետազոտություն:

Թեմա 3. Հասարակություն: Թեմա 4. Մշակույթ: Թեմա 5. Սոցիալականացում:

Թեմա 6 Շեղվող վարք: Թեմա 7. Հասարակության սոցիալական կառուցվածքը:

Թեմա 8. Սոցիալական ստրատիֆիկացիա: Թեմա 9. Գլոբալացում:

Յ/ք -1184 Զբոսաշրջության սոցիոլոգիա

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ժամանակակից աշխարհի սպառման ոլորտների բացահայտումը: Գլոբալիզացիայի գործընթացները նպաստում են սպառման տարբեր ոլորտների նշանակության գերազանահատման: Զբոսաշրջությունը, որը նախկինում համարվում էր տնտեսության և մշակույթի երկրորդային ձև, վեր է անցնում կարևորագույն գործոններից մեկը երկրի տնտեսական զարգացման: Հենց մշակույթները աստիճանաբար դառնում են ավելի շարժունակ, կողմնորոշված նյութական ոլորտի զարգացմանը: Դասընթացը նվիրված է զբոսաշրջության նոր ոլորտների ուսումնասիրմանը, այլ կերպ ասած ուղղված է զբոսաշրջության զանգվածային ձևերի, գործունեության, զբոսաշրջիկների թաքնված մոտիվացիաների և նպատակների բացահայտմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա գիտելիքներ զբոսաշրջային սոցիոլոգիայի առաջացման պատմական անհրաժեշտության, վերջինիս ուսումնասիրման օբյեկտի, առարկայի, գործառույթների, հիմնականիսնդիքների վերաբերյալ,
2. կունենա գիտելիքներ ժամանցի, որպես ժամանակակից սոցիալական ծառայության բնութագրիչների վերաբերյալ,

3. կունենա գիտելիքներ զբոսաշրջության ուսումնասիրման սոցիոլոգիական տեխնիկաների, տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ:

Բովանդակությունը

Թեմա I. Ժամանցի սոցիոլոգիան, որպես սոցիոլոգիայի առանձին ճյուղ: Թեմա II. Զբոսաշրջային սոցիոլոգիան, որպես գիտական դիսցիպլին. առաջացումը և զարգացումը: Թեմա III. Զբոսաշրջությունը որպես սոցիալմշակութային երևույթ և դրա ինստիտուցիոնալ բնութագրիչները: Թեմա IV. Զբոսաշրջության ոլորտում սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանությունը, ուղղությունը և տեխնոլոգիաները:

I. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ

ԻՏՄՄ/բ-1366 Համակարգչից օգտվելու հնտություններ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (8 ժամ դասախոսություն և 24 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և աշխատանքի հիմնական սկզբունքներին: Ուսանողի մոտ ձևավորել համակարգչից օգտվելու հիմնական հնտությունները: Ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիսականա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները.
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնութ-յունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները.
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

Բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: Գաղափար ինֆորմացիայի մասին: Ինֆորմացիայի չափի միավորները: Թեմա 2. Հաշվողական տեխնիկայի էվոլյուցիան: Պրոցեսոր: Թեմա 3. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Թեմա 4. Ներքին և արտաքին հիշողություն: Թեմա 5. MS Office ծրագրային համակարգը (MS Word, Excel ծրագրեր):

Մ/բ-0578 Մաթեմատիկա (6 կրեդիտ)

Շաբաթական 4.5 ժամ (42 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ վերլուծական երկրաչափությունից, դիֆերենցիալ հաշվից, ինտեգրալ հաշվից, շարքերի տեսությունից, դիֆերենցիալ հավասարումներից, հավանականությունների տեսությունից և մաթեմատիկական վիճակագրությունից:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պետք է կարողանա վերլուծական երկրաչափության մեթոդները կիրառել չափագրական խնդիրներում.
2. հետազոտել և կառուցել ֆունկցիայի գրաֆիկ:
3. կկարողանա հաշվել պատկերի մակերես, մարմնի ծավալ, կորերի աղեղների երկարություններ.
4. կազմել և լուծել մասնագիտական խնդիրներից առաջացող դիֆերենցիալ հավասարումներ.
5. կատարել մոտավոր հաշվումներ.
6. կատարել փորձնական դիտումների վիճակագրական վերլուծություն:

Թեմա 1 Վերլուծական երկրաչափության և գծային հանրահաշվի տարրեր:
Թեմա 2 Սահմանների տեսություն ֆունկցիայի սահմանը: Անընդհատություն

Թեմա 3 Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հա

Թեմա 4 Մեկ փոփոխականի ֆունկցիայի ինտեգրալ հաշիվ:

Թեմա 5 Շարքեր

Թեմա 6 Դիֆերենցիալ հավասարումներ

Թեմա 7 Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրեր

Ֆ/բ 1351 Ֆիզիկա (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն և 24 ժամ լաբորատոր պարապմունք), ստուգարք Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել էլեկտրականության, մագնիսականության և օպտիկայի հիմնական օրենքներին, դրանց առնչվող հիմնական փորձերին, ներկայացնել այդ օրենքները դիֆերենցիալ և ինտեգրալային տեսքերով, գաղափար տալ նրանց հիմնական կիրառությունների մասին: Կրթական արդյունքները.

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էլեկտրականության, մագնիսականության և օպտիկայի հիմնական օրենքները, դրանց առնչվող կարևորագույն փորձերը, երևույթները,
2. կիսականա այդ երևույթների, փորձերի, օրենքների կապը, օրենքների համակարգի ներքին տրամաբանությունը, այդ համակարգից բխող հիմնական հետևությունները և արդյունքները,
3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:

Քովանդակությունը.

Թեմա 1` էլեկտրական դաշտը վակուումում և միջավայրում:

Թեմա 2` էլեկտրական հոսանք:

Թեմա 3` Մագնիսական դաշտը վակուումում և միջավայրում:

Թեմա 4` էլեկտրամագնիսական մակածում և քվազիստացիոնար երևույթներ:

Թեմա 5` Մաքսվելի հավասարումների համակարգը:

Թեմա 6` էլեկտրամագնիսական տատանումներ և ալիքներ:

Թեմա 7` Լույսի ինտերեֆերենցը:

Թեմա 8` Լույսի դիֆրակցիան:

Թեմա 9` Լույսի բևեռացումը:

Թեմա 10` Լուսի փոխազդեցությունը նյութի հետ, ոչ գծային օպտիկա:

Ք/բ 0750 Քիմիա (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24 ժամ դասախոսություն և 24 ժամ լաբորատոր պարապմունք), ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակը` - ուսանողի մոտ ձևավորել որոշակի պատկերացում քիմիայի քանակաչափական օրենքների, քիմիական կապի տեսակների, լուծույթների տեսության, նյութի կառուցվածքի, քիմիական պրոցեսների ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների, տարրերի հատկությունների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

կկարողանա կատարել ընդհանուր քիմիայի բաժնին վերաբերվող փորձեր և լուծել խնդիրներ.

կձևավորվի որոշակի պատկերացումներ երկրակեղևում քիմիական տարրերի անհամաչափ բաշխման մասին:

կտիրապետի տարրերի ատոմների կառուցվածքի և տարրերի հատկությունների միջև գոյություն ունեցող օրինաչափությունները:

Քովանդակությունը.

Թեմաներ`

1. Ատոմի կառուցվածքը, ատոմային սպեկտորներ
2. Ռադիոակտիվություն
3. Բորի տեսության զարգացումը
4. Հունդի կանոնը, ատոմներում էներգետիկ մակարդակների լրացման հաջորդականությունը: Կլեչկովսկու կանոնը
5. Քիմիական թերմոդինամիկա
6. Թերմոդինամիկայի I,II,III, օրենքները
7. Քիմիական կինետիկա
8. Ռեակցիայի արագություն, արագության հաստատում, ռեակցիայի կարգ և մոլեկուլյարություն
9. Քիմիական կինետիկայի տեսությունը

10. Պարբերական համակարգի գլխավոր ենթախմբերի էլեմենտների քիմիա (I,II,III,IV,V,VI,VII,VIII)
11. Երկրորդական ենթախմբի էլեմենտների քիմիան
12. Էլեմենտների գեոքիմիական դասակարգումը
13. Օգտակար հանածոների փնտրման գեոքիմիական մեթոդները
14. Էլեմենտների միգրացիան
15. Մեխանիկական միգրացիա
16. Ֆիզիկո – քիմիական միգրացիա
17. Տեխնոգեն միգրացիա

Կ/բ-0913 Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ: Բնագիտության արդի հիմնախնդիրները - 2 կրեդիտ

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է . Խորացնել գիտելիքները և ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ «Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ» առարկայի վերաբերյալ, կրթել բնապահպանական և բնագիտական գիտելիքներով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1.կտիրապետի բնապահպանական, էկոլոգիական գիտելիքներին և մեթոդներին,
- 2.կկարողանա ճիշտ դաստիարակել աճող սերնդին էկոլոգիական և բնապահպանական կրթությամբ ու դաստիարակությամբ,
- 3.ճիշտ կուսուցանի շրջակա միջավայրը անաղարտ պահելու և գալիք սերունդներին փոխանցելու համար:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Էկոլոգիան որպես գիտություն: ԹԵՄԱ 2. Բնակության միջավայր: ԹԵՄԱ 3. Էկոլոգիական գործոններ: ԹԵՄԱ 4. Տեղախմբային էկոլոգիա: ԹԵՄԱ 5. Կենսահամակարգ: ԹԵՄԱ 6. Էկոհամակարգեր: ԹԵՄԱ 7. Կենսոլորտը որպես կենդանի համակարգերի կազմավորման բարձր մակարդակ:ԹԵՄԱ 8. Էկոլոգիական համերկրային հիմնախնդիրներ, բնօգտգործում, բնապահպանություն: ԹԵՄԱ 9. Բնապահպանության հիմնահարցերը և խնդիրները:ԹԵՄԱ 10. Դոլոլորտ (լիթոսֆերա): ԹԵՄԱ 11. Զրոլորտ (հիդրոլորտ): ԹԵՄԱ 12. Մթնոլորտ (աթմոսֆերա): ԹԵՄԱ 13. Բուսական աշխարհ (ֆլորա): ԹԵՄԱ 14. Կենդանական աշխարհ (ֆաունա): ԹԵՄԱ 15. Բնական պաշարների օգտագործման, պահպանության և հարստացման խնդիրները: ԹԵՄԱ 16. Մարդու բնապահպանություն:

ԿևՖ/բ-0875 Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր - 2 կրեդիտ

Շաբաթական 3 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ բնական աղետների, վթարների և հակառակորդի կողմից հարձակման ժամանակակից միջոցների կիրառման հետևանքներից պաշտպանելու ձևերի և մեթոդների իմացություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնակչության և քաղաքացիական պաշտպանության հիմունքները,
2. կտիրապետի հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցներից, բնական աղետներից և վթարներից բնակչության պաշտպանության եղանակներին ու միջոցներին,
3. կկարողանա կազմակերպել և իրականացնել պարապմունքներ հանրակրթական դպրոցների ցածր դասարանների աշակերտների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1. ԱԻ-ում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության կառավարման պետական միասնական համակարգը: Թեմա 2. ԱԻ, նրանց դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղղիները: Թեմա 3. ԱԻ, նրանց դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղղիները: Թեմա 4. Հարձակման ժամանակակից զանգվածային և սովորական միջոցները: Թեմա 5. Քիմիական վարագման օջախները և քիմական իրադրությունների գնահատման մեթոդները: Թեմա 6. Քիմիական վարագման օջախները և քիմական իրադրությունների գնահատման մեթոդները: Թեմա 7. Ճառագայթային վարակման օջախները և ճառագ. իրադրության գնահատ. մեթոդները: Թեմա 8. Ճառագայթային վարակման օջախները և ճառագ. իրադրության գնահատ. մեթոդները: Թեմա 9. ԱԻ-ում և պատերազմների ժամանակ բնակչ. պաշտպանության հիմնական եղանակները, ձևերը և միջոց. կազմակերպումը: Թեմա 10. ԱԻ-ում և պատերազմների ժամանակ բնակչ. պաշտպանության հիմնական եղանակները, ձևերը և միջոց. կազմակերպումը: Թեմա 11. Պատերազմների ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպումը: Թեմա 12. Արտ. իրավիճակների ռիսկի գնահատումը: Թեմա 13. ԱԻ և ՔՊալանների կազման հարցերը: Թեմա 14. ԱԻ-ում օպերատիվ միջոց.-ի կազմ.-ումը: Թեմա 15. Հանրակրթական դպրոց.-ի համակարգի խնդիրները՝ բնակչ. և ք.պ. բնագավառում: Թեմա 16. ԱԻ-ում և պատ. ժամանակ ուսումնական հաստատություն. գործունեության կայուն. բարձրացման ուղղիները և եղանակները: Թեմա 17. Բնակչ.-ն ՔՊ հարցերով ուսուց. կազմ.-ումը: Թեմա 18. ԱԻ-ում և ռազմ. դրության ժամ. բնակչութ. բարոյա-հոգ. պատրաստման հարցերը: Թեմա 19. ԱԻ-ում և ռազմ. դրության ժաման. դպրոց. օբյեկտ. Փ.Ա.Վ.Վ. աշխատ. կազմակերպ.-ը: Թեմա 20. ԱԻ-ում և ռազմ. դրության ժաման. դպրոց. օբյեկտ. Փ.Ա.Վ.Վ. աշխատ. կազմակերպ.-ը: Այցելություն փրկարարական ջոկատ: Թեմա 21. Հանրակ. դպրոց.-ում 2-րդ, 5-րդ և 6-րդ դաս - սարանների աշակերտների հետ ԱԻ և ՔՊ հիմնահարցերով պարապ. անց մեթոդիկան: Գործնական պարապմունք սոսմիկ կայանում: Թեմա 22. Գործնական պարապմունք սոսմիկ կայանում:

Կամընտրական դասընթացներ

Ընտրովի առարկա

Կ /բ-0876 Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում - 2 կրեդիտ

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

6-րդ կիսայակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հիվանդներին և տուժածներին գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար , ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կատարել վիրակապում, բեկակալի տեղադրում,
2. կկարողանա կատարել ստամոքսի լվացում, հոգնա,
3. կկարողանա կատարել ջերմաչափում, պուլսի որոշում, Ձ/ ճ չափում,
4. կկարողանա կատարել այրվածքի մակերեսի և խորության որոշում,
5. կկարողանա կատարել առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժածների մոտ,
6. կկարողանա կատարել արյունահոսության ժամանակավոր դադարեցում:

Բովանդակությունը

ԹեՄԱ 1. Հասկացություն հիվանդության մասին: Տուժածի քննության մեթոդները:
ԹեՄԱ 2. Վերակենդանացման միջոցառումներ: ԹեՄԱ 3. Թունավորումներ: ԹեՄԱ 4. Վնասվածքներ: ԹեՄԱ 5. Ջերմային խանգարումներ: ԹեՄԱ 6. Արյունահոսություններ: ԹեՄԱ 7. Վիրակապություններ: Վիրակապություններ: ԹեՄԱ 8. Առողջ ապրելակերպի կանոնները: ԹեՄԱ 9. Ինֆեկցիոն հիվանդություններ: ԹեՄԱ 10. Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ:

Կ/բ-1426 Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն - 2 կրեդիտ

Շաբաթական 2 ժամ (18 ժամ դասախոսություն, 14 ժամ գործնական)

6-րդ կիսայակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողների տալ գիտելիքներ առողջ ապրելակերպի կանոնների , արտակարգ իրավիճակներում գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու մասին: Դասընթացի խնդիրն է զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կատարել վիրակապում, բեկակալի տեղադրում,
2. կկարողանա կատարել ստամոքսի լվացում, հոգնա,
3. կկարողանա կատարել ջերմաչափում, պուլսի որոշում, Ձ/ ճ չափում,
4. կկարողանա կատարել այրվածքի մակերեսի և խորության որոշում,

5. կկարողանա կատարել առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժածների մոտ,
6. կկարողանա կատարել արյունահոսության ժամանակավոր դադարեցում:
Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Հասկացություն հիվանդության մասին: Տուժածի քննության մեթոդները:
 ԹԵՄԱ 2. Վերակենդանացման միջոցառումներ: ԹԵՄԱ 3. Թունավորումներ: ԹԵՄԱ 4. Վնասվածքներ: ԹԵՄԱ 5. Ջերմային խանգարումներ: ԹԵՄԱ 6. Արյունահոսություններ: ԹԵՄԱ 7. Վիրակապություններ: ԹԵՄԱ 8. Առողջ ապրելակերպի կանոնները: ԹԵՄԱ 9. Ինֆեկցիոն հիվանդություններ: ԹԵՄԱ 10. Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ:

III Ընդհանուր մասնագիտական առարկաներ

ԲԱ/Բ 1491 Երկրաբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3.5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ լաբորատոր)
 2-րդ կիսայակ, քննություն

Նպատակը.

Երկրաբանություն դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ երկրագնդի ներքին և արտաքին կառուցվածքների մասին, աշխարհագրական թաղանթի բաղադրիչների, նրանց փոխկապակցվածության ու ձևավորման օրինաչափությունների բացահայտման մասին: Ինչպես նաև.

1. Աշխարհագրական գիտելիքների ստացում երկրի մասին
2. Երկրագնդի ձևավորման պատմության բացահայտում
3. Ռելիեֆի ձևերի ու երկրաբանական կառուցվածքների կապերի բացահայտում
4. Հանքատեսակների և ապարների ճանաչումը և աշխարհագրական տեղաբաշխումը
5. Երկրաբանական կառուցվածքների տեսակների և զարգացումնան մասին գիտելիքների ստացում:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- կարողանա բնութագրել երկրի ներքին կառուցվածքը
- կարողանա բնութագրել հանքատեսակ ու ապարատեսակ հասկացողությունները
- կարողանալ բնութագրել պլատֆորմները և գեոսինկլինալները
- իմանա երկրաժամանակագրական աղյուսակը
- գաղափար կազմել երկրադինամիական երևույթների մասին
- կարողանա կազմել քարտեզներ հանքատեսակների հանքավայրերի, երկրաշարժերի և հրաբուխների աշխարհագրական տեղաբաշխման վերաբերյալ:

Բովանդակությունը

Թեմա1: Ներածություն.

Երկրաբանություն առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները: Երկրաբանական գիտությունների ուղղությունները և նրանց կապը: Երկրաբանության կապը աշխարհագրական այլ գիտությունների հետ:

Թեմա2: Միներալոգիա, պետրոգրաֆիա և բյուրեղագիտություն

Միներալ (հանքատեսակ), նրա սահմանումը, հատկանիշները դասակարգումը, բնության մեջ հանդես գալու ձևերը: Լեռնային ապարներ, նրանց տեսակները, դասակարգումը: Բյուրեղ, նրա սահմանումը: Անիզոտրոպություն և իզոտրոպություն: Սիմետրիա, նրա էլեմենտները:

Թեմա 3: Երկրագնդի կառուցվածքը

Երկրակեղևի կազմը և կառուցվածքը: Երկրագնդի ներքին կառուցվածքը:

Թեմա 4: Երկրադինամիկական երևույթները

Էնդոգեն և էկզոգեն պրոցեսները: Մագմատիզմ, էֆուզիվ և ինտրուզիվ մագմատիզմ: Երկրակեղևի տեկտոնական շարժումները: Ծալքավոր շարժումներ: Երկրաշարժեր: Մետամորֆիզմ: Երկրակեղևի դանդաղ շարժումներ: Հրաբխականություն:

Հողմահարում: Քամու, հոսող ջրերի և ստորերկրյա ջրերի երկրաբանական գործունեությունը: Օվկիանոսների, ծովերի, լճերի, սառցադաշտերի, ճահիճների երկրաբանական գործունեությունը:

Թեմա 5: Երկրակեղևի երկրաբանական պատմությունը:

Գեոսինկլինալներ, պլատֆորմներ: Օվկիանոսի հատակի կառուցվածքը: Երկրի երկրաբանական պատմությունը և տարեգրությունը, պատմության գլխավոր էտապները: Երկրի երկրաբանական պատմությունը մինչքեմբրում: Երկրաբանական պատմությունը պալեոզոյում: Երկրի երկրաբանական պատմությունը մեզոզոյում: Հնէաշխարհագրությունը մեզոզոյում: Երկրի երկրաբանական պատմությունը կայնոզոյում: Երկրի երկրաբանական պատմությունը չորրորդականում:

ՔԱ/բ 0939 Երկրագիտություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3.5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով Երկրի ֆիզիկաաշխարհագրական երևույթների մասին, խորացնել և ընդլայնել ուսանողների գիտելիքները մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի, կենսոլորտի մասին, գաղափար տալ Երկրի լանդշաֆտային թաղանթի ձևավորման հիմնական տարրերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- Պետք է գիտենա Երկրի ձևի, չափերի վերաբերյալ, երկիր ոլորտային կառուցվածքի, աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող ֆիզիկաաշխարհագրական երևույթների մասին, աշխարհագրական թաղանթի միասնականության և այնտեղ տեղի ունեցող երևույթների փողկապակցության մասին
- կկարողանա գործնականում ֆիզիկաաշխարհագրական երևույթները բնության մեջ պատկերացնել, դրանց առաջացման պատճառները իմանալ և ճիշտ գնահատել
- կկարողանա ուրվագծային քարտեզների վրա պատկերել հուլիսյան և հունվարյան իզոթերմները, կկարողանա ուրվագծային քարտեզների վրա պատկերել կլիմայական գոտիները, օվկիանոսային հոսանքները, տեղումների բաշխվածությունը երկրի վրաբնական զոնաները
- տիրապետի երկրագիտության ժամանակակից և նորագույն ձեռքբերումներին, ֆիզիկաաշխարհագրական երևույթների վերլուծությանը, երկրի ոլորտային կառուցվածքի փոխկապակցվածությունը, արտաքին և ներքին ուժերի կապն ու ազդեցությունը լանդշաֆտային թաղանթի ձևավորման գործում, երկրի մակերևույթի առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա1 Ընդհանուր երկրագիտությունն առարկան, նրա բովանդակությունը, նշանակությունը և խնդիրները:

Թեմա2 Երկրի ձևի, չափերի և օրական պտույտի՝ աշխարհագրական նշանակությունը:

Երկրի մակերևույթի կառուցվածքի հիմնական գծերը

Թեմա3 Մթնոլորտի բաղադրությունն ու կազմը:/ Մթնոլորտի սահմանումը և բարձրությունը:

Մթնոլորտի խոնավության ռեժիմն ու բաշխումը երկրի լանդշաֆտային թաղանթում:/ Օդի խոնավությունը :

Թեմա4 Երկրի ջերմային ռեժիմը:/ Արեգակ: Արեգակնային ռադիացիայի տատանումները: Տարվա եղանակների հերթափոխը:

Թեմա5 Ծովային հոսանքները իբրև կլիմայական գործոն հոսանքները:

Թեմա6 Կլիման և նրա ձևավորումը:/ Եղանակ: Կլիման և նրա որոշ էլեմենտները: Կլիմայի տատանումները և փոփոխությունները/:

Թեմա7 Հողմահարություն:/ Հողմահարման էությունը: Ֆիզիկական հողմահարությունը: Քիմիական հողմահարությունը: Հողմահարության արագությունը: Հողմահարման դերը: Աշխարհագրական օրինաչափությունները և դերը հողմահարման պրոցեսում/:

Թեմա8 Քամու դերը լանդշավտային թաղանթի ձևավորման մեջ:

Սորերկրյա ջերի դերը երկրագնդի լանդշավտային թաղանթում:/ Ստորերկրյա ջրերը նրանց շարժումը: Ստորերկրյա ջրերի գործունեությունը: Կարստային երևույթներ/:

Թեմա9 Հոսող ջրերի դերը երկրի լանդշավտային թաղանթում:/ Գետերը և կլիման: Գետերի ռեժիմը: Գետերի կլասիֆիկացիան, էռոզիան: Գետերի ակունուլիատիվ գործունեությունը/:

Թեմա10 Լճերի և ճահիճների դերը լանդշաֆտային թաղանթում: /Լճերը, նրանց ծագումը: Աղի և անուշահամ լճեր: Լճերի մակարդակի տատանումները: Լճերի աշխարհագրական տարածումը: Լճերի աշխարհագրական նշանակությունը: Գահիճներ նրանց տեղը երկրի լանդշաֆտային թաղանթում:/

Թեմա11 Հողագոյացման պրոցեսը

Թեմա12 Երկրի ներքին կառուցվածքը : / Երկրի ընդերքը: Երկրագնդի ներքին մասերի ջերմային վիճակը: Երկրի ներքին էներգիայի ազդեցությունը լանդշաֆտային թաղանթի ձևավորման վրա: Էկզոգեն և էնդոգեն պրոցեսների փոխազդեցությունը երկրի մակերեսի ռելիեֆի խոշոր ձևերի առաջացման մեջ:/ Էկզոգեն և էնդոգեն պրոցեսների փոխազդեցության հետևանքները: Ռելիեֆը որպես կլիմայացնող գործոն :/ Ռելիեֆը և ջերմային պայմանները: Ռելիեֆը և օդի շարժումները: Ռելիեֆը և մթնոլորտային խոնավությունը: Կլիմայական ուղղաձիգ գոտիները/:

Թեմա13 Սառցադաշտեր և բազմամյա սառածություն:/ Երկրա•նդի ժամանակակից սառցապատումը: Սառցադաշտերի ձևավորումը և կյանքը: Սառցադաշտերի տիպերը և նրանց էվոլյուցիան: Սառցադաշտերի աշխարհա•րական նշանակությունը: Երկրակեղևի սառցապատումը:Հավերժական սառածության աշխարհագրական նշանակությունը/:

Թեմա14 Ընդհանուր հասկասողություն երկրի ընդհանուր դերի մասին:Բույսերը և աշխարհագրական միջավայրը:Կենդանիները և աշխարհագրական միջավայրը: Մարդը և և աշխարհագրական միջավայրը: Երկրի լանդշաֆտային թաղանթի զարգացումը: Երկրի աշխարհագրական ընդհանուր օրինաչափությունները: Աշխարհագրական լանդշաֆտ:

ԲԱ/Բ 0914 Ջրաբանություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3.5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ լաբորատոր)

3-րդ կիսայակ, քննություն

Նպատակը.

Ջաբանությունն դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ երկրագնդի ջրային ոլորտի, նրա բաղադրիչների՝ օվկիանոսների, ծովերի, ծոցերի, լճերի, գետերի, սառցադաշտերի, ստորերկրյա ջրերի և ճահիճների մասին: Պարզաբանել ջրային միջավայրում տեղի ունեցող ֆիզիկաաշխարհագրական պրոցեսները ինչպես նաև վեր է հանվում նրանց առանձնահատկությունները և ցույց տալ ջրային օբյեկտների տնտեսական նշանակությունը:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- կարողանա բնութագրել երկրի ջրային թաղանթը
- կարողանա բնութագրել օվկիանոս, ծով, լիճ, գետ, ջրվեժ, սահանք հասկացողությունները
- կարողանա պարզաբանել ջրոլորտի ֆիզիկաաշխարհագրական երևույթները
- բացահայտել ջրային օբյեկտներում գոյություն ունեցող աշխարհագրական օինաչափությունները
- գնահատել ջրային օբյեկտների տնտեսական ու բնապահպանական խնդիրները

Բովանդակություն

Թեմա 1:Ներածություն: **Ջրաբանության** առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները: Գաղափար ջրոլորտի մասին, գիտությունների ուղղությունները և դրանց կապը այլ գիտություններին հետ:

Թեմա 2: Ջրի դերը երկրագնդի կյանքում: Ջրի մոլեկուլի կառուցվածքը: Ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունները

Թեմա 3: Ջրի շրջապտույտը բնության մեջ: Ջրի շրջապտույտի սխեմաները: Ներցամաքային շրջանառություն: Ջրի շրջապտույտի էներգիան:

Թեմա 4: Ստորերկրյա ջրեր:

Ընդհանուր դրույթներ: Բեկորատված ապարների ջրային հատկությունները: Բազմամյա սառածություն: Ստորերկրյա ջրերի ծագումն ու սնումը: Ստորերկրյա ջրերի տեղադրումը: Ջրաերկրաբանական հանույթը: Ստորերկրյա ջրերի վարքը: Ստորերկրյա ջրերի զուլալ տարածումը: Աղբյուրներ: Հանքային ջրեր: Արտեզրյան ջրեր: Ստորերկրյա ջրերի դերը տնտեսության մեջ:

Թեմա 5: Գետեր:

Ընդհանուր հասկացություններ: Գետի ավազան, ջրբաժան գիծ, գետահովիտ, հուն, ողողատ: Գետերի սնումը: Գետերի ջրային վարքը: Գետի ծախսը: Վարարումներ և սելավներ: Հոսքը և նրա բնութագրիչները: Գետերի էներգիան: Ջրվեժներ, սահանքներ, գետեբերանարային պրոցեսներ:

Թեմա 6: Սառցադաշտեր:

Չյան գիծ: Սառցադաշտերի առաջացումն ու շարժումը: Սառցադաշտերի վարքը, դասակարգումը, տարածումը և նշանակությունը:

Թեմա 7:Լճեր:

Լճի բնորոշումը, հիմնական տարրերը: Լճային գոգավորությունների առաջացումը: Լճերի մակարդակը և վարքը: Ալիքավորում և լճային հոսանքներ: Լճերի ջերմային պայմանները և սառցակալումը: Լճերի աղիություն, կենսական պայմանները, տարածումը:

Թեմա 8: ճահիճներ:

Նրանց առաջացումը, տարածումը և ջրային վարքը:

Թեմա 9: Համաշխարհային օվկիմոս (ՀՕ)

Ընդհանուր տեղակություններ: Օվկիմոսների ծագումը: ՀՕ-ի միասնությունը, նրա մասնատումը: Ծովեր, ծոցեր, նեղուցներ: ՀՕ-ի հատակի ռելիեֆը: ՀՕ-ի աղիությունը, ջրի խտությունը և ջեմային պայմանները: Սառույցներում և օվկիմոսներում և ծովերում: Ալիքավորումը ՀՕ-ում: Ցունամի: Մակընթացություն և տեղատվություն: Մակարդակը: Օվկիմոսային և ծովային հոսանքներ: Կյանքը ՀՕ-ում: Օվկիմոսների տնտեսական ու պաշտպանական նշանակությունը:

S/բ-0522 Տնտեսական և սոցիալական աշխարհագրություն - 5 կրեդիտ

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացը գիտելիքներ է տալիս հասարակական աշխարհագրության հիմնական հասկացությունների՝ աշխատանքի աշխարհագրական բաժանում ԱԱԲ, տնտեսական շրջանների ձևավորման, համաշխարհային տնտեսության, քաղաքների առաջացման, գլոբալացման, գիտատեխնիկական առաջընթացի ԳՏԱ, աշխարհաքաղաքականության, համաճորակային հիմնախնդիրների, «կանաչ հեղափոխություն», երկների դասակարգում վերաբերյալ: Բացահայտում է գիտության անցած պատմական ուղին, նախանշում ճյուղային տնտեսաաշխարհագրական գիտությունների ուսումնասիրման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա

- կատարել շրջանների առանձնացում ըստ տարբեր հատկանիշների,
- տարբերել տնտեսության առանցքային, տեղական նշանակության, միջազգային նշանակության մասնագիտացման ճյուղերը,
- կարողանա տարբերակել տարծքային տեղբաշխման գործոններ և սկզբունքներ հասկացությունները,
- իրականացնել տնտեսական շջանացում

Բովանդակությունը.

Թեմա 1 Տնտեսական սոցիալ-քաղաքական աշխարհագրության առարկան, ուսումնասիրման մեթոդները, կապը մյուս գիտությունների հետ:

Թեմա 2 Տնտեսական, սոցիալ քաղաքական աշխարհագրության կառուցվածքը:

Թեմա 3 Արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունները, սկզբունքները և գործոնները:

Թեմա 4 Աշխարհագրական դիրքը, որպես տնտեսական, սոցիալական աշխարհագրության հիմնական բախկացուցիչ:

Թեմա 5 Աշխատանքի աշխարհագրական բաժանում ԱԱԲ:

Թեմա 6 Համաշխարհային տնտեսության ելությունը, ձևավորման և զարգացման փուլերը:

Թեմա 7 Շրջան տերմինի ելությունը, տնտեսական շրջանի դերը երկրի տնտեսական համակարգում: Տնտեսական շրջանացման ելությունը:

Թեմա 8 Տնտեսական մասնագիտացում հասկացության ելությունը, երկների մասնագիտացման նախադրյալները:

Թեմա 9 Ենթակառուցվածքների դերը տնտեսության տեղաբաշխման վրա:

Թեմա 10 ՉՏՀ էությունը, դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա:

Թեմա 11 Գլոբալացման էությունը և դրա ազդեցությունը տնտեսության վրա:

Թեմա 12 Աշխարհաքաղաքականություն հասկացության էությունը և հիմնական տեսությունները:

ԲԱ/բ 0916 Գեոմորֆոլոգիա (4 կրեդիտ)

Շաբաթական 3.5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար)
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեսական և պրակտիկ գիտելիքներ երկրի մակերևույթի ռելիեֆի ձևավորման զարգացման վերաբերյալ: Դասընթացը ծանոթացնում է ուսանողներին ռելիեֆի ձևավորման էնդոգեն և էկզոգեն գործոնների, ինչպես նաև գեոմորֆոլոգիական դաշտային հետազոտությունների, նրա մեթոդների և ձևերի հետ: Ուսանողը ծանոթանում է գեոմորֆոլոգիական քարտեզագրության առանձնահատկությունների, մեթոդների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա էնդոգեն ռելիեֆը տարբերել էկզոգեն ռելիեֆից:
- կկարողանա ռելիեֆի տիպերը որոշել ըստ ծագման և ձևավորման առանձնահատկությունների
- կկարողանա դաշտային հետազոտություններ կատարել և հավաքագրել ռելիեֆի ձևաբանությանը և ձևաչափությանը վերավերվող տվյալներ
- կկարողանա կազմել գեոմորֆոլոգիական ինչպես ընդհանուր, այնպես էլ թեմատիկ քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա-1 «Գեոմորֆոլոգիա» առարկան, մեթոդը և խնդիրները:

Թեմա-2 Ընդհանուր տեղեկություններ ռելիեֆի վերաբերյալ

Թեմա-3 Էնդոգենեզ և ռելիեֆառաջացում

Թեմա-4 Էկզոգենեզ և ռելիեֆառաջացում

Թեմա-5 Գեոմորֆոլոգիական դաշտային հետազոտություններ և գեոմորֆոլոգիական քարտեզագրություն:

ԲԱ/բ 0900 Օդերևութաբանություն և կլիմայագիտություն (5 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ լաբորատոր)
3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին գինել գիտելիքներով մթնոլորտի կառուցվածքի, կլիմայի տիպերի, եղանակի կանխատեսման եղանակների, օդերևութաբանական տարրերի միջև գոյություն ունեցող փոխկապակցվածության ու օրինաչափությունների մասին: Նախապատրաստել ֆիզիկաաշխարհաօրական գիտությունների ցիկլի առարկաների (երկրագիտություն, մայրցամաքների ֆիզիկական աշխարհագրություն և այլն) հետագա ուսումնասիրություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
2. տիրապետեն աշխարհագրական հետազոտությունների, սինօպտիկական վերլուծության մեթոդներին,
3. կարողանան կատարել եղանակային կարճաժամկետ կանխատեսումներ, կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1 Ներածություն:

- Ներածություն: Առարկայի նշանակությունը: Պատմությունից:
- Ջերմաչափի գյուտը Գ. Գալիլեյի կողմից: Տորիչելլիի սնդիկային բարոմետրը:
- Օդերևութաբանության զարգացումը: Լոմոնոսով, Կարամզին, Բրունով, Մենդելեև, Վոյեյկով, Խռոմով և այլն:
- Օդերևութաբանության կապը այլ գիտությունների հետ:
- Օդերևութաբանության հիմնական բաժինները, մթնոլորտի ֆիզիկա, սինօպտիկական օդերևութաբանություն և կլիմայագիտություն:

Թեմա 2 Ընդհանուր օդերևութաբանություն:

Թեմա 3 Սինօպտիկական օդերևութաբանություն

Թեմա 4 Կլիմայագիտություն

ԲԱ/Բ 0898 Տեղագրություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3,5 ժամ (32 ժամ դասախոսություն և

24 ժամ լաբորատոր պարապմունք),

1-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տեսական և պրակտիկ ամուր գիտելիքներ՝ կատարելու տոպոգրաֆիական հանույթ՝ կիրառելով ժամանակակից սարքեր, սարքածրագրային համակարգեր և տեխնոլոգիաներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա այն ամբողջական տեխնոլոգիան և ժամանակակից սարքերը, որոնց միջոցով հնարավոր է կատարել ցանկացած տարածքի տոպոգրաֆիական հանույթ,
2. կկարողանան տեսական և դաշտային արդյունքի հիման վրա ստեղծել տեղանքի մակերևույթի ճշգրիտ հատակագիծը,
3. ձեռք կբերի տեսական և պրակտիկ գիտելիքներ՝ հմտորեն օգտագործելու ժամանակակից անհրաժեշտ գեոդեզիական սարքերը և գործիքները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տեղագրական պլան և քարտեզ: Թեմա 2՝ Ընդհանուր տեսություն գեոդեզիական հանույթի վերաբերյալ: Թեմա 3՝ Համառոտ տեղեկություն սխալների տեսության վերաբերյալ: Թեմա 4՝ Կողմնորոշում տեղանքում: Թեմա 5՝ Անկյունաչափական և գծաչափական գործիքներ և սարքեր: Թեմա 6՝ Պլանային հանույթ: Թեմա 7՝ Երկրաչափական նիվելիրացում: Թեմա 8՝ Տախիոմետրական հանույթ:

ՔԱ/բ 0911 «Հողերի աշխարհագրություն՝ Հողագիտության հիմունքներով» (5 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ լաբորատոր)
2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Հողերի աշխարհագրություն դասընթացի նպատակն է բացահայտել երկրագնդի վրա հողերի տարածման օրինաչափությունները: Տիրապետել հողագիտության օրենքներին, սկզբունքներին և մեթոդներին, ինչպես նաև երկրագնդի առանձին մայրցամաքների, երկրների և մարզերի հողածածկույթի բնութագրերին: Ինչպես նաև.

Կրթական արդյունքներ.

Առարկայի ուսումնասիրման արդյունքում ուսանողները պետք է.

- կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- տիրապետեն աշխարհագրական հետազոտությունների, հողերի քիմիական անալիզի մեթոդներին,
- կարողանան կատարել հողերի դիագնոստիկ դասակարգում,
- կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1 Ներածություն:

- Ներածություն: Հասկացություն հողի մասին:
- Հողառաջացման գործոններ:
- Վ.Վ. Դոկուչակի կողմից հող հասկացության բնորոշումը:
- Հողի ուսումնասիրման մեթոդները, ուսումնասիրման պատմությունից:

ԹԵՄԱ 2 Հողմահարում: Հողի հանքանյութերը և հողառաջացնող ապարները:

ԹԵՄԱ 3 Հողի օրգանական մաս

- Հողի օրգանական մասն ու նրա ձևերը:
- Հողի օրգանական նյութը՝ հումուսը:
- Հումուսի հիմնական բաղադրիչ մասերը՝ ֆուլվոթթուներ և հումինաթթուներ, հումուսային միացություններ:
- Հողի նուրբ դիսպերս մասը և նրա ներթափանցող հատկությունները

ԹԵՄԱ 4 Հողի գազային և հեղուկ փուլերի քիմիական կազմը

ԹԵՄԱ 5 Հողի մորֆոլոգիան: Հողառաջացման պրոցեսի ընդհանուր բնութագիրը:

ԹԵՄԱ 6 Հողերի դասակարգումը: Հողերի տարածված տիպերի նկարագիրը:

ՔԱ/բ 1478 Կենսաաշխարհագրություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3, 5 ժամ (32 ժամ դասախոսություն և 24 ժամ գործնական պարապմունք),
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների գիտելիքների ձևավորում՝ կենդանի օրգանիզմների աշխարհագրական տարածման և տեղաբաշխման, երկրագնդի և դրա առանձին ռեգիոնների բուսական ծածկույթի և կենդանական աշխարհի կառուցվածքի կարևորագույն օրինաչափությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ցամաքային և ջրային էկոհամակարգերի կազմակերպման

կարևորագույն սկզբունքները, դրանց տարածաժամանակային փոփոխականության հիմնական օրինաչափությունները,
2. կհասկանա բիոտայի տեղն ու դերը կենսոլորտի ձևավորման գործում,
3. կկարողանա օգտվել կենսաշխարհագրական քարտեզներից, յուրացնել համեմատական աշխարհագրական մեթոդները՝ կենսաշխարհագրական օբյեկտների նկատմամբ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Թեմա 2՝ Կենսաշխարհագրության հիմնական հասկացությունները: Թեմա 3՝ Հասկացություն կենսոլորտի մասին: Թեմա 4՝ Հասկացություն կենսացենոզի մասին: Թեմա 5՝ Հասկացություն արեալի մասին: Թեմա 6՝ Ժամանակակից ֆլորայի և ֆաունայի ծագումը: Թեմա 7՝ Ցամաքի ֆլորիստական և ֆաունիստական ռեգիոնները: Թեմա 8՝ Ցամաքի հիմնական բիոմները: Թեմա 9՝ Բարձրադիր գոտիականությունը՝ ցամաքային օրգանիզմների տարածման գործում: Թեմա 10՝ Կյանքը կղզիներում: Թեմա 11՝ Կյանքի առանձնահատկությունները ներքին ջրային ավազաններում: Թեմա 12՝ Կյանքի առանձնահատկությունները Համաշխարհային օվկիանոսում:

ԲԱ/բ 0947 Լանդշաֆտագիտություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ սեմինար)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեսական և պրակտիկ գիտելիքներ երկրի մակերևույթի լանդշաֆտների ձևավորման զարգացման վերաբերյալ: Դասընթացը ծանոթացնում է ուսանողներին լանդշաֆտների բնական և անթրոպոգեն գործոնների ինչպես նաև լանդշաֆտների օպտիմիզացիայի խնդիրների հետ: Ուսանողը ծանոթանում է լանդշաֆտային քարտեզագրության առանձնահատկությունների, մեթոդների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա տարբեր բնական և անթրոպոգեն լանդշաֆտների ձևավորման առանձնահատկությունները:
- կկարողանա որոշել լանդշաֆտների ձևավորման բնական էկզոգեն գործընթացները և լանդշաֆտների ծագման, ձևավորման և զարգացման առանձնահատկությունների
- կկարողանա դաշտային հետազոտություններ կատարել և հավաքագրել լանդշաֆտի ձևաբանությանը և ձևաչափությանը վերաբերվող տվյալներ
- կկարողանա կազմել լանդշաֆտագիտական ինչպես ընդհանուր, այնպես էլ թեմատիկ քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա-1 «Լանդշաֆտագիտություն» առարկան, մեթոդը և խնդիրները:

Թեմա-2 Ընդհանուր տեղեկություններ գեոսֆերայի մասին: Գեոհամակարգերի շարք:

Թեմա-3 Բնական լանդշաֆտագոյացնող պրոցեսներ:

Թեմա-4 Անթրոպոգեն լանդշաֆտագոյացնող պրոցեսներ:

Թեմա-5 Լանդշաֆտների օպտիմիզացիա:

ՔԱ/ք 0918 Քարտեզագիտություն (5 կրեդիտ),

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ լաբորատոր)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Քարտեզագիտություն դասընթացի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ քարտեզագիտության խնդիրների մասին, պարզաբանել քարտեզագրման մեթոդներն ու սկզբունքները: Ցույց տալ տարածքների քարտեզագրման արդյունավեր ուղիները և իրականացման մեխանիզմները: Տալ գաղափար աշխարհագրական քարտեզի, նրա զարգացման փուլերի, քարտեզների կազմման ու հրատարակման մասին:

Կրթական արդյունքներ:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- կարողանա սահմանել աշխարհագրական քարտեզ հասկացությունը
- կարողանա բնութագրել քարտեզի բովանդակությունը
- կարողանա բնութագրել քարտեզագիտական ընդհանրացումը
- իմանալ ընդհանուր աշխարհագրական քարտեզի կառուցվածքը
- գաղափար կազմել քարտեզների կազմման մեթոդների մախջՖ
- կարողանա ինքնուրույն կազմել քարտեզներ

Բովանդակությունը.

Թեմա 1: Առարկայի բաժինների և թեմաների բովանդակությունը

Ներածություն: Քարտեզագիտություն առարկան, խնդիրները և կապն այլ գիտությունների հետ

Քարտեզագրական նշանակումներ

Քարտեզագրական գեներալիզացիա(ընդհանրացում)

Աշխարհագրական քարտեզի դերը և նշանակությունը գիտության և պրակտիկայի բնագավառում

Թեմա 2: Քարտեզի մաթեմատիկական հիմքի տարրերը:

Մասշտաբ

Երկրի ձևը և չափերը և գեոդեզիական հիմքի կետերը: Աշխարհագրական կոորդինատներ

Քարտեզագրական պրոյեկցիաներ

Աղավաղման մեծության գնահատումը քարտեզի սահմաններում

Քարտեզագրական պրոյեկցիաների ստորաբաժանումները

Աշխարհի քարտեզների քարտեզագրական պրոյեկցիաները

Կիսագնդերի քարտեզների քարտեզագրական պրոյեկցիաները

Աշխարհամասերի ու օվկիանոսների քարտեզների քարտեզագրական պրոյեկցիա- ները

ԱՊՀ-ի քարտեզների քարտեզագրական պրոյեկցիաները

Քարտեզների կամպանովկան

Թեմա 3: Քարտեզի աշխարհագրական բովանդակության էությունը:

Ջրային օբյեկտների պատկերումը

Ռելիեֆի պատկերումը ընդհանուր աշխարհագրական քարտեզներում

Ռելիեֆը պատկերումը հորիզոնականներով

Ռելիեֆի պատկերումը բարձրության աստիճանների գունավորումով

Ռելիեֆի պատկերման համատեղ և լամդաֆտային մեթոդները

Յուրաքանչյուր ծածկի պատկերումը ընդհանուր աշխարհագրական քարտեզներում

Բնակավայրերի պատկերումը ընդհանուր աշխարհագրական քարտեզներում
Հաղորդակցության ճանապարհների պատկերումը ընդհ. աշխ. քարտեզներում
Վարչաքաղաքական և մշակութային տարրերի պատկերումը ընդհ. աշխ.
քարտեզներում

Մակագրություններ

Օտար անունների տառադարձությունը

Թեմա 4: Քարտեզների դասակարգում:

Մասնագիտական քարտեզներ, նրանց աշխարհագրական հիմքը

Կարևորագույն մասնագիտական քարտեզների բովանդակությունը

Ծովային քարտեզներ

Ուսումնասաշխարհագրական քարտեզներ և ատլասներ

Ցամաքի քարտեզագրական ուսումնասիրվածությունը

Թեմա 5: Տեղեկություններ քարտեզների և ատլասների մասին:

Աշխարհագրական քարտեզների պատրաստումը:

Թեմա 6: Քարտեզի հետ կապված խնդիրները

Թեմա 7: Համառոտ ակնարկ քարտեզագիտության պատմությունից:

(հնագույն շրջան, ստրկատիրության և ֆեոդալիզմի շրջաններ):
Քարտեզագիտությունը Ռուսաստանում: Քարտեզագիտության խորհրդային
շրջանը

S/բ- 0523 «Բնակչության աշխարհագրություն ժողովրդագրության հիմունքներով» (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ 4 ժամ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապագա աշխարհագետ մասնագետներին
համակարգված գիտելիքներ տալ բնակչության և բնակավայրերի, բնակչության
կազմի և կառուցվածքի, ազգային կազմի, ավանդությունների ու
սովորությունների, ժողովրդագրական տարբեր գործընթացների և երևույթների
աշխարհագրական օրինաչափությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա վերլուծել բնակչության թվաքանակի, բնական և
մեխանիկական շարժընթացների ցուցանիշները,
- ինքնուրույն եզրահանգումների միջոցով որոշել բնակչության տեղն ու
դերը, որպես հասարակության գլխավոր արտադրողական ուժ:

Բովանդակությունը.

Թեմա-1 «Բնակչության աշխարհագրություն» առարկան, խնդիրները:

Բնակչության թվաքանակը, ձևավորումը, շարժընթացը: Թեմա-2 Բնակչության

բնական շարժընթացը. բնական վերարտադրություն: Թեմա-3

Վերարտադրությունը զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում:

Թեմա-4 Բնակչության մեխանիկական շարժը: Թեմա-5 Բնակչության

դասակարգումն ըստ առանձին ցուցանիշների. սեռային կազմ, տարիքային

կառուցվածք: Թեմա-6 Բնակչության ռասայական կազմը: Թեմա-7 Բնակչության

ազգային և լեզվական կազմը: Թեմա-8 Բնակչության կրոնական կազմը: Թեմա-9

Աշխատանքային ռեսուրսներ. տնտեսապես ակտիվ բնակչություն: Թեմա-10

Բնակչության տեղաբաշխումը: Թեմա-11 Բնակչության տարաբնակեցումը:

ԲԱ/բ 0912 Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն (5 կրեդիտ)

Շաբաթական ժամ 4 ժամ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական)
4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեսական և պրակտիկ գիտելիքներ Հայկական լեռնաշխարհի և նրա մասը կազմող Հայաստանի Հանրապետության բնության՝ երկրաբանական կառուցվածքը, զարգացման պատմության, ռելիեֆի, կլիմայի, ջրերի, լանդշաֆտների վերաբերյալ: Դասընթացը ծանոթացնում է ուսանողներին ՀՀ տարածքի ֆիզիկաաշխարհագրական բաժանման և առանձին ռեգիոնների ֆիզիկաաշխարհագրական բնութագրի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- Պատկերացում կունենա Հայկական լեռնաշխարհի և ՀՀ տարածքի ֆիզիկաաշխարհագրական պայմանների մասին:
- կկարողանա գնահատել ռելիեֆի, կլիմայի և կլիմայաստեղծ գործոնների, ներքին ջրերի հողաբուսական ծածկի և կենդանական աշխարհի առանձնահատկությունները, և տարածական տարբերությունները:
- կկարողանա կազմել ՀՀ տարածքի տարբեր թեմատիկ քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա-1 «Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն» առարկան, մեթոդը և խնդիրները:

Թեմա-2 Հայկական լեռնաշխարհ

Թեմա-3 Հայաստանի Հանրապետություն

Թեմա-4 Ֆիզիկաաշխարհագրական շրջանացում:

S/բ-0525 Հայաստանի տնտեսական և սոցիալական աշխարհագրություն- 6 կրեդիտ

Շաբաթական 4 ժամ (32 ժամ դասախոսություն, 28 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեսական և պրակտիկ գիտելիքներ ՀՀ-ի արտադրողական ուժերի և տնտեսության ճյուղերի տեղաբաշխման, դրանց արդի վիճակի, առկա խնդիրների և լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ: Ուսանողը ծանոթանում է հանրապետության բնական, մարդկային ռեսուրսների տեղաբաշխման առանձնահատկություններին օգտագործման արդի վիճակին: Դասընթացը ուսումնասիրում է նաև տնտեսության ճյուղային և տարածական կառուցվածքը և արդի խնդիրները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կկարողանա ձեռք բերված տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
2. կտիրապետի բնական ռեսուրսների և տնտեսության ճյուղերի գնահատման հմտություններին,
3. կկարողանա տնտեսական դասակարգման ենթարկել ՀՀ մարզերը
4. կկարողանա վերլուծել տարածաշրջանը ի հայտ բերելով տնտեսության ուժեղ և թույլ կողմերը:

Բովանդակությունը.

Թեմա 1 ՀՀ տարածքը, դիրքը, սահմանները: Բնական պայմանների և ռեսուրսերի տրն-տեսաաշխարհագրական գնահատականը: Թեմա 2 ՀՀ բնակչության թվաքանակը, շարժի ընդհանուր բնութագիրը, աշխատանքային ռեսուրսները և բնակչության տարաբնակե-ցումը: Թեմա 3 ՀՀ արդյունաբերության ճյուղերի նկարագիրը և տեղաբաշխումը: Թեմա 4 ՀՀ գյուղատնտեսության տարածքային և ճյուղային կառուցվածքը: Թեմա 5 ՀՀ տրանսպորտի տնտեսաաշխարհագրական գնահատականը: Թեմա 6 ՀՀ ոչ արտադրական ոլորտը: Թեմա 7 ՀՀ վարչատարածքային կառուցվածքը և մարզերի տնտեսաաշխարհագրական գնահատականը:

ՔԱ/Բ 0909 Մայրցամաքների և օվկիանոսների ֆիզիկական աշխարհագրություն (11 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ 5-րդ կիսամյակ (32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական), 5 կրեդիտ

Շաբաթական 5 ժամ 6-րդ կիսամյակ (42 ժամ դասախոսություն, 38 ժամ գործնական), 6 կրեդիտ

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեսական և պրակտիկ գիտելիքներ գեոսֆերայի և նրա առանձին ոլորտների, նրանց կառուցվածքի, ներքին օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ: Դասընթացը ժանոթացնում է ուսանողներին մայրցամաքների և օվկիանոսների ֆիզիկաաշխարհագրական բնութագրերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա գնահատել գեոսֆերայի տարածական առանձնահատկությունները և ներքին օրինաչափությունները:
- կկարողանա տարբերել առանձին մայրցամաքների և օվկիանոսների ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները

Բովանդակությունը.

Թեմա-1 «Մայրցամաքների և օվկիանոսների ֆիզիկական աշխարհագրություն» առարկան, մեթոդը և խնդիրները:

Թեմա-2 Երկրագնդի գեոսֆերան

Թեմա-3 Եվրասիա

Թեմա-4 Հյուսիսային Ամերիկա

Թեմա-5 Հարավային Ամերիկա

Թեմա-6 Աֆրիկա:

Թեմա-7 Ավստրալիա

Թեմա-8 Անտարկտիկա և Անտարկտիդա

Թեմա-9 Համաշխարհային օվկիանոս

Թեմա-10 Ատլանտյան օվկիանոս

Թեմա-11 Հնդկական օվկիանոս

Թեմա-12 Խաղաղ օվկիանոս

Թեմա-13 Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս

ՔԱ/ք 0960 Գեոինֆորմատիկա և աերոտիեզերական հետազոտման մեթոդներ (4 կրեդիտ)

Շաբաթական 3,5 ժամ (32 ժամ դասախոսություն և 24 ժամ լաբորատոր պարապմունք),

**4-րդ կիսամյակ, քննություն
Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գեոինֆորմացիոն համակարգերի ու դրանց օգտագործման մասին տեսական ու կիրառական գիտելիքներ: Ուսանողներին ծանոթացնելաերոտիեզերական հետազոտման մեթոդի էության և դրա հնարավորությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կինմանա գեոինֆորմացիոն համակարգերի գործառական կառուցվածքի տեսական հիմքերը,
2. կիսականա ԱՏՀ-ում տվյալների կառավարման մեխանիզմը,
3. կկարողանա ինքնուրույն կերպով ստեղծել ԱՏՀ տվյալների հենք կստանա գիտելիքներ աերոտիեզերական նկարների միջոցով բնական
4. միջավայրի ուսումնասիրության մասին,
5. կիսականա թե բնական միջավայրի ինչ տվյալներ կարելի է ստանալ աերոտիեզերական նկարներից,
6. կկարողանա ստացած գիտելիքները օգտագործել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գեոինֆորմատիկայի ընդհանուր դրույթները: Թեմա 2՝ Տվյալների գրանցումը, մուտքագրումը և պահպանումը: Տարածական տվյալների կառուցումը: Թեմա 3՝ Տվյալների վերլուծությունը և մոդելավորումը: Թեմա 4՝ Տվյալների բազաների կառավարման համակարգերը: Հասկացություն ինտեգրացիոն համակարգերի մասին: Թեմա 5՝ Մեքենայական գրաֆիկայի տեխնիկական միջոցները, տվյալների տեսանելիացման մեթոդները և միջոցները: Համակարգչային քարտեզների և ատլասների ստեղծման առանձնահատկությունները: Թեմա 6՝ Գեոինֆորմատիկայի կիրառական ասպեկտները: Թեմա 7՝ Աշխարհագրական հետազոտությունների աերոտիեզերական մեթոդի էությունը և հնարավորությունները : Թեմա 8՝ Աերոտիեզերական հանույթի ֆիզիկական հիմունքները: Թեմա 9՝ Աերոտիեզերական հանույթի հիմունքները: Թեմա 10՝ Աերոտիեզերական հանույթի հատուկ տեսակները: Թեմա 11՝ Աերոտիեզերական նկարների վերծանում: Թեմա 11՝ Տիեզերական նկարների օգտագործումը աշխարհագրական ուսումնասիրությունների տարբեր ճյուղերում և թեմատիկ քարտեզագրության մեջ:

S/ք-0527 «Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն» (6 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (42 ժամ դասախոսություն, 38 ժամ գործնական)
6-րդ կիսամյակ քննություն

Նպատակը.

«Արտասահմանյան երկրների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն» դասընթացի նպատակն է ապագա աշխարհագետ մասնագետներին ծանոթացնել աշխարհի պետությունների պետական կարգին, զարգացման բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալներին, բնակչության կազմին, կառուցվածքին, տնտեսության ճյուղային կառուցվածքին և տեղաբաշխման օրինաչափություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

- պետք է կարողանա ինքնուրույն եզրահանգումների միջոցով որոշի պետությունների տեղն ու դերը համաշխարհային տնտեսական և քաղաքական կյանքում.
- տիրապետի աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա-1 Եվրոպայի ընդհանուր բնութագիրը: Եվրոպայի քաղաքական քարտեզը և կրած փոփոխությունները: Թեմա-2 ԳԴՀ-ի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-3 Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-4 Մեծ Բրիտանիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-5 Շվեդիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-6 Իտալիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-7 Իսպանիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-8 Լեհաստանի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-9 ԱՊՀ երկրները: ՌԴ-ի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-10 Ասիայի քաղաքական քարտեզի ձևավորումը: Թեմա-11 Թուրքիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-12 Իրանի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-13 Հնդկաստանի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-14 Ինդոնեզիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-15 Չինաստանի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-16 Ճապոնիայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-17 Ամերիկա աշխարհամասի քաղաքական քարտեզի ձևավորումը: Թեմա-18 ԱՄՆ-ի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-19 Կանադայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-20 Մեքսիկայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-21 Բրազիլիայի և Արգենտինայի սոցիալ-տնտեսական համեմատական բնութագիրը: Թեմա-22 ՀԱՀ-ի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-23 Ավստրալական Միության սոցիալ-տնտեսական բնութագիրը:

S/բ - 0528 «Համաշխարհային տնտեսության աշխարհագրություն» (6 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (42 ժամ դասախոսություն, 38 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապագա աշխարհագետ մասնագետներին ծանոթացնել համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալներին, ճյուղային կառուցվածքին և տեղաբաշխման օրինաչափություններին, տալ գիտելիքներ համաշխարհային տնտեսության, աշխատանքի միջազգային բաժանման, երկրների մասնագիտացման, ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը`

- կտիրապետի արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափություններ, համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածք, աշխատանքի միջազգային բաժանումը հասկացություններին,
- կկարողանա ինքնուրույն եզրահանգումների միջոցով ներկայացնել համաշխարհային տնտեսության ձևավորման և զարգացման միտումները, բնութագրել համաշխարհային տնտեսության ճյուղերը և տալ տեղաբաշխման օրինաչափությունները, բնութագրել միջազգային տնտեսական հարաբերությունները:

Բովանդակությունը.

Թեմա-1 Համաշխարհային տնտեսության աշխարհագրության առարկան, խնդիրները, հետազոտման մեթոդները, կապը այլ գիտությունների հետ: Թեմա-2 Համաշխարհային տնտեսության ձևավորումն ու զարգացման միտումները: Թեմա-3 Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի և տեղաբաշխման փոփոխությունները զարգացման արդի փուլում: Թեմա-4 Գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը համաշխարհային տնտեսության զարգացման և ճյուղային կառուցվածքի վրա: Թեմա-5 Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանումը: Թեմա-6 Արդյունաբերության ճյուղերի աշխարհագրությունը: Թեմա-7 Համաշխարհային գյուղատնտեսության աշխարհագրությունը: Թեմա-8 Համաշխարհային տրանսպորտի աշխարհագրությունը: Թեմա-9 Միջազգային տնտեսական կապեր: Թեմա-10 Տնտեսական Ինտեգրացիա:

S/բ-0529 Հայաստանի պատմական աշխարհագրություն - 5 կրեդիտ

Շաբաթական 6 ժամ (32 ժամ դասախոսություն, 38 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել գիտելիքներ Հայկական լեռնաշխարհի ռելիեֆի, բնական պայմանների և ռեսուրսների, պատմական Հայաստանի հնագույն բնակիչների բնակության հիմնական շրջանների, առևտրային ճանապարհների, վարչատարածքային բաժանման, պատմական կարևորագույն վայրերի (քաղաքների, ավանների, բերդերի, եկեղեցիների, վանքերի, ճակատամարտերի վայրերի և այլն), բնակչության թվի, զբաղմունքի, դասակարգային և էթնիկական կազմի վերաբերյալ՝ ըստ պատմական ժամանակաշրջանների: Առնձնակի մեծ ուշադրություն է դարձվում «Աշխարհացոյցի» բաժանմամբ հայտնի աշխարհների և գավառների ուսումնասիրությանը: Դասընթացում քննարկվում է նաև Կիլիկյան թագավորության ձևավորումը, զարգացումը և անկումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. Անցած նյութը հնարավորություն է տալիս հեշտությամբ յուրացնել Հայաստանի տնտեսական և աշխարհագրությունը: ճյուղին պատկանող մյուս առարկաները, որոնք ուսումնասիրվում են բարձր կուրսերում,
2. կկարողանա կատարել վերլուծություն պատմական համադրությունների միջոցով, Հայաստանի բնական նեոլիթի իմացության միջոցով կկարողանան համապատասխան տնտեսության ճյուղեր զարգացնել,

3. Հանձնարարված գրականության հիման վրա կկարողանան կազմել ռեֆերատներ:

Քովանդակությունը.

Թեմա 1 Հայկական լեռնաշխարհի դիրքը, սահմանները, բնական պայմանները:
Թեմա 2 Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչները: Թեմա 3 Հայաստանը հնագույն ժամանակներից մինչև մ. թ. 7-րդ դարը: Թեմա 4 Հայաստանը VII-XI դդ.:
Թեմա 5 Հայաստանը XI-XIII դդ.: Թեմա 6. Հայաստանը XIII-XVI դդ.: Թեմա 7 Հայաստանը XVI-XIX դդ.: Թեմա 8 Հայաստանը XIX դարի սկզբից մինչև 1917թ:

ՔԱ/ք 0937 Աշխարհագրական մտքի զարգացման պատմություն (6 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (42 ժամ դասախոսություն, 38 ժամ գործնական)
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողներին իրազեկել աշխարհագրական գիտելիքների ծագման ու զարգացման մասին՝ սկսած նախնադարյան ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, տարբեր ժամանակաշրջաններում աշխարհագրական հայտնագործությունների և ուսումնասիրությունների, քարտեզագրության տեսական մտքի և աշխարհագրության պատմության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. պետք է իմանա աշխարհագրական տեսական մտքի զարգացման մասին, աշխարհագրական հայտնագործությունների ու ճանապարհորդությունների մասին, տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած աշխարհագրության զարգացման բնույթի մասին
2. կկարողանա ճիշտ մեկնաբանել բոլոր ժամանակաշրջաններում տեղի ունեցած աշխարհագրական մտքի զարգացումը,
3. կկարողանա կարևոր աշխարհագրական ճանապարհորդությունների սխեմատիկ պատկերումը տալ քարտեզի վրա
4. կկարողանա համեմատել աշխարհագրագետների տեսական մտքերը տարբեր ժամանակաշրջաններում:

Քովանդակությունը. ԹԵՄԱ 1 Ներածություն

ԹԵՄԱ 2 Աշխարհագրությունը Հին Մերձավոր և Հեռավոր արևելյան երկրներում:

Հին հունական նշանավոր ճանապարհորդներն ու ծովագնացները:

Հին հռոմեական անվանի աշխարհագրագետներն ու ճանապարհորդները:

Աշխարհագրությունը Բյուզանդական կայսրությունում:

ԹԵՄԱ 3 Աշխարհագրությունը 5-10-րդ դարերում:

Արաբական աշխարհագրագետներն ու ճանապարհորդները:

ԹԵՄԱ 4 Աշխարհագրությունը 11-15-րդ դարում:

ԹԵՄԱ 5 Աշխարհագրական հայտնագործությունները 15-17-րդ դարերում:

Ք. Կոլումբոսի հայտնագործությունները , Ա. Վեսպուչիի նավարկությունը:

Առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը :

Դեպի արևելք տանող ճանապարհների պրոբլեմը լուծելու փորձերը:

Ռուսական աշխարհագրական մեծ հայտնագործությունները 17-րդ դարում:

ԹԵՄԱ 6 Աշխարհագրության զարգացումը 18-րդ դարում:

ԹԵՄԱ 7 Աշխարհագրության զարգացումը 19-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբը:

Քարտեզագրության զարգացումը 19-20-րդ դարերում:

ՔԱ/բ 0961 Աշխարհագրական կանխատեսման հիմունքներ (6 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (42 ժամ դասախոսություն և 38 ժամ գործնական պարապմունք),
7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել տեսական և գործնական գիտելիքների համակարգ աշխարհագրության տեսական մակարդակի ու նրա բարձրագույն աստիճանի՝ աշխարհագրական կանխատեսման արդյունքները հասարակական պրակտիկային ծառայեցնելու ուղիների ու միջոցների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա աշխարհագրական կանխատեսման էությունը և բովանդակությունը, առանձնահատկությունները:
2. հասկանա աշխարհագրական կանխատեսման գիտաճանաչողական հիմքը:
3. կարողանա կանխատեսել աշխարհագրական երևույթների զարգացումները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի տեղը համալսարանական աշխարհագրական կրթության համակարգում: Նպատակը, խնդիրները: Թեմա 2՝ Աշխարհագրական կանխատեսումը գիտության ճյուղի սահմանային դիրքը աշխարհագրության և կանխատեսագիտության (պրոգնոստիկայի) փոխներթափանցման հատվածում: Թեմա 3՝ Աշխարհագրության գիտաճանաչողական ու կառուցողական հատկանիշները: Գործնական կիրառումը աշխարհագրական կանխատեսման միջոցով: Թեմա 4՝ Կանխատեսումը որպես աշխարհագրության գիտաճանաչողական ու կառուցողական գործառույթների տեսական հիմք: Թեմա 5՝ Աշխարհագրական կանխատեսման էությունը, առանձնահատկությունները: Կապը աշխարհագրական տարածքի կազմակերպման և տարածքային կառավարման հետ: Թեմա 6՝ Կանխատեսման համագիտական մեթոդների կիրառումը աշխարհագրության մեջ: Թեմա 7՝ Աշխարհագրական կանխատեսման կառուցվածքը: Հիմնական ճյուղերն ու ուղղությունները:

S/բ-1298 «Քաղաքական աշխարհագրություն » (6 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (42 ժամ դասախոսություն, 38 ժամ գործնական)
5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքների համակարգ ՔԱ-ի՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղի, բովանդակության, ուսումնասիրության օբյեկտի ու առարկայի, մեթոդաբանության, տեսական դրույթների, գիտաճանաչողական ու կառուցողական հնարավորությունների մասին, ձևավորել ու զարգացնել այդ հնարավորությունների կիրառման անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կարողանա արդի քաղաքաաշխարհագրական երևույթների մակրոաշխարհագրական (համաշխարհային), մեզոաշխարհագրական (տարածաշրջանային) և միկրոաշխարհագրական (ներպետական, տեղական) մակարդակների բովանդակության, գլխավոր առանձնահատկությունները
 - կարողանա ինքնուրույն եզրահանգումների միջոցով վերլուծել և գնահատել քաղաքաաշխարհագրական երևույթները:
 - տիրապետի աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին:
- Բովանդակությունը.**

Թեմա 1. ՔԱ որպես գիտության ճյուղ: Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Տեղը գիտությունների համակարգում: Ներքին կառուցվածքը: Թեմա 2. Հասարակական կյանքի քաղաքական ոլորտը, բովանդակությունը, տարածքային կազմակերպումը և կառուցվածքը: Երկիր-պետություն: Թեմա 3. Երկիր մոլորակի քաղաքական մակրոաշխարհագրական կառուցվածքը: Թեմա 4. Պատերազմի և խաղաղության աշխարհագրություն: Տարածքային հակամարտություններ: Կարգավորումը և միջազգային իրավունքը: Թեմա 5. Հարավկովկասյան տարածքային հակամարտությունները: Թեմա 6՝ Ադրբեջանա-Ղարաբաղյան հակամարտություն: Բովանդակությունը: Լուծման իրավական հիմքերը և ուղիները:

Հ/բ0300 Հոգեբանություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունք) 3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մարդու հոգեկան երևույթների առանցքային օչինաչափություններին և մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել իրենց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքների կիրառմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները.
2. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

Բովանդակությունը

Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները, սկզբունքները: Թեմա 2. Հոգեկանի և գիտակցության ծագումը: Թեմա 3. Հոգեկանի ակտիվության մակարդակները: Թեմա 4. Անձնավորություն: Թեմա 5. Գործունեություն: Թեմա 6. Հաղորդակցում և լեզու: Թեմա 7. Ուշադրության ընդհանուր բնութագիրը: Թեմա 8. Զգայությունների ընդհանուր բնութագիրը: Թեմա 9. Ընթրում: Թեմա 10. Հիշողություն: Թեմա 11. Մտածողություն: Թեմա 12. Երևակայություն: Թեմա 13. Կամք: Թեմա 14. Հույզեր և զգացումներ: Թեմա 15. Բնավորություն: Թեմա 16. Խառնվածք: Թեմա 17. Ընդունակություններ:

Մ/բ- 1102 Մանկավարժություն (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունք) 4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է ապագա ուսուցիչներին զինել մանկավարժական գիտելիքներով, ձևավորել որոշակի կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև տալ պատկերացումներ մանկավարժական գործընթացի, օրինաչափությունների, ուսուցման ու դաստիարակության սկզբունքների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա վերլուծել մանկավարժական գործընթացը
2. իր տեսական գիտելիքները կհամադրի առաջավոր մանկավարժական փորձի, համագործակցության, մանկավարժության դրական նվաճումների հետ:

Բովանդակությունը

Թեմա 1. Մանկավարժի մասնագիտության բնութագիրը: Թեմա 2. Մանկավարժության օբյեկտը, առարկան և խնդիրները: Թեմա 3. Անձնավորության դաստիարակությունը, զարգացումը և ձևավորումը: Թեմա 4. Դաստիարակության նպատակը և խնդիրները : Թեմա 5 Ուսուցման գործընթացի էությունը: Թեմա 6. Ուսուցման մեթոդները Թեմա 7. Գիտելիքների ստուգում և գնահատում: Թեմա 8. Դաստիարակության գործընթացի էությունը Թեմա 9. Դաստիարակության մեթոդները Թեմա 10. Սովորողների աշխարհայացքի ձևավորումը: Թեմա 11 Անձի դաստիարակությունը կոլեկտիվում: Թեմա 12. Դպրոցավարություն: Դպրոցի կառավարման հիմունքներ:

Կամընտրական դասընթացներ

Ընտրովի առարկա - 1

ա. Տ/բ-1299 Տարածաշրջանների տնտեսական ներուժի գնահատման մեթոդները (4 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարածաշրջանի հասկացությանը, դրա առանձնացման մեթոդներին: Լուսաբանել տնտեսական ներուժ, ռեսուրսաապահովվածություն, տնտեսության ճյուղային կառուցվածք, տարածաշրջանների արտադրական մասնագիտացում հասկացությունները: Սովորեցնել համակողմանի վերլուծել տարածքային միավորները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կինանա տարածքային ՏԱԳ-ի էությունը և դրա առանձնացման ձևերը,
- կկարողանա վերլուծել բնառեսուրսային ներուժի նշանակությունը տարածաշրջանի համար
- կկարողանա օգտագործել ստացված գիտելիքները գործնականում

Բովանդակությունը

Թեմա 1. Մարզը որպես վարչատարածքային բաժանման միավոր: Թեմա 2 Տարածքային միավորների տնտեսական ներուժի գնահատման մեթոդաբանությունը: Թեմա 3Բնառեսուրսային ներուժ հասկացությունը և դրա գնահատման ձևերը: Թեմա 4. Տարածաշրջանների արտադրական մասնագիտացում: Թեմա 5. Տարածաշրջանի տնտեսության ճյուղային կառուցվածքի էությունը: Թեմա 6. Մարզերի ՀՆԱ-ի հաշվարկման այլընտրանքային մոտեցումները:

բ. ԲԱ/բ 0962 ՅՅ Լանդշաֆտները (4 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ՅՅ տարածքի Լանդշաֆտային ոլորտի վերընթաց կառուցվածքի, նրա առանձնահատկությունների հետ կապված մյուս ֆիզիկաաշխարհագրական գործոնների՝ ռելիեֆի մորֆոմետրիայի, լեռնալանջերի կողմնադրությունների ջրագրության, կլիմայի և այլնի հետ: Դասընթացը ծանոթացնում է ուսանողներին ՅՅ տարածքի Լանդշաֆտային գոտիների հետ, սկսած ցածրադիր գոտիներից մինչև բարձրլեռնային ձնամերձ գոտու: Ուսանողը հստակ պատկերացում է ձեռք բերում այդ գոտիներից յուրաքանչյուրի ներքին կառուցվածքի առանձնահատկությունների՝ Լանդշաֆտաստեղծ գործոնների վերընթաց տարբերությունների, ինչպես նաև Լանդշաֆտային դաշտային հետազոտությունների, նրա մեթոդների և ձևերի հետ: Ուսանողը ծանոթանում է Լանդշաֆտային քարտեզագրության առանձնահատկությունների, մեթոդների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կազմել ՅՅ Լանդշաֆտային գոտիների քարտեզները:
2. կկարողանա կազմել Լանդշաֆտաստեղծ գործոններից յուրաքանչյուրի բնութագիրը և դրանց աշխարհագրությունը ՅՅ տարածքում
3. կկարողանա դաշտային հետազոտություններ կատարել և հավաքագրել Լանդշաֆտային բաղադրիչների դաշտային տվյալները:
4. կկարողանա կազմել Լանդշաֆտագիտական ինչպես ընդհանուր, այնպես էլ թեմատիկ քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա-1 «ՅՅ Լանդշաֆտները» առարկան, մեթոդը և խնդիրները:

Թեմա-2 Ընդհանուր տեղեկություններ ՅՅ Լանդշաֆտների վերաբերյալ

Թեմա-3 Լանդշաֆտների վերընթաց գոտիականությունը

Թեմա-4 Վերընթաց գոտիների բնութագրերը:

գ. ԲԱ/բ 0963 Լանդշաֆտային պլանավորում (4կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է բացահայտել աշխարհագրության բազմաթիվ ճյուղերում կատարված ուսումնասիրությունների վերջնական արդյունքները: Լանդշաֆտային պլանավորումը համոզե է գալիս, որպես գործիք տարածքների գնահատման ու պլանավորման համար, որի արդյունքում որոշվում է ցանկացած բնատարածքային համալիրի նպատակային օգտագործումը: Այն կարևորվում է հատկապես սերվիսի կազմակերպման տեսակետից, գնահատելով և ցույց տալով

այն բաղադրիչները, որոնք կարևոր նշանակություն ունեն սերվիս ծառայությունների համար:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կազմակերպել ռեսուրսների նպատակային և արդյունավետ պլանավորումը,
2. կորոշի դրանց նպատակային օգտագործման ուղիները,
3. կգտնի ռեսուրսների օգտագործման հիմնական նպատակները,
4. կմասնակցի սերվիսի պլանների կազմման աշխատանքներին,
5. կգտնի ծառայած խնդիրների լուծման համար արդյունավետ ուղիներ,
6. կկանխատեսի սեփական որոշումների հետևանքները:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1 Ներածություն, ԼՊ բովանդակությունը, ԼՊ խնդիրները և մեթոդները, ԼՊ –ն Եվրոպական երկրներում(Գերմանիա, Չեխիա և այլն, **ԹԵՄԱ 2 ԼՊ – Բնապահպանական նշանակությունը**, Շրջակա միջավայրի պահպանությունը, ԼՊ- ի սերվիս նշանակությունը և արդյունավետությունը, Տարածքային քաղաքականությունը և սերվիս ծառայությունները, **ԹԵՄԱ 3 ԼՊ անհրաժեշտությունը սերվիսի կազմակերպման համար**, ԼՊ կրողներ, հասցեատերեր, պատասխանատուներ, ԼՊ- ն և նրա կառավարումը, ԼՊ-ն, որպես ռեգիոնալ սերվիսի կայուն զարգացման նախադրյալ, **ԹԵՄԱ 4 ԼՊ միջազգային փորձը օրնակելի պրակտիկա**, Գերմանական կոնցեպցիան և փորձը, ԼՊ կազմակերպման սերվիս նշանակությունը, Միջազգային փորձի կիրառությունը ՀՀ տարածքում, **ԹԵՄԱ 5 Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրականացման հիմքերը**, ԼՊ իրավական հիմքերը, ԼՊ համակարգումը, հաջողություններ, որակ, ԼՊ համակարգի ձևավորման խնդիրները, ԼՊ համակարգը սերվիսի նախադրյալ, **ԹԵՄԱ 6 ԼՊ մեթոդական երաշխավորությունները**, Աշխարհագրական դիրք, Երկրաբանական և կլիմայական պայմաններ, Բնական ներուժ, օգտակար հանածոներ, Հողային և ջրային ռեսուրսներ, Էկոլոգիական և սերվիս պայմաններ, **ԹԵՄԱ 7 ԼՊ ծրագիր**, ԼՊ և սերվիս բաղադրիչների հաշվառում, ԼՊ և սերվիս բաղադրիչների գնահատում, ԼՊ և սերվիս բաղադրիչների պլանավորում, ԼՊ և սերվիս բաղադրիչների նպատակային օգտագործման կարգավիճակների որոշում, **ԹԵՄԱ 8. ԼՊ և ՍԵՐՎԻՍ սխեմատիկ պլաններ**, Խոշոր և միջին մասշտաբի պլաններ, ԲՏՀ – ների էկոլոգիական վիճակի գնահատման քարտեզներ, ԲՏՀ – ների նպատակային և սերվիս կարգավիճակների որոշում և քարտեզագրում, **ԹԵՄԱ 9. ԼՊ որպես ճյուղային և սերվիս խնդիրների լուծման գործիք**, Տարածքի ռեգիոնալ առանձնահատկությունները, միկրո և մակրո աշխարհագրական դիրքերի վերլուծությունը, Հողօգտագործման և ջրօգտագործման հիմնախնդիրները, ԼՊ և ՍԵՐՎԻՍ իրագործման մոնիթորինգ, ԼՊ և ՍԵՐՎԻՍ կառավարման իրագործման ուղիները

Ընտրովի առարկա - 2

ա. **S/p1253 Բնօգտագործման տնտեսագիտություն (4 կրեդիտ)**

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել բնօգտագործման տնտեսագիտությունն առարկան, դասընթացի մեթոդոլոգիան, բնորոշ կատեգորիաները, օրենքները և օրինաչափությունները, բնապահպանական հարաբերությունների համակարգը, բնապահպանական կատեգորիաներն ու օրենքները շուկայական հարաբերությունների պայմաններում, բնության պահպանման առանձնահատկությունները, նրա ռեսուրսային ապահովվածության համակարգի առավել խնայողաբար և արդյունավետ օգտագործման մեխանիզմը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնատնտեսական կատեգորիաներն ու օրենքները,
2. առարկայի կարևորությունը հասարակական տնտեսական հարաբերությունների բնագավառում,
3. կկարողանա մեկնաբանել բնատնտեսական երևույթներն ու գործընթացները, դրանց պատճառահետևանքային կապերը
4. կարողանա կատարել ճիշտ եզրահանգումներ
5. ճիշտ ներկայացնել մարդ-տնտեսություն-բնության պահպանություն փոխհարաբերությունները:
6. կտիրապետի այն բոլոր մեթոդներին, որոնք անհրաժեշտ են բնական միջավայրի հավասարակշռություն և համաչափություն պահպանելու համար

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսական զարգացումը և էկոլոգիական գործոնը: Թեմա 2. Գլոբալ էկոլոգիական պրոբլեմները: Թեմա 3. Կայուն տնտեսական զարգացում: Էքստենճալներ: Թեմա 4. Էքստենճալները և հասարակական շահերը: Թեմա 5 Բնության տնտեսական արժեքը: Բնօգտագործման արդյունավետությունը: Թեմա 6. Էկոնոմիկայի էկոլոգիական և վերջնական արդյունքները: Թեմա 7. Տնտեսական զարգացման տեխնոգեն տիպը: Թեմա 8 Տնտեսական զարգացման էկոլոգիզացման հիմնական ուղղությունները և անցում կայուն զարգացման: Թեմա 9 Ագրոարդյունաբերական կոմպլեքս: Թեմա 10. Անտառային և ջրային կոմպլեքս: Թեմա 11. Վառելիք-էներգետիկ և մետալուրգիական կոմպլեքսներ: Թեմա 12. Աղտոտման կանխարգելման և լիկվիդացման տնտեսական ասպեկտները: Թեմա 13. Էկոնոմիկայի էկոլոգիզացման տնտեսական մեխանիզմը: Էկոլոգիական ձգնաժամեր:

բ. ԲԱ/բ 0964 Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (4 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակ է՝ տրամադրել տեղեկատվություն բնական և հասարակական երևույթների քանակական ու որակական հատկանիշների մասին, ցույց տալ դրանց տեղաբաշխումը, պարզաբանել դրանց կապերը և ԱՏՅ ծրագրով քատեզագրել դրանք: Այն ապահովում է տեղեկատվության ճշգրտություն և աշխարհագրական համապատասխանելիություն:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կկարողանա կազմել թվայնացված քարտեզներ

2. Կմշակի ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործման ծրագրեր
3. Կորոշի տարածքների նպատակային օգտագործման կարգավիճակները
4. Կկազմնի աշխատանքներին պլաններ
5. Կգտնի ծառացած խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ
6. Կկանխատեսի սեփական որոշումների հետևանքների

Քովանդակությունը.

ԹԵՄԱ 1 ԱՏՅ ընդհանուր դրույթները: Հասակացություն ԱՏՅ-ի մասին, ԱՏՅ համակարգչային ծրագրեր, Ծանոթություն ԱՏՅ համակարգչային ծրագրի հետ, **ԹԵՄԱ 2 Տվյալների գրանցումը, մուտքագրում և պահպանում,** Քարտեզագրական հիմք և տվյալների գրանցում, Նոր տվյալների մուտքագրում, Տեղադրված տվյալների պահպանում, **ԹԵՄԱ 3 Տարածական տվյալների կառուցումը:** Տարածական տվյալների տեղադրման մեխանիզմներ, Արեալների կառուցում, Լանդշաֆտային բաղադրիչների առանձնացում, **ԹԵՄԱ 4 Տվյալների վերլուծությունը և մոդելավորումը,** Տվյալների ընտրություն և վերլուծություն, Մոդելավորման սկզբունքները, Մոդելավորման կիրառությունը, **ԹԵՄԱ5 Հասկացություն ինտեգրացիոն համակարգերի մասին,** Լանդշաֆտային բաղադրիչներ ինտեգրման սկզբունքները, Ինտեգրացիոն համակարգերի ստեղծում, Ինտեգրացիոն համակարգերի կառուցում. **ԹԵՄԱ 6 Մեքենայական գրաֆիկայի տեխնիկական միջոցները, տվյալների տեսանելիացման մեթոդները և միջոցները,** Համակարգչային գրաֆիկայի ընտրության սկզբունքները, Համակարգչային գրաֆիկայի կիրառություն, Համակարգչային գրաֆիկական աշխատանքներ COREL 12 ծրագրով, **ԹԵՄԱ 7 ԱՏՅ-ն** ախարհագրական հետազոտություններում, ԱՏՅ ծրագրով ստեղծված քարտեզներ, ԱՏՅ ծրագրով հետազոտման երթուղիների կազմում:

Ընտրովի առարկա - 3

ա. Տ/բ-1300 Ազատ տնտեսական գոտիների ձևավորման և զարգացման նախադրյալները (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակը ծանոթացնել ԱՏԳ-ների էությանը, նշանակությանը համաշխարհային տնտեսության մեջ, էվոլյուցիային և զարգացման նախադրյալներին: Լուսաբանված են գրականության մեջ հանդիպող ԱՏԳ-ների դասակարգումները, առանձնացված են դրանց առավել կարևոր տիպերը.

1. Ըստ գործունեության բնույթի՝ լինում են ազատ առևտրային, արտահանման արդյունաբերական, գիտատեխնոլոգիական և օֆշորային գոտիներ:

2. Ըստ ազգային և համաշխարհային տնտեսությունների ինտեգրացման աստիճանի՝ լինում են պարփակված (անկլավային) և ինտեգրացիոն գոտիներ:

3. Ըստ ճյուղային հատկանիշի՝ լինում են մեկ ճյուղում մասնագիտացված և համալիր գոտիներ:

4. Ըստ սեփականության ձևի՝ լինում են պետական, մասնավոր և խառը գոտիներ:

Քննարկված են ՀՀ ԱՏԳ-ների զարգացման հնարավորությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա սահմանել և դասակարգել ԱՏԳ-ները,
- վերկուծել դարձյալ դերը առանձին երկրների տնտեսությունների համար
- կկարողանա առանձնացնել պարտադիր անհրաժեշտ գործոնները և պայմանները ԱՏԳ-ներ ստեղծելու համար:

Բովանդակությունը

Թեմա 1. Ազատ առևտրային գոտիների ձևավորման նախադրյալները և դրանց գործառնությունները: Թեմա2 ԱՏԳ-ների տիպերն ըստ պատմական զարգացման հերթականությունը: Թեմա3 ԱՏԳ-ների ֆունկցիոնալ և տարածքային ձևերի էությունը և առավելությունները: Թեմա 4 ԱՏԳ-ն որպես համաշխարհային տնտեսության ինտեգրման միջուց (էությունը): Թեմա 5 Եվրոպայի, ԱՄՆ-ի և Ճապոնիայի տեխնոպարկերի էությունը և տարբերությունները: Թեմա 6.Օֆշորային գոտիների էությունը և տեղաբաշխումը: Թեմա 7 ԱՏԳ-ների ստեղծման և զարգացման նախադրյալները ՀՀ-ում:

բ. ԲԱ/բ 0965_ՀՀ կլիման և ջրաբանությունը (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեսական և պրակտիկ գիտելիքներ ՀՀ տարածքի ֆիզիկաաշխարհագրական կարևորագույն գործոններ հանդիսացող կլիմայի և ջրագրության վերաբերյալ: Դասընթացը ծանոթացնում է ուսանողներին ՀՀ տարածքի կլիմայի ձևավորման առանձնահատկությունների, կլիմայաստեղծ գործոնների, ինչպես նաև ջրաբանական առանձնահատկությունների և ջրագրության հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

5. կկարողանա գնահատել կլիմայի և ջրաբանական բաղադրիչների առանձնահատկությունները ՀՀ տարածքում:

6. կկարողանա որոշել ՀՀ տարածքի կլիմայի ձևավորման բնական գործընթացները և ջրագրական ցվանցի բաղադրիչների ջրաբանությունը և ջրագրությունը:

7. կկարողանա դաշտային հետազոտություններ կատարել և հավաքագրել կլիմային և ջրաբանությանը վերաբերվող տվյալներ

8. կկարողանա կազմել կլիմայական և ջրագրական ինչպես ընդհանուր, այնպես էլ թեմատիկ քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա-1 «ՀՀ կլիման և ջրաբանությունը» առարկան, մեթոդը և խնդիրները:

Թեմա-2 Ընդհանուր տեղեկություններ ՀՀ կլիմայաստեղծ գործոնների մասին:

Թեմա-3 ՀՀ կլիմայի վերընթաց գոտիականությունը:

Թեմա-4 ՀՀ ջրագրական ցանցը: Նրա ջրաբանական բնութագիրը:

Թեմա-5 ՀՀ ջրագրությունը:

գ.ԲԱ/բ 0966 Ջրային ռեսուրսների համալիր օգտագործում և պահպանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տեսական և պրակտիկ գիտելիքներ ջրային ռեսուրսների համալիր օգտագործման, պահպանության և պաշտպանության վերաբերյալ: Դասընթացը ծանոթացնում է ուսանողներին ջրային ռեսուրսների բաշխվածության անհամաչափության դրանց օգտագործման և պահպանության առանձնահատկությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

9. Պատկերացում կունենա ջրային ռեսուրսների ձևավորման, տարածական բաշխման առանձնահատկությունների մասին:

10. կկարողանա գնահատել ջրային ռեսուրսները և դրանց պահպանության առանձնահատկությունները:

11. կկարողանա կազմել ջրային ռեսուրսների, այդ թվում նաև ՀՀ տարածքի մակերևութային, ստորերկրյա ջրերի բնութագրիչների տարբեր թեմատիկ քարտեզներ:

Բովանդակությունը.

Թեմա-1 «Ջրային ռեսուրսների համալիր օգտագործում և պահպանություն» առարկան, մեթոդը և խնդիրները:

Թեմա-2 Ջրային ռեսուրսները, նրանց աշխարհագրական բաշխման առանձնահատկությունները:

Թեմա-3 Ջրային ռեսուրսների պահպանությունը:

Ընտրովի առարկա - 4

ա. **S/բ - 0526 « Տարածաշրջանների և պետ. աշխարհագրություն » (3 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

8 կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

«Տարածաշրջանների և պետությունների աշխարհագրություն» դասընթացի նպատակն է ապագա աշխարհագետ մասնագետներին ծանոթացնել աշխարհի տարածաշրջանների և պետությունների զարգացման բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալներին, բնակչության կազմին, կառուցվածքին, տնտեսության ճյուղային կառուցվածքին և տեղաբաշխման օրինաչափություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

- կարողանա ինքնուրույն եզրահանգումների միջոցով որոշի տարածաշրջանների տեղն ու դերը համաշխարհային տնտեսական և քաղաքական կյանքում
- կտիրապետի աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա-1 Եվրոպայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-2 Եվրոպայի քաղաքական քարտեզը և կրած փոփոխությունները: Թեմա-3 Եվրոպայի տարածաշրջանները: Թեմա-4 Միջին Եվրոպայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-5 Հյուսիսային Եվրոպայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-6 Հարավային

Եվրոպայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-7 Արևելյան Եվրոպայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-8 ԱՊՀ կազմավորումը: Թեմա-9 Ասիայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-10 Ասիայի քաղաքական քարտեզը: Թեմա-11 Ասիայի տարածաշրջանները: Թեմա-12 Հարավարևմտյան Ասիայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-13 Հարավային Ասիայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-14 Հարավարևելյան Ասիայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-15 Կենտրոնական և Արևելյան Ասիայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-16 Ամերիկա աշխարհամասի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը: Թեմա-17 Ամերիկա աշխարհամասի քաղաքական քարտեզի ձևավորումը: Թեմա-18 Ամերիկա աշխարհամասի տարածաշրջանները: Հյուսիսային Ամերիկա: Թեմա-19 Լատինական Ամերիկայի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը: Թեմա-20 Կենտրոնական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների բնութագիրը: Թեմա-21 Աֆրիկայի ընդհանուր բնութագիրը: Թեմա-22 Հյուսիսային և Արևմտյան Աֆրիկայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-23 Արևելյան, Կենտրոնական և Հարավային Աֆրիկայի սոցիալ-տնտեսական բնութագիրը: Թեմա-24 Ավստրալիա և Օվկանիա տարածաշրջանի ընդհանուր բնութագիրը:

ԲԱ/բ0967 Կիրառական ֆիզիկական աշխարհագրություն (3 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ, 24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական,) 8-րդ` կիսամյակ,ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով Երկրի ֆիզիկաաշխարհագրական երևույթների մասին, խորացնել և ընդլայնել ուսանողների գիտելիքները մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի, կենսոլորտի մասին,գաղափար տալ Երկրի լանդշաֆտային թաղանթի ձևավորման հիմնական տարրերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.Պետք է գիտենա աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող ֆիզիկաաշխարհագրական երևույթների մասին, աշխարհագրական թաղանթի միասնականության և այնտեղ տեղի ունեցող երևույթների փոդկապակցության մասին, երկրի ձևի, չափերի վերաբերյալ, երկիր ոլորտային կառուցվածքի, կկարողանա գործնականում ֆիզիկաաշխարհագրական երևույթները բնության մեջ պատկերացնել,դրանց առաջացման պատճառները իմանալ և ճիշտ գնահատել,

2.տիրապետի ֆիզիկական աշխարհագրության ժամանակակից և նորագույն ձեռքբերումներին, Ֆիզիկաաշխարհագրական երևույթների վերլուծությանը, երկրի ոլորտային կառուցվածքի փոխկապակցվածությունը,արտաքին և ներքին ուժերի կապն ու ազդեցությունը լանդշաֆտային թաղանթի ձևավորման գործում,երկրի մակերևույթի առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա1 Կիրառական ֆիզիկական աշխարհագրություն առարկան, նրա բովանդակությունը, նշանակությունը և խնդիրները:

Թեմա2 Երկրի ձևի, չափերի և օրական պտույտի` աշխարհագրական նշանակությունը:

Երկրի մակերևույթի կառուցվածքի հիմնական գծերը

Թեմա3 Մթնոլորտի բաղադրությունն ու կազմը: Մթնոլորտի խոնավության ռեժիմն ու բաշխումը երկրի լանդշաֆտային թաղանթում:
 Թեմա4 Երկրի ջերմային ռեժիմը:/ Արեգակ: Արեգակնային ռադիացիայի տատանումները:
 Թեմա5 Ծովային հոսանքները իբրև կլիմայական գործոն հոսանքները:
 Թեմա6 Կլիման և նրա որոշ էլեմենտները: Կլիմայի տատանումները և փոփոխությունները/:
 Թեմա7 Հողմահարություն: Ֆիզիկական հողմահարությունը: Քիմիական հողմահարությունը: Հողմահարության արագությունը: Հողմահարման դերը: Աշխարհագրական օրինաչափությունները և դերը հողմահարման պրոցեսում/:
 Թեմա 8 Քամու դերը լանդշաֆտային թաղանթի ձևավորման մեջ:
 Թեմա 9 Ջրոլորտի դերը երկրի լանդշաֆտային թաղանթում :
 Թեմա12 Երկրի ընդերքը: Երկրագնդի ներքին մասերի ջերմային վիճակը: Երկրի ներքին էներգիայի ազդեցությունը լանդշաֆտային թաղանթի ձևավորման վրանելիեֆը որպես կլիմայացնող գործոն /: Ռելիեֆը և ջերմային պայմանները: Ռելիեֆը և օդի շարժումները: Ռելիեֆը և մթնոլորտային խոնավությունը: Կլիմայական ուղղաձիգ գոտիները/:
 Թեմա14 Ընդհանուր հասկաստողություն երկրի ընդհանուր դերի մասին:Բույսերը և աշխարհագրական միջավայրը:Կենդանիները և աշխարհագրական միջավայրը: Մարդը և և աշխարհագրական միջավայրը: Երկրի լանդշաֆտային թաղանթի զարգացումը: Երկրի աշխարհագրական ընդհանուր օրինաչափությունները: Աշխարհագրական լանդշաֆտ:

Ընտրովի առարկա - 5

ա. Տ/բ - 0531«Էթնոաշխարհագրություն և կրոնների աշխարհագրություն» (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)
 8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապագա աշխարհագետ մասնագետներին ծանոթացնել ռասաների, ազգությունների և ազգերի, խոսակցական լեզուների, ինչպես նաև համաաշխարհային և ազգային կրոնների ձևավորման նախադրյալներին, առանձնահատկություններին, տարածման օրինաչափություններին:

Կրթական արդյունքները.

- Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
 - կկարողանա տալ տարբեր էթնոսների, ռասաների, կրոնների բնութագրությունները.
 - կտիրապետի աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա-1 Էթնոաշխարհագրություն առարկան, նպատակը, խնդիրները: էթնոս հասկացությունը: էթնոսների ձևավորման նախադրյալները: Թեմա-2 Աշխարհի ժողովուրդները և երկրագնդի վրա նրանց տեղաբաշխման առանձնահատկությունները: Լեզվի դերը ազգի պահպանման գործում: Թեմա-3 Ռասաներ, ծագումը, աշխարհագրական տարածումը: Թեմա-4 Կրոնների աշխարհագրություն. կրոնի ծնունդը: Թեմա-5 Նախնադարյան հավատալիքները:Թեմա-6 Համաաշխարհային կրոններ: Ազգային կրոններ: Թեմա-7 Հայ հեթանոսական դիցարան: Հայ Առաքելական եկեղեցի:

բ. **ՔԱ/բ0968 Բնական աղետներ և պաշտպանության միջոցներ (3 կրեդիտ)**
Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն և
24 ժամ գործնական պարապմունք),
7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող տարբեր տիպի աղետներին, դրանց առաջացման մեխանիզմին, կանխատեսման և պաշտպանության միջոցառումներին հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. գաղափար կկազմի տարբեր ծագման բնական աղետների մասին,
2. կիմանա դրանց առաջացման մեխանիզմը,
3. կկարողանա գաղափար կազմել աղետների դեմ կատարվող պայքարի միջոցառումների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1` Աղետների դասակարգումը, ուսումնասիրման ուղղությունները և մեթոդները, կանխատեսումը և քարտեզագրումը: Թեմա 2` Երկրի ներքին ուժերի ներգործությամբ առաջացած աղետներ: Երկրաշարժեր: Հրաբուխներ: Ծագման մեխանիզմը և պաշտպանական միջոցառումները: Թեմա 3` Երկրի արտաքին ուժերի ազդեցությամբ առաջացած աղետներ: Լեռնալանջերի անկայունությամբ, գրունտների նստեցմամբ առաջացած աղետներ: Թեմա 4` Ձնահյուսերի, բազմամյա սառածության, սառցադաշտերի արագ տեղատարման հետ կապված աղետներ: Ջրի ներգործությամբ առաջացած աղետներ: Թեմա 5` Մթնոլորտային երևույթների հետ կապված աղետներ: Թեմա 6` Տիեզերական երևույթների հետ կապված աղետներ: Ենթարկվող համամոլորակային աղետների կանխատեսում: Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընտրովի առարկա - 6

Տ/բ-0524 «ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման միտումները հարևան երկրների հետ» (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)
5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացում լուսաբանվում են արտաքին տնտեսական կապերի հիմնական ձևերը: Վերլուծվում են ՀՀ-ի արտաքին տնտեսական կապերը խորհրդային ժամանակահատվածում: Առանձնակի ուշադրություն է դարձվում ՀՀ-ի արդի տնտեսական կապերի զարգացման միտումներին, գերտերությունների ազդեցությանը երկրի արտաքին քաղաքականության վրա: Քննարկվում են ՀՀ-ի տնտեսության վրա տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների ազդեցությունը՝ ԱՊՀ, ՍԾՏՀ, ԵՏՀ: Վերլուծվում են ՀՀ-ի հարևան երկրների տնտեսությունները հանրապետության հետ արտաքին կապերի զարգացման տեսանկյունից:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

կկարողանա հեշտությամբ յուրացնել տնտեսաշխարհագրական ճյուղին պատկանող մյուս առարկաները, որոնք ուսումնասիրվում են բարձր կուրսերում:

- Տարածաշրջանների բնական ներուժի իմացության միջոցով կկարողանան համապատասխան տնտեսության ճյուղեր զարգացնել
- հանձնարարված գրականության հիման վրա կկարողանան կազմել ռեֆերատներ

Բովանդակությունը.

Թեմա 1 ՀՀ տնտեսության ընդհանուր բնութագիրը: ՀՀ տնտեսական ընդհանուր քաղաքականությունը:

Թեմա 2 Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը:

Թեմա 3 Հայաստանի Հանրապետության անդամակցությունը, ԱՊՀ-ին, ՍԾՏՀ-ին:

Թեմա 4 ՀՀ հարևան երկրների տնտեսական բնութագիրը և նրանց տնտեսական դերակատարությունը տարածաշրջանում:

Թեմա 5 Հայաստան-Արևմուտք-հարևան երկրներ տնտեսական շահերի եռանկյունին:

Թեմա 6 Ռուսաստանի տնտեսական շահերը Հայաստանում և հարևան երկրներում:

Թեմա 7 Տարածաշրջանը և Եվրամիության նոր հարևաններ ծրագիրը:

ԲԱ/բ 0910 Հնէաշխարհագրություն (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ, (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական,) 5-րդ՝ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով հնէաշխարհագրական գիտելիքներով, որի հիմքում ընկած է Երկրի անցած երկրաբանական էպոխաների ֆիզիկաաշխարհագրական պայմանների բնութագիրը, ժամանակակից աշխարհագրական թաղանթի և լանդշաֆտների զարգացման պատմությունը, նրանց զարգացման օրինաչափությունները: Երկրի ֆիզիկաաշխարհագրական երևույթների մասին, խորացնել և ընդլայնել ուսանողների գիտելիքները մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի, կենսոլորտի մասին, գաղափար տալ Երկրի լանդշաֆտային թաղանթի ձևավորման հիմնական տարրերի մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1.Պետք է գիտենա աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող Երկրի անցած երկրաբանական էպոխաների ֆիզիկաաշխարհագրական պայմանների մասին , աշխարհագրական թաղանթի միասնականության և այնտեղ տեղի ունեցող երևույթների փողկապակցության մասին
- 2.տիրապետի հնէաշխարհագրության ժամանակակից և նորագույն ձեռքբերումներին, ֆիզիկաաշխարհագրական երևույթների վերլուծությանը, Երկրի ոլորտային կառուցվածքի փոխկապակցվածությունը,արտաքին և ներքին ուժերի կապն ու ազդեցությունը լանդշաֆտային թաղանթի ձևավորման գործում,երկրի մակերևույթի առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

1. Հնէաշխարհագրության ուսումնասիրությունների բնագավառը, խնդիրները և կապն այլ գիտությունների հետԵրկրի պատմության ուսումնասիրության մեթոդները
- 2.Ժամանակակից Երկիր մոլորակը
3. Երկրի ծագման հիպոթեզները
4. Երկրի հասակը
5. Երկրի ռելիեֆի հիմնական ձևերը
- 6.Երկրի ներքին կառուցվածքը
- 7.Երկրի քիմիական կազմը

- րի և օվկիանոսային իջվածքների առաջացումը
8. Երկրի մակերևույթը և գետսինիկլինալները
 9. Ռադիոակտիվ պրոցեսները և նրանց էներգետիկ նշանակությունը:
 10. Նստվածքակուտակման պրոցեսներ զարգացումը
 11. Հողմահարման կեղևի զարգացումը
 12. Հիդրոսֆերայի (ջրոլորտի) զարգացումը: Ժամանակակից հիդրոսֆերան: Ջրոլորտի առաջացումը: Ջրավազանների մակարդակների տատանումները և հին ավազոժերը: Ջրավազանների 3 տեսակները
 13. Երկրի ժամանակակից մթնոլորտը: Երկրագնդի կլիմաների փոփոխությունները Երկրի մթնոլորտի ծագումը: Երկրի և այլ մոլորակների մթնոլորտների համեմատությունը: Մոլորակների մթնոլորտը ձևավորող գործոնները: Մթնոլորտի կազմը և կլիման
 14. Հնէնագնիսականություն
 15. Կենդանի նյութի ծագումը կենսոլորտում: Կյանքի ծագման վայրը Երկրի վրա
 16. Երկրի մակերևույթի բնության զարգացումը չորրորդական ժամանակաշրջանում

Ընտրովի առարկա - 7

ա. **ԲԱ/բ0969 ՀՀ Ռեկրեացիոն աշխարհագրություն (4 կրեդիտ)** առարկայի դասընթացի Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)
8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացը նպատակ է հետապնդում բացահայտել ՀՀ բնական և հասարակական ռեկրեացիայի ռեսուրսները, ցույց տալ դրանց տեղաբաշխումը, պարզաբանել դրանց որակական հատկանիշները: Դասավանդման մեթոդները, թույլ կտան դասակարգել այդ ռեսուրսները, վեր հանել արդյունավետության որակներն ու դրանց օգատագործման ժամկետները և չափը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կինմանա ՀՀ տնտեսության երրորդային սեկտորի զարգացման առաջնահերթ անիր աժեշտությունը,
2. տնտեսության կառուցվածքում ՀՀ ռեկրեացիոն աշխարհագրության դերն ու նշանակությունը,
3. կկարողանա հիմնավորել ՀՀ հանգստի սերվիսի տարածքային կազմակերպման հնարավորությունները
4. Կկարողանա կազմել ՀՀ տարածքի սերվիս քարտեզներ և ծրագրեր

Բովանդակությունը

ԹԵՄԱ 1 Ռեկրացիոն ռեսուրսներ, Ռեկրեացիոն ռեսուրս հասակացություն, ՀՀ Ռեկրեացիոն ռեսուրսների դասակարգումը, ՀՀ Ռեկրեացիոն ռեսուրսների տեղաբաշխումը

ԹԵՄԱ 2 ՀՀ զբոսաշրջային բնական ռեսուրսներ, Ձբոսաշրջային ռեսուրսների տեսակները, Բնական զբոսաշրջային ռեսուրսներ, Ձբոսաշրջային ռեսուրսների հաշվառում և գնահատում: **ԹԵՄԱ 3 ՀՀ հասարակական զբոսաշրջային ռեսուրսներ,** Պատմամշակութային ռեսուրսներ, Ագրոտուրիզմի ռեսուրսներ, Արտադրական տուրիզմի ռեսուրսներ: **ԹԵՄԱ 4 ՀՀ հանգստի ռեսուրսներ,** Հանգստի ռեսուրսների դասակարգում,

Հանգստի ռեսուրսները Հայաստանում, Հանգստի կազմակերպում բնական օբյեկտներում, **ԹԵՄԱ 5 ՀՀ ուժերի վերականգնման ռեսուրսներ**, Բնական վերականգնող ռեսուրսներ, Հանգստի կազմակերպման ձևեր, Կլիման, որպես ռեկրացիայի ռեսուրս, Վերականգնողական ռեսուրսների հաշվառում, **ԹԵՄԱ 6 ՀՀ բուժիչ և առողջության պահպանության ռեսուրսներ**, Ռեսուրսների հաշվառում, Բուժական ռեսուրսներ, Բուժիչ հանքային ջրեր, Առողջարաններ, դրանց տեղաբաշխումը , **ԹԵՄԱ 7 ՀՀ որսի, հատապտղային տուրիզմի և այլ ռեսուրսներ**, Որսավայրեր, դրանց կանոնակարգը և օգտագործման հնարավորությունները, Հատապտղային տուրիզմ, դրանց տարատեսակները, Որսի, հատապտղային տուրիզմի տեղաբաշխումը ՀՀ-ում: **ԹԵՄԱ 8. ՀՀ զբոսաշրջության երթուղիներ, հյուրանոցային տնտեսություն և քենպինգներ:** Զբոսաշրջության երթուղիների մշակման սկզբունքները, Հյուրանոցներ, դրանց զբոսաշրջային նշանակությունը, Քենպինգները և երթուղիների ընտրությունը, Զբոսաշրջության երթուղիների մշակում ՀՀ տարածքում:

ԲԱ/Բ0970 Լանդշաֆտային էկոլոգիա (4կրեդիտ) առարկայի դասընթացի Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական) 8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասանընթացի նպատակն` է բացահայտել լանդշաֆտների էկոլոգիական ուսումնասիրությունների վերջնական արդյունքները: Լանդշաֆտային էկոլոգիան հանդես է գալիս, որպես միջոց տարածքների գնահատման ու պահպանության համար, որի արդյունքում որոշվում է ցանկացած բնատարածքային համալիրի նպատակային օգտագործումը: Այն կարևորվում է հատկապես ռեսուրսների պահպանության տեսակետից, գնահատելով և ցույց տալով այն բաղադրիչները, որոնք կարևոր նշանակություն ունեն լանդշաֆտների պահպանության ու արդյունավետ օգտագործման համար:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

7. կկարողանա կազմակերպել ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործում,
8. կորոշի դրանց նպատակային օգտագործման ուղիները,
9. կգտնի ռեսուրսների օգտագործման հիմնական նպատակները,
10. կմասնակցի լանդշաֆտների պահպանության ծրագրերի կազմման աշխատանքներին,
11. կգտնի ծառացած խնդիրների լուծման համար արդյունավետ ուղիներ,
12. կկանխատեսի սեփական որոշումների հետևանքները:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1 Ներածություն, Լանդշաֆտային էկոլոգիա դասընթացի բովանդակությունը, ԼԷ խնդիրները և մեթոդները, ԼԷ –ի միջազգային փորձը, **ԹԵՄԱ 2 ԼԷ–բնապահպանական նշանակությունը**, Շրջակա միջավայրի պահպանությունը, նշանակությունը և արդյունավետությունը, լանդշաֆտային էկոլոգիայի տարածաշրջանային քաղաքականությունը և ծրագրերը, **ԹԵՄԱ 3 ԼԷ անհրաժեշտությունը ռեսուրսների պահանջության համար**, ԼԷ կրողներ, հասցեատերեր, պատասխանատուներ, ԼԷ- ն և նրա կառավարումը, ԼԷ-ն, որպես ռեգիոնալ կայուն զարգացման նախադրյալ, **ԹԵՄԱ 4 ԼԷ միջազգային փորձը օրնակելի պրակտիկա**, Գերմանական կոնցեպցիան և փորձը, ԼԷ

կազմակերպման տնտեսական նշանակությունը, Միջազգային փորձի կիրառությունը ՀՀ տարածքում, **ԹԵՄԱ 5 Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրականացման հիմքերը**, Լէ իրավական հիմքերը, Լէ համակարգումը, հաջողություններ, որակ, Լէ համակարգի ձևավորման խնդիրները, Լէ համակարգը սերվիսի նախադրյալ, **ԹԵՄԱ 6 Լէ մեթոդական երաշխավորությունները**, Աշխարհագրական դիրք, Երկրաբանական և կլիմայական պայմաններ, Բնական ներուժ, օգտակար հանածոներ, Հողային և ջրային ռեսուրսներ, Էկոլոգիական և աշխարհագրական պայմաններ, **ԹԵՄԱ 7 Լէ ծրագիր**, Լանդշաֆտային բաղադրիչների հաշվառում, Լանդշաֆտային բաղադրիչների գնահատում, Լանդշաֆտային բաղադրիչների նպատակային օգտագործման կարգավիճակների որոշում, **ԹԵՄԱ 8. Լէ սխեմատիկ պլաններ**, Խոշոր և միջին մասշտաբի պլաններ, ԲՏՀ – ների էկոլոգիական վիճակի գնահատման քարտեզներ, ԲՏՀ – ների նպատակային կարգավիճակների որոշում և քարտեզագրում, **ԹԵՄԱ 9. Լէ որպես ճյուղային խնդիրների լուծման միջոց**, Տարածքի ռեգիոնալ առանձնահատկությունները, միկրո և մակրո աշխարհագրական դիրքերի վերլուծությունը, Հողօգտագործման և ջրօգտագործման հիմնախնդիրները, Լէ -իայի իրագործման մոնիթորինգ, Լէ կառավարման իրագործման ուղիները:

IV Հատուկ մասնագիտական դասընթացներ

ԲԱ/բ 0922 «Գեոէկոլոգիա » (4 կրեդիտ)

Շաբաթական 3.5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)
5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Գեոէկոլոգիա դասընթացի նպատակն է՝ տալ գիտելիքներ աշխարհագրության, բնական ռեսուրսների, դրանց արդյունավետ օգտագործման, պահպանության ու երկրաբանապահպանության մասին: Պարզաբանել բնական ռեսուրսների առանձնահատկությունները, ցույց է տալիս դրանց առաջացման ու զարգացման պայմանները: Վեր է հանել Լանդշաֆտային բաղադրիչների բնապահպանական հիմնախնդիրները, ցույց է տալ դրանց լուծման ուղիները:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կարողանա բնութագրել երկրի աշխարհագրական թաղանթը,
2. կարողանա բնութագրել երկրաբանապահպանություն և բարելավում հասկացողությունները,
3. կարողանա պարզաբանել ֆիզիկաաշխարհագրական երևույթները,
4. ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
5. որոշ գիտական հարցերի վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ,
6. հանձնարարված գրականության հիման վրա կազմել ռեֆերատներ:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Գեոէկոլոգիայի բովանդակությունը, ձևավորմանը նպաստող հիմնական գործոննորը: Գեոէկոլոգիայի ուսումնասիրության օբյեկտը:

ԹԵՄԱ 2. Հասկացողություն կենսահամակարգի , պոպուլյացիայի, բիոցենոզի, բիոգեոցենոզի (երկրակենսահամակեցություն), էկոհամակարգի, էկոլորտի, կենսոլորտի, բիոտոպի, բիոմի և լանդշաֆտի մասին: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ:

ԹԵՄԱ 3. ԷԿՈԼՈՐՏԻ ԲՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ :

Գեոսֆերան և էկոլորտը: Երկիր մոլորակը և գեոէկոլոգիական հետևանքները:

Էկոլորտի սահմանները և տարածքային կառուցվածքը: Էկոլորտի էներգետիկական և նյութական առանձնահատկությունները: Էկոլորտի ջերմային հաշվեկշիռը: Նյութերի համընդհանուր շրջապտույտը: Ածխածնի ազոտի, ֆոսֆորի և ծծմբի համընդհանուր շրջապտույտը:

ԹԵՄԱ 4: ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԳԵՈԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ <<ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ>>:

Բնական ռեսուրսների տեսակները: Բնական ռեսուրսների դասակարգումը: Սպառվող և չսպառվող ռեսուրսներ: Բնական ռեսուրսների օգտագործման տեմպերի ավելացումը և սահմանափակվածությունը: Բնական ռեսուրսների խելամիտ օգտագործումը որպես բնության պահպանության կարևոր միջոցառում: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության ինքնավերականգնման հիմնախնդիրները: Բնօգտագործման էկոլոգիացումը և էկոհամակարգի հավասարակշռության պահպանման հիմնախնդիրները:

ԹԵՄԱ 5: ՄԹՆՈԼՈՐՏ:ՄԱՐԴՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԹՆՈԼՈՐՏԻ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՎՐԱ:

ԲԱ/բ0971

Ֆիզիկական աշխարհագրության հետազոտման մեթոդներ (4կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն և 24 ժամ գործնական պարապմունք), 8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման ընթացքում նախապատրաստել ուսանողներին համալիրային ֆիզիկաաշխարհագրական հետազոտություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ինքնուրույն կատարել համալիրային բնական գեոհամակարգերի ուսումնասիրություն և լանդշաֆտային քարտեզահանում,
2. կկարողանա գնահատել բնական և անթրոպոգեն համալիրների էկոլոգիական վիճակը և փորձել տալ առաջարկություններ նրանց օպտիմալացման և այլ կարգի օգտագործման համար:

Բովանդակությունը.

Թեմա 1` Ժամանակակից ֆիզիկական աշխարհագրության ուսումնասիրության խնդիրները, գիտական ճանաչման փուլերը և մեթոդները: Թեմա 2` Ֆիզիկական աշխարհագրության համալիր ուսումնասիրության առարկան: Նախապատրաստական փուլ, դաշտային փուլ, հետդաշտային /կամերալ/ փուլ: Թեմա 3` Կիրառական համալիր ֆիզիկաաշխարհագրական ուսումնասիրության մեթոդներ:

S/բ-1301 **Սոցիալ-տնտեսական աշխարհագրության հետազոտման մեթոդներ (4 կրեդիտ)**

Շաբաթական 5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական պարապմունք)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի ուսումնասիրման ընթացքում ուսանողները համակարգված գիտելիքներ են ստանում սոցիալ-տնտեսական աշխարհագրական հետազոտությունների կազմակերպման սկզբունքների և մեթոդաբանական հիմքի մասին: Դասըն-թացի նպատակն է օգնել ուսանողներին պատրաստվելու ինքնուրույն, համալիրային, դաշտային հասարակական աշխարհագրական հետազոտությունների:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը՝

Պետք է կարողանա կատարել ինքնուրույն համալիրային դաշտային սոցիալ-տնտեսական աշխարհագրական հետազոտություններ

Տիրապետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության տարածական համակարգերի և դրանց բաղադրիչների աշխարհագրական հետազոտության մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության հետազոտությունների մեթոդոլոգիական հիմքը և գիտական իմացության սկզբունքները: Թեմա 2. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության հետազոտությունների ձևերը և կազմակերպման փուլերը: Թեմա 3. Սոցիալ-տնտեսական աշխարհագրական համակարգերը որպես աշխարհագրական հետազոտության հիմնական օբյեկտներ: Թեմա 4. Սոցիալ-տնտեսական աշխարհագրական համակարգերի ձևավորման և զարգացման գործոնների ու պայմանների (ՏԱԴ, բնական պայմաններ և գործոններ, բնակչություն և բնակավայրեր) աշխարհագրական հետազոտությունների մեթոդական: Թեմա 5. Սոցիալ-տնտեսական աշխարհագրական համակարգերի կառուցվածքային բաղադրիչների (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, սպասարկման ոլորտ) աշխարհագրական հետազոտության մեթոդական:

S/բ-0547 Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա (4 կրեդիտ)

Շաբաթական 3.5 ժամ (32 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին իրագեկել աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի հիմնական խնդիրներին, ավանդական և ժամանակակից մեթոդներին, դասավանդման գործընթացի հիմնական տարրերի, դպրոցական աշխարհագրության համակարգի փոփոխությունների փոփոխությունների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի տեսական նյութը դպրոցում ճիշտ կիրառել
2. կկարողանա աշխարհագրության ավանդական և ժամանակակից մեթոդները ու հնարները ճիշտ կիրառել
3. կկարողանա ուսուցման տեղնուլոգիական միջոցներին տիրապետել, ինչպես նաև կիրառել ծրագրավորման տարրերն աշխարհագրության դասավանդման գործընթացում

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1 Աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի զարգացման փուլերը:

ԹԵՄԱ 2 Դպրոցական աշխարհագրության դասընթացի բովանդակությունը:

ԹԵՄԱ 3 Դպրոցական աշխարհագրության համակարգը:

ԹԵՄԱ 4 Աշխարհագրության դասավանդման գործընթացի ազդեցությունը աշակերտների ճանաչողական գործունեության վրա:

ԹԵՄԱ 5 Աշխարհագրության ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը :

ԹԵՄԱ 6 Աշխարհագրության դասավանդման մեթոդները:

ԹԵՄԱ 7 Ուսուցման ծրագրավորման տարրերն աշխարհագրության դասավանդման մեթոդիկայում :

ԹԵՄԱ 8 Ուսումնական աշխատանքների պլանավորումն և աշխարհագրության դասի

կազմակերպումը:

ԹԵՄԱ 9 Աշակերտների աշխարհագրական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, հաշվառման, վերահսկման, գնահատման ձևերն ու մեթոդները:

ԹԵՄԱ 10 Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը:

V. Այլ բաղադրիչներ

I. Կուրսային աշխատանք (3+3=6 կրեդիտ), 6-րդ, 7-րդ կիսամյակներ

ա) 6-րդ կիսամյակում կուրսային աշխատանք է կատարվում ,Տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն, Հայաստանի տնտեսական և սոցիալական աշխարհագրություն առարկաներից՝ ուսանողի ընտրությամբ:

բ) 7-րդ կիսամյակում կուրսային աշխատանք է կատարվում առարկայից՝ ուսանողի ընտրությամբ:

II. Ուսումնական պրակտիկա (6 կրեդիտ), 2-րդ և 4-րդ կիսամյակներ, իրականացվում է ջրաբանություն և երկրաբանություն առարկաներից դաշտային հետզառությունների միջոցով:

III. Արտադրական (մանկավարժական) պրակտիկա (6 կրեդիտ), 7-րդ կիսամյակ

Նպատակը.

1. Աշխարհագրության ապագա ուսուցչին ծանոթացնել ՀՀ հանրակրթության բարեփոխումներին, դպրոցի կրթական և դաստիարակչական ողջ համակարգին, նրա կառուցվածքին,

2. բուհական տվյալ դասընթացի սահմաններում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորում,

3. ուսանողների ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,

4. գործնականում ուսանողների կողմից դասագրքերի, ծրագրերի և ուսումնաօժանդակ նյութերի ստեղծագործաբար օգտագործելու ունակության ապահովում:

Խնդիրները.

1. Ուսանողներին սովորեցնել ճիշտ կողմնորոշվել տվյալ դասընթացի ուսուցման մեթոդաբանության մեջ

2. զարգացնել ուսանողների ինքնուրույն մտածելու, ստեղծագործական ունակությունները

3. ուսանողներին հաղորդակից դարձնել ուսուցման ժամանակակից մեթոդներին, զարգացնել դրանք ավանդական մեթոդների հետ հմտորեն համակցելու ունակություն:

Չափորոշիչ.

Աշխարհագրության դասերի ունկնդրում: Ուսումնական ծրագրերի և թեմատիկ պլանի հետ ծանոթություն: Ինքնուրույն դասերի անցկացում տարբեր դասարաններում: Օրագրի կազմում: Դպրոցում հանդեսի, ցերեկույթի կազմակերպում: Ուսանող պրակտիկանտը պետք է ներկայացնի համապատասխան դասարանում իր կողմից պարապմոլ դասերի գրաֆիկը, յուրաքանչյուր դասի համար կազմի դասի ծրագիր – նկարագիրը՝ կարևորելով տվյալ դասի դաստիարակչական դերը, կարողանա լրացնել աշխատանքային մատյանը և օրագիրը:

Բովանդակությունը.

Առաջին շաբաթվա ընթացքում պրակտիկան ղեկավարող մեթոդիստ դասախոսի ուղեկցությամբ այցելություն դպրոց. ծանոթություն դպրոցի ուսումնական և դաստիարակչական ողջ գործընթացին, դպրոցի կառավարման համակարգին, ուսումնական և ղեկավարման առանձին օղակներին, դասղեկական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքային պլաններին և ծրագրերին. ծանոթություն դասարաններին, աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին, նրանց անհատական ընդունակություններին և կարողություններին, աշակերտների նախասիրություններին: Կազմակերպել դասալսույուններ, քննարկումներ ուսուցչի և մեթոդիստ դասախոսի մասնակցությամբ: Մեթոդիստ - դասախոսի և ուսուցչի հետ համատեղ կազմել պրակտիկայի ծրագիր պլան և յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը հաստատել արձանագրությամբ: Ուսանող պրակտիկանտի կողմից յուրաքանչյուր դաս քննարկվում է, նշվում են դրական կողմերը, նկատված թերությունները: Քննարկմանը մասնակցում են մեթոդիստ - դասախոսը, ուսուցիչը, մանկավարժը և հոգեբանը: Ուսանող պրակտիկանտը պարտավոր է ունենալ դասերից դուրս արտադասարանային միջոցառումների անցկացման անհատական պլան - գրաֆիկ:

3. Ավարտական որակավորման քննություններ (3 + 3=6 կրեդիտ), 8-րդ կիսամյակ